

ISSN 2738-277X

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԳՈՍՅԻՆ ԱԿԱԳԵՄԻԱ  
Հ. ԱՃԱՌՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԼԵԳՎԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

**Զ Ա Հ ՈՒ Կ Յ Ա Ն Ա Կ Ա Ն  
Ը Ն Թ Ե Ր Ց ՈՒ Մ Ն Ե Ր**

**JAHUKYAN READINGS  
ДЖАУКЯНОВСКИЕ ЧТЕНИЯ**

**1 [21]**

**ԵՐԵՎԱՆ 2024**



NATIONAL ACADEMY OF SCIENCES  
OF REPUBLIC OF ARMENIA  
INSTITUTE OF LANGUAGE AFTER H. ACHARYAN

**JAHIKYAN READINGS**

1 (21)

НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ НАУК  
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ  
ИНСТИТУТ ЯЗЫКА ИМЕНИ Р. АЧАРЯНА

**ДЖАУКЯНОВСКИЕ ЧТЕНИЯ**

1 (21)

Yerevan 2024  
Ереван 2024

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ  
ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ  
Հ. ԱՃԱՌՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԼԵԶՎԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՋԱՀՈՒԿՅԱՆԱԿԱՆ  
ԸՆԹԵՐՑՈՒՄՆԵՐ

1 (21)

ԵՐԵՎԱՆ  
ՀՀ ԳԱԱ ԼԻ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ  
2024

Գլխավոր խմբագիր՝ Վ.Լ. Կատվալյան  
Պատասխանատու քարտուղար՝ Ն.Գ. Հովհաննիսյան

Խմբագրական խորհուրդ

Ա.Վ. Գալստյան, Գ.Կ. Խաչատրյան, Վ.Գ. Համբարձումյան, Լ.Շ. Հովհաննիսյան, Հ.Հ. Մեսրոպյան, Գ.Ս. Մխիթարյան, Ն.Ս. Միմոնյան, Դոնապետյան Անահիտ (Ֆրանսիա), Դում-Թրագուտ Յասմին (Ավստրիա), Վլ. Պլունգյան (Ռուսաստան), Սկալա Անդրեա (Իտալիա), Պ.Ա. Քոչարով (Ռուսաստան)

Editor-in-chief - V.L. Katvalyan

Executive secretary - N.G. Hovhannisyan

Editorial Board

A.V.Galstyan, G.K. Khachatryan, V.G.Hambardzumyan, L.Sh. Hovhannisyan, H.H. Mesropyan, G.M. Mkhitaryan, N.M. Simonyan, Donabedian-Demopoulos Anaïd (France), Dum-Tragut Jasmine (Austria), Petr A. Kocharov (Russia), Plungian Vladimir (Russia), Scala Andrea (Italy)

Главный редактор - В.Л. Катвалян

Ответственный секретарь - Н.Г. Оганесян

Редакционная коллегия

А.В. Галстян, Г.К. Хачатрян, В.Г. Амбарцумян, Л.Ш. Оганесян, А.А. Месропьян, Г.М. Мхитарян, Н.М. Симонян, Донабедян-Демопулос Анаид (Франция), Дум- Трагут Ясмин (Австрия), Кочаров Петр Александрович (Россия), Плунгян Владимир (Россия), Скалла Андреа (Италия)

10.54503/2738-277X

## ՀՈՐՎԱԾՆԵՐ

«ԹԱՔՈՒՆ, ՔՈՂԱՐԿՎԱԾ» ՀԱՍԿԱՑՈՒԹՅԱՆ ԲԱՅԱՆՎԱՆԱԿԱՆ  
ԵՎ ԳՈՑԱԿԱՆԱԿԱՆ ԴՐՄԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ ՎԱՂՆՁԱՀԱՅՅԵՐԵՆԻՑ  
ԵԿՈՂ ՄԻ ԱՐՄԱՏԻ ՀԱՅ-ԻՐԱՆԱԿԱՆ ՍՏՈՒԳԱԲԱՆԱԿԱՆ  
ՔՆՆՈՒԹՅԱՆ ԼՈՒՑՄԻ ՆԵՐՔՈՒ\*

DOI: 10.54503/2738-277X.2024.1(21)-5

Դալայան Տորո

բանասիրական գիտությունների թեկնածու,  
ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ,  
ավագ գիտաշխատող. torqdal@yahoo.com

**Բանալի բառեր.** կուզ, դարանակալել, բայանուն, գրաբար,  
ալաներեն, հնգահատկանիշ դասակարգում:

### Ներածական

Սույն համառոտ հոդվածի նպատակն է համակողմանի  
պատմահամեմատական քննությամբ ստուգաբանել հայ. *կուզ*  
բառը, որը գրաբարում նշանակել է «կատու»: Ավանդաբար հա-  
մարվելով իրանական ծագման բառ՝ այն չի ենթարկվել առավել  
խորին բառաքննական հետազոտության, որի հետևանքով՝ մի  
կողմից՝ ստվերում են մնացել դրան առնչվող ցեղակից բառածներն  
ու արմատային հնարավոր տարբերակները, մյուս կողմից էլ՝ դրան  
վերաբերող լեզվաբանական որոշ տվյալներ մնացել են անհայտ:

\* Ներկայացվել է 02.06.2024, գրախոսվել՝ 26.06.2024:

Սույնով նպատակ ունենք գիտական շրջանառության մեջ դնելու այդ անհայտ տվյալները և նորովի հայացք նետելու արմատացած հին ստուգաբանությանը:

Իրականում, եղած ստուգաբանությունը չի հասնում մինչև հնդեվրոպական նախալեզու և դրանով իսկ բավական կադապարային է, քանի որ անգամ իրանական լեզվաբանության հողի վրա խնդրո առարկա արմատի իմաստաբանական ծագումը չի տրվում: Բազային թեմայի շրջանակում, որը վերաբերում է հայերենի և տարածաշրջանային լեզուների փոխառնչություններին, վերջին 5 տարիների ընթացքում փորձել ենք խոշորացույցի տակ դիտարկել նաև հայ-իրանական առնչությունները՝ ջանալով, ի տարբերություն նախորդ հետազոտողների, հայ-իրանական ընդհանրական բնորոշման ներսում առանձին քննել հայ-քրդական, հայ-օսական (կամ հայ-ալանական), հայ-պարթևական, հայ-մարական, հայ-պարսկական, հայ-թաթական, հայ-թալիշական առնչությունները<sup>1</sup>:

Կադապարային ենք անվանում հայերեն այն բառերի ստուգաբանությունները, որոնք ավանդույթի ուժով համարվում են իրանական կամ կովկասյան, սակայն բացի արտաքին նմանությունից և որոշակի մշակութաբանական համապատկերից՝ առավել հիմնավոր փաստեր չունենք այդ վարկածը հաստատելու համար: Հիմնավոր փաստեր ասելով՝ հասկանում ենք՝ իրանական փոխառության դեպքում, դիցուք, 1. տվյալ արմատի համաիրանյան բնույթը կամ գոնե իրանական լեզուների մեծ մասում վկայված

<sup>1</sup> Գ. Ջահուկյանն իր գրքի՝ հայերենի իրանական փոխառություններին վերաբերող գլխում նախնական ձևով ներկայացրել է հետևյալ ներածական բաժինները՝ «Հայերենը և սկյութերենը», «Հայերենը և մեդերենը (մարերենը)», «Հայերենը և հին պարսկերենը», «Հայերենը և միջին իրանական լեզուները» (տե՛ս Գ. Ջահուկյան, Հայոց լեզվի պատմություն: Նախագրային ժամանակաշրջան, Ե., 1987, էջ 501-508), սակայն իրանական փոխառությունների օրինակներն, ամեն դեպքում, ներկայացրել է ընդհանուր բառացանկով (տե՛ս նույն տեղում, էջ 508-556):

լինելը, 2. իրանական նախաձևի՝ նախարմատի վերականգնելիությունը և հետևաբար արմատի առկայությունը հին իրանական լեզուներում՝ ավեստերենում և սեպագրային պարսկերենում, 3. իրանական հողի վրա արմատի իմաստային բացատրելիությունը, 4. հնդիրանական զուգահեռների առկայությունը և վերջապես՝ 5. հնդեվրոպական հնարավոր նախաձևի գոյությունը, ընդ որում՝ այն պայմանով, որ հնչյունաբանական օրինաչափ զարգացումների պարագայում այդ նախաձևից առաջացած հայերեն ժառանգ-ձևը հնչյունապես չէր նույնանա իրանական ժառանգ-ձևին, իսկ նույնանալու դեպքում՝ ինչպես մի քանի օրինակներով ցույց է տվել Հ Աճառյանը, կրկին հնարավոր է ենթադրել երկու տարբերակ՝ հայերենի անմիջական փոխառություն իրանական ձևից կամ անկախ ծագում հնդեվրոպականից և պարզապես համընկնում իրանականի հետ (օրինակ՝ *մէգ* «մշուշ», *մէգ* «մեզ», *գան* «ծեծ», *արգ/յարգ* «արժեք, հարգանք» ևն)<sup>1</sup>:

Հայերենի իրանական փոխառություններին իրենց աշխատություններում անդրադարձել են Հ. Հյուբշմանը, Ա. Մեյեն, Հ. Աճառյանը, Է. Բենվենիստը, Հ. Բեյլին, Գ. Ջահուկյանը, Ա. Փերիխանյանը, Լ. Հովհաննիսյանը, Գ. Ասատրյանը, Յ. Գիպպերտը, Ռ. Մեյերը և այլք<sup>2</sup>: Բազային թեմայի շրջանակում փորձել ենք առանձ-

<sup>1</sup> Հմմտ. **Հ. Աճառյան**, *Հայկական*. Ե-Ը // Բազմավեպ, 1897, թիւ 6, էջ 260; **Հ. Աճառյան**, *Հայերեն արմատական բառարան*, հ.1, Ե., 1971, էջ 301-302, 514-515, հ. 3, Ե., 1977, էջ 311-312, տե՛ս նաև **Տ. Դալայյան**, *Հայ-օսական լեզվամշակութային առնչություններ* (բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսություն), Ե., 2002, էջ 193:

<sup>2</sup> Ոչ ամբողջական ցանկն է՝ **H. Hübschmann**, *Armenische Grammatik*, Leipzig, 1897, S. 9-17; **A. Meillet**, *Sur les mots iraniens empruntés par l'arménien*, MSL, 1917, N° 17, p. 242-250; **Հ. Աճառյան**, *Հայոց լեզվի պատմություն*, մաս I, Ե., 1940, էջ 218-323; **E. Benveniste**, *Etudes iraniennes*, III. Emprunts iraniens en arménien, TPhS, 1945, p. 68-



նացնել իրանական ծագման համարվող այն բառերը, որոնց ստուգաբանությունն ունի կայուն հիմք, և դրանում առկա են վերոնշյալ 5 հատկանիշներից գոնե 3-ը: Մյուս դեպքերում, երբ հայերեն տվյալ բառն ունի իրանական զուգահեռ, սակայն դրա պարագայում առկա չեն վերոնշյալ 5 հատկանիշները, հանգում ենք այն մտքին, որ դժվար է միանշանակորեն որոշել հայկական և իրանական այդ բառերի հարաբերակցությունը: Այս դեպքում հնարավոր են մի քանի տարբերակներ. այդ զուգաբանությունները կարող են բացատրվել՝ ա) երրորդ աղբյուրից անկախաբար փոխառված լինելով, բ) մշակութային առաջավորասիական ընդհանուր եզրույթներ լինելով (որոնց ծագումն անհայտ է), գ) ենթաշերտային բառեր<sup>3</sup>, դ) մանկական կամ տարրական ցեղակցության բառեր լինելով և այլն:

### Վաղ վկայություններ

Ոսկեդարյան շրջանում կատուն կոչվել է *կուզ*, իսկ *կատու* բառը հայերենում հայտնվել է ավելի ուշ և հատկապես տարածվել

---

78; **H. Bailey**, *Armeno-Indoiranica, Transactions of the Philological Society*, London, 1956, p. 88-126; **Գ. Ջահուկյան**, *Հայոց լեզվի պատմություն*: Նախագրային ծամանակաշրջան, Ե., 1987, էջ 488-584; **Լ. Հովհաննիսյան**, *Հայերենի իրանական փոխառությունները*, Ե., 1990; **Գ. Асатрян**, *Контакты армянского с новоиранскими языками*, Ер., 1991; **А. Перихаян**, *Материалы к этимологическому словарю древнеармянского языка*, Ер., 1993; **J. Gippert**, *Iranica-Armeno-Iberica*, vol. II, Vienna, 1993; **R. Meyer**, *Iranian-Armenian Language Contact in and before the 5th Century CE*, PhD Thesis, 2017:

<sup>3</sup> Այս կոնտեքստում *ենթաշերտ* ասելով հասկանում ենք ոչ թե դրա դասական նեղ և հնացած բնորոշումը, այլ տարածաշրջանային վաղնջական այն ընդհանրությունները, որոնք անկախ որևէ կոնկրետ լեզվաընտանիքի պատկանելությունից, ըստ մեր նախնական դիտարկումների, տեսանելի են «Հայկական լեռնաշխարհ-Իրանական սարահարթի հյուսիսային և կենտրոնական շրջաններ» միացյալ տարածաշրջանում, որը պայմանականորեն կոչում ենք «հայ-ատրպատականամարական կոնտակտային գոտի»:

միջին հայերենում<sup>4</sup>: Ընդ որում եթե *կուզ*-ը կարող էր նշանակել թե՛ վայրի, թե՛ ընտանի կատու, ապա *կատու* բառը գործածվում էր միայն ընտանի տեսակի համար. դա երևում է 12-13-րդ դդ. հեղինակներ Վարդան Բարձրաբերդցու և Գրիգոր Տաթևացու հետևյալ բառախաղում՝ «*Կատուն ի տանն կալոյն (անուանեալ է)*», որը 1861 թ. Մսեր Մսերյանն իր հրատարակած «Ճռաբաղ» հանդեսում ժողովրդական բանահյուսության ոճով այսպես է հանգավորել՝ «*Ի կենդանիս յաւէտ կատուն / Ընտանի է, զի կայ ի տուն: - / Է կենդանի բնութեամբ կայթոտ կամ կայթու- / Մկանց դժնեայ դահիճ, այն իսկ է կատու*»<sup>5</sup>:

*Կուզ* բառն առաջին անգամ վկայված է Աստվածաշնչի հայերեն թարգմանության մեջ մեկ անգամ, և մեկ անգամ էլ կրկին 5-րդ դարի թարգմանական մի երկում, երկուսն էլ՝ «կատու» իմաստով. սակայն, օրինակ, Հովհան Ոսկեբերանի նորից հինգերորդարյան մի թարգմանության մեջ *կուզ* բառը նշանակում է «աքիս»՝ ըստ Աճառյանի «կատուի նման մի անասուն, որ նշանաւոր է հաւ խեղդելու մէջ» (Նոր հայկազյան բառգիրքն այս երկու իմաստներն առանձնացնում է և դնում երկու համանուն բառ՝ *կուզ*): Մալխասայանցի բացատրական բառարանում *կուզ*-ը «կզաքիսների ցեղին պատկանող փոքր կենդանի է, երկայն ու նուրբ մարմնով, երկայն պոչով, խարտեաշ գոյնով, ճերմակ վզով ու կուրծքով, որ բնակում է

<sup>4</sup> **Հ. Աճառյան**, *Հայերեն արմատական բառարան*, հ. 2, Ե., 1973, էջ 539-540; **Գ. Ջահուկյան**, *Հայոց լեզվի պատմություն...*, էջ 260-261:

<sup>5</sup> Մեջբերումը ըստ Հ. Աճառյանի (Հայերեն արմատական բառարան, հ. 2, էջ 540), «Ճռաբաղ»-ի համարներում այս հատվածը մեզ չհաջողվեց գտնել:

<sup>6</sup> **Աւետիքեան Գ., Միւրմէլեան Խ., Աւգերեան Մ.**, *Նոր բառգիրք հայկազեան լեզուի*, հ. 1, Վենետիկ, 1836, էջ 1122, սակայն Հ. Աճառյանը սրանք համարում է մեկ բառ (Հ. Աճառյան, *Հայերեն արմատական բառարան*, հ. 2, էջ 653):

շէնքերի մօտ, որսում է հաւեր, մկնէր, ուտում է ձու, խաղող ևն. յարգի մուշտակ ունի»<sup>7</sup>:

Բարբառներում այս բառը հանդիպում է *կուզ* ձևով (Մոկս, Մուշ, Վան, Ալաշկերտ, Մալմաստ), նաև *գուզ* (Զեյթուն, Խոտըր-ջուր), և *կօզ* (Ոզմի)<sup>8</sup>, վկայված է նաև կրկնավոր տարբերակը՝ *կուզ-կուզ* (Արարատյան բարբառ)<sup>9</sup>: Ղազախի շրջանում, օրինակ, *կուզ* է կոչվել ոզնին<sup>10</sup>, սակայն հնարավոր է, որ սա պարզապես *կոզնի* բարբառային բառի կրճատված տարբերակը լինի, քանի որ Գորիսում, Արցախում, Ագուլիսում և Շամախիում ոզնին կոչվել է նախահավելված բաղաձայնով՝ *կոզնի/կուզնի/կուզնիզ*<sup>11</sup>:

### Ստուգաբանական փորձեր

Հայ. *կուզ* բառն ավանդաբար համարվել է պարսկական ծագման, սակայն ո՛չ նոր պարսկերենում, ո՛չ միջին պարսկերենում՝ պահլավերենում, ո՛չ էլ, առավել ևս, հին պարսկերենում այն գոյություն չունի՝ գոնե մեզ հայտնի գրավոր աղբյուրներում: Առաջին անգամ 1826 թ. Գևորգ դպիր Տեր-Հովհաննեսյանը Կ.Պոլսում հրատարակած իր բառարանի սկզբում հայ. *կուզ* բառը կցում է

<sup>7</sup> Ս. Մալխասեանց, *Հայերէն բացատրական բառարան*, հ. 2, Ե., 1944, էջ 480:

<sup>8</sup> Հ. Աճառյան, *Հայերէն արմատական բառարան*, հ. 2, էջ 653. Ի դեպ, ավելի ուշ հրատարակված բարբառային բառարանում բոլոր այս նշված ձևերը սխալմամբ բերվում են «ոզնի» նշանակությամբ (Հայոց լեզվի բարբառային բառարան, հ. 3, Ե., 2004, էջ 199 (ԿՈՒԶ<sup>2</sup>)), մինչդեռ նման իմաստ հստակ արձանագրված է միայն Ղազախի խոսվածքում, տե՛ս սույն հոդվածի շարունակությունը:

<sup>9</sup> Տ. Լաւասարդեանց, *Բառգիրք Արարատեան բարբառի*, Տիֆլիս, 1903, էջ 60:

<sup>10</sup> Հ. Աճառեան, *Հայերէն արմատական բառարան*, Թիֆլիս, 1913, էջ 850. «Ոզնիկ Վն. կոզնի Ղրբ. կուզ Ղզ. ոզնի անասունք». այս դեպքում կարող էր հասկացվել, թե Արցախում նույնպես ոզնին կոչվել է \**կուզ*, սակայն բարբառագետ-բանագետ Ա.Շ. Մարգարյանից ճշտեցինք, որ նման ձև Արցախի ոչ մի խոսվածքում գոյություն չունի. հմմտ. նաև Հայոց լեզվի բարբառային բառարան, հ. 3, էջ 199 (ԿՈՒԶ<sup>2</sup>):

<sup>11</sup> Հ. Աճառյան, *Հայերէն արմատական բառարան*, հ. 3, Ե., 1977, էջ 550, հմմտ. նաև Հայոց լեզվի բարբառային բառարան, հ. 3, Ե., 2004, էջ 125 (ԿՈԶՆԻ/ԿՈԶՆԻԿ):

պարսկ. *կիզ* (թերևս՝ *küz* - Տ.Դ.) հոմանիշին, սակայն բուն բառաբանում պարսկերեն այս բառը չկա<sup>12</sup>: Ավելի ուշ՝ 1879 թ. գերմանացի նշանավոր լեզվաբան-իրանագետ Ֆերդինանդ Յուստիի իմբագրությամբ լույս տեսած քրդերեն-ֆրանսերեն բառարանում քրդ. *كۆز* [կուժէ] «կուզ, կզաքիս» (ֆրանս. *martre, fouine*) բառի դիմաց հիշատակվում են հայ. *կուզ* և սխալ գրությամբ՝ *կզնաքիս* բառերը, սակայն չի որոշակիացվում դրանց փոխառման ուղղությունը: Ի դեպ, զագաների լեզվում էլ կա *kuze* [կուզե] բառը, որով կոչվել է «գորշուկ» կենդանին (ռուս. *барык*, ֆրանս. *blaireau*)<sup>13</sup>: Երեք տարի անց նշանավոր լեզվաբան-հայագետ Հ. Հյուբշմանը գերմանական ZDMG հանդեսում հրատարակած հոդվածում հայ. *կուզ* բառը համեմատում է քրդերեն և ասորերեն հոմանիշների հետ<sup>14</sup>, իսկ արդեն 1897 թ. լույս տեսած իր կոթողային «*Armenische Grammatik*» աշխատության մեջ *կուզ*-ը զետեղում է հայերենի ասորական փոխառությունների բաժնում<sup>15</sup>:

Հ. Աճառյանը, որը գրեթե միշտ անվերապահորեն հետևում է իր ուսուցիչ Հյուբշմանին, Արմատական բառարանի *կուզ* բառահոդվածում հղում է Հյուբշմանի հիշյալ աշխատանքները, սակայն *կուզ*-ը համարում է իրանական փոխառություն, նրան նույնությամբ հետևում է նաև Գ. Ջահուկյանը<sup>16</sup>: Իրականում իրանական ենթադրյալ *\*kuz* ձևը, որն աստղանիշով բերում է Աճառյանը, ոչ մի

<sup>12</sup> Բառարան պարսկերեն ըստ կարգի հայկական այբուբենից ի Գեորգեայ դպրէ Տէր Յոհաննէսեան Պալատոյ, Կոստանդնուպօլիս, 1826, էջ 13:

<sup>13</sup> **A. Jaba**, *Dictionnaire Kurde-Français*, publié par ordre de l'Académie Impériale des Sciences par M. Ferdinand Justi, St-Petersbourg, Imprimerie de l'Académie Impériale des Sciences, 1879, p. 349.

<sup>14</sup> **H. Hübschmann**, *Armeniaca* III, ZDMG, Bd. 36, 1882, S. 131, № 32.

<sup>15</sup> **H. Hübschmann**, *Armenische Grammatik*, 1897, S. 308, № 57.

<sup>16</sup> **Հ. Աճառյան**, *Հայերեն արմատական բառարան*, հ.2, էջ 653; **Գ. Ջահուկյան**, *Հայոց լեզվի պատմություն...*, էջ 529, 571; **Գ. Ջահուկյան**, *Հայերեն ստուգաբանական բառարան*, Ե., 2010, էջ 425:

տեղ վկայված չէ և որևէ այլ տվյալով չի հաստատվում, բայց նա դրանից փոխառյալ է համարում ասորեստանյան սեպագրում հանդիպող *kuza / qusa* [կուզա] բառը, որ թարգմանվում է «լուսան» կամ «կզաքիս», ինչպես և նոր ասորերեն *quza* [դուզա] «կատու, կուզ» բառը, որոնք էլ համարվում են քրդերեն և զազաների լեզվում հիշյալ բառերի աղբյուրը<sup>17</sup>: Մինևոյն ժամանակ չի բացատրվում, թե ինչու քրդ. *كوزك* [կուժէ] «կզաքիս» և զազաների լեզվում *kuze* [կուզէ] «գորշուկ» բառերը չէին կարող անմիջականորեն ծագել իրանական նախաձևից՝ առանց սեմական միջնորդության:

### Հայ-ալանական զուգաբանություն

Վերադառնալով հայերենին՝ հարկ է նշել, որ իմաստաբանական քննությունը և այն փաստը, որ *կուզ* բառով կոչվել են տարբեր կենդանիներ, ցույց են տալիս, որ վաղնջահայերենում *կուզ* արմատը պետք է որ առավել ընդհանրական իմաստ ունենար և հավանաբար իր մեջ պարունակեր մի հատկանիշ, որով բնորոշվել են բոլոր նշված կենդանիները և, պայմանավորված տարածաշրջանով կամ բարբառով, տվյալ բնորոշումը տրվել է տարբեր կենդանիներին: Մեր կարծիքով՝ սկզբնապես վաղնջահայերենում *կուզ*-ը պետք է լիներ բայարմատ և նշանակեր «թաքնվել» կամ «դարանակալել», այսինքն՝ նշված կենդանիների անուններն այդպիսով կարող էին լինել բայանուններ, որոնք հետագայում վերածվեին գոյականների, իսկ արմատի բայական իմաստը մթազնվեր ու ի վերջո կորսվեր: Նշված վարկածը կարծես հաստատվում է հայերենի բարբառների և հարևան լեզուների ընձեռած նյութով, որը մինչ այժմ անհայտ է եղել և չի օգտագործվել խնդրո առարկա արմատի ստուգաբանական պրպտումներում:

<sup>17</sup> Հ. Աճառյան, *Հայերեն արմատական բառարան*, հ. 2, էջ 653:

Նախ՝ ըստ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի հրատարակած բազմահատոր բարբառային բառարանի՝ Նոր Ջուղայի բարբառում վկայված է *գուզ մտնել* արտահայտությունը, որ նշանակում է «դարան մտնել» կամ «կուչ գալ»<sup>18</sup>: Ավելին, բառարանում բերվում է հետևյալ ձեռագիր օրինակը՝ «Կատուն գուզ է մտել, մըկան հոտ է առել»: Բացի այդ, առկա է հետևյալ օրինակը Գ. Սըրվանձտյանից, ըստ ամենայնի՝ Վանի բարբառով. «Պստիկ Միրզան կտեսնա՝ գազան մի կուզա, զինքը կթալէ փոսի մէջ, գուզ կանի, կնստի»<sup>19</sup>: Քանի որ բարբառային այս վկայությունները դիպվածային են և համատարած չեն, չի բացառվում դրանց փոխառյալ լինելը հարևան իրանական լեզուներից: Հետագա բարբառագիտական և համեմատական-լեզվաբանական ուսումնասիրությունները կարող են հաստատել կամ հերքել այս վարկածը:

Ուշագրավ է սակայն, որ հենց մեր վերականգնած «դարանակալել» նշանակությունը գտնում ենք տարածաշրջանի խիստ արխաիկ լեզուներից մեկում՝ ալաներենի ժառանգ օսերենում, որի արևելյան բարբառում գոյություն ունի *qʷəz-* [կվըզ-] արմատը, իսկ նրանից բաղադրված *qʷəzən* [կվըզըն] բայը նշանակում է «գաղտագողի մոտենալ (որսին)», «սողոսկել», «գողունի անցնել» են: Օսերենի արևմտյան՝ դիգորական բարբառում նույն արմատը հնչում է *ǰuz-* [դուզ-] և նրանից բաղադրված բայը՝ *ǰuzun* [դուզուն], նորից նույն նշանակություններով հաճախ կիրառվում է գիշատիչ կաթնասուններին բնորոշելու համար: Օսերենի այս տարբերակային ձևերի հիման վրա նշանավոր լեզվաբան-կովկասագետ Վ. Աբանը վերականգնում է ալանական *\*guz-*, *\*gauz-* բայարմատը, որը պետք

<sup>18</sup> Հայոց լեզվի բարբառային բառարան, հ. 1, Ե., 2001, էջ 291: Բարբառագետ Վ. Կատվալյանի հաղորդմամբ՝ նույն ձևը նույն իմաստով մինչ օրս գործածական է նաև Գավառի բարբառում:

<sup>19</sup> Հայոց լեզվի բարբառային բառարան, հ. 1, էջ 291:

է նշանակեր «դարանակալել» կամ «գաղտագողի մոտենալ որսին»<sup>20</sup>: Հետևաբար հայերենում և ալաներենում այս բառային համընկնումը կարելի է համարել հայ-ալանական հնագույն զուգաբանություն (իզոգլոսս), որն առնվազն հասնում է մինչև մ.թ.ա. 2-1 դարեր: Աբանը օսերեն բառը համարում է բնիկ իրանական, սակայն դարձյալ նրա ստուգաբանության մեջ վերոնշյալ 5 հատկանիշներից բացակա են 3-ը, իսկ լիարժեք ներկա է միայն 1-ը:

### Եզրահանգում

Ըստ այդմ՝ առկա լեզվաբանական տվյալները և պատմահամեմատական «հնգահատկանիշ» քննությունը հանգեցնում են այն մտքին, որ հանձին *կուզ-* (\**guz-*, \**ǵuz-*) բայարմատի, վաղնջահայերենում, ալաներենում, մարերենում և աքքադերենում (այսինքրն՝ պատմական Ասորեստանի պետական լեզվում) գործ ունենք ենթաշերտային մի ձևույթի հետ, որը պատկանել է նշված տարածաշրջանի ժողովուրդների որսորդական բառուլորտին և ավելի ուշ դրսևորվել է գրաբարում, քրդերենում, օսերենում և ասորերենում: Նշված լեզուները խոսվել կամ շարունակում են խոսվել հենց այն կոնտակտային գոտում, որը Ներածության մեջ ձևակերպեցինք որպես «հայ-ատրպատականա-մարական»:

<sup>20</sup> В.И. Абаев, *Историко-этимологический словарь осетинского языка*, т. 2, 1973, с. 336-337.

### Օգտագործված գրականություն

Աճառեան Հ.Յ., Հայերէն գաւառական բառարան, Էմինեան ազգագրական ժողովածու, հ. Թ, Թիֆլիս, Լազարեան ճեմարան արեւելեան լեզուաց, 1913:

Աճառեան Հ.Յ., Հայկականք. Ե-Ը // Բազմավէպ հանդիսարան. ամսագիր գրական, բանասիրական, պատմական, կրթական եւ գիտական, տարի (հատոր) ԾԵ, 1897, թիւ 6 (յունիս), Վենետիկ, Ս. Ղազար, էջ 259-261:

Աճառյան Հ.Հ., Հայոց լեզվի պատմություն, I մաս, Ե., ԵՊՀ հրատ., 1940:

Աճառյան Հ.Հ., Հայերեն արմատական բառարան, հ. 1-4, Ե., ԵՊՀ հրատ., 1971-1979:

Աւետիքեան Գ., Սիրմէլեան Խ., Աւգերեան Մ., Նոր բառգիրք հայկազեան լեզուի, Վենետիկ, Տպարան ի Սրբոյն Ղազարու, հ. 1, 1836, հ. 2, 1837:

Դալայյան Տ.Ս., Հայ-օսական լեզվամշակութային առնչություններ (բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսություն), Ե., 2002:

Հայոց լեզվի բարբառային բառարան, հ.1, հ. 3, Ե., «Գիտություն», 2001, 2004:

Հովհաննիսյան Լ.Շ., Հայերենի իրանական փոխառությունները, Ե., ՀԽՍՀ ԳԱ հրատ., 1990:

Մալխասեանց Ս.Ս., Հայերէն բացատրական բառարան, հ. 1-4, Ե., Հայկ. ՍՍՌ պետհրատ, 1944-1945:

Նաւասարդեանց Տ., Բառգիրք Արարատեան բարբառի, Տփլիս, տպարան Մովսէս Վարդանեանցի, 1903:



Ջահուկյան Գ.Բ., Հայոց լեզվի պատմություն: Նախագրային ժամանակաշրջան, Ե., ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1987:

Ջահուկյան Գ.Բ., Հայերեն ստուգաբանական բառարան, Ե., «Աստղիկ», 2010:

Բառարան պարսկերեն ըստ կարգի հայկական այբուբենից ի Գեորգեայ դպրե Տէր Յոհաննէսեան Պալատոցոյ, Կոստանդնուպոլիս, Օրթաքեօղ, տպարան Պօղոս Արապեան, 1826:

Абаев В.И., Историко-этимологический словарь осетинского языка, т. 1-4, Москва-Ленинград, Изд. АН СССР, 1958-1995.

Асатрян Г.С., Контакты армянского с новоиранскими языками (диссертация на соискание ученой степени доктора филологических наук), Ер., 1991.

Периханян А.Г., Материалы к этимологическому словарю древнеармянского языка, Ер., Изд. НАН РА, 1993.

Bailey H.W., Armeno-Indoiranica, Transactions of the Philological Society, London, 1956, p. 88-126.

Benveniste E., Etudes iraniennes, III. Emprunts iraniens en arménien, Transactions of the Philological Society, London, 1945, p. 68-78.

Gippert J., Iranica-Armeno-Iberica: Studien zu den iranischen Lehnwörtern im Armenischen und Georgischen, vol. II, Vienna: Verlag der Österreichischen Akademie der Wissenschaften, 1993.

Hübschmann H., Armeniaca III // Zeitschrift der Deutschen Morgenländischen Gesellschaft (ZDMG), Bd. 36, 1882, S. 115-134.

Hübschmann H., Armenische Grammatik, Leipzig: Breitkopf & Härtel, 1897.

Jaba A., Dictionnaire Kurde-Français, publié par ordre de l'Académie Impériale des Sciences par M. Ferdinand Justi, St-Petersbourg, Imprimerie de l'Académie Impériale des Sciences, 1879.

Meillet A., Sur les mots iraniens empruntés par l'arménien // Mémoires de la Société Linguistique de Paris (MSL), 1917, № 17, 242-250.

Meyer R., Iranian-Armenian Language Contact in and before the 5th Century CE, PhD Thesis, Wolfson College, University of Oxford, Trinity, 2017.

**Dalalyan Tork - The Meanings of "Hidden, Disguised" in the Light of the Armenian-Iranian Etymological Examination of a Root Coming from Ancient Armenian.**-In this paper, we make an attempt to etymologize through a comprehensive historical and comparative analysis Arm. *լուզ* [kouz], which meant ‘cat’ in Classical Armenian (Grabar). This word, traditionally considered to be of Iranian origin, has not been subjected to a deeper research. As a result, cognates and possible related variants have remained in the shadows. In one of the archaic languages of the region, Ossetic, a descendant of Alanian, the verbal root *qʷəz-* / *ǰuz-* means ‘to sneak up’, ‘to sneak in secretly’. This lexical coincidence in Armenian and Ossetic can be considered as an ancient Armenian-Alanian isogloss, bearing in mind also the fact that many lexical and semantic varieties of this root have been preserved in the Armenian dialects.

**Keywords:** K/quz, Sneak up, Verbal Noun, Classical Armenian (Grabar), Alanian, Five-character Classification.

Dalalyan Tork, PhD in Philology, Institute of Language named after H. Acharyan of NAS RA, Senior Researcher.

**Далалян Торк - Проявления понятия "скрытый, замаскированный" в свете армяно-иранского этимологического анализа одного корня, восходящего к древнеармянскому.**- Целью статьи является попытка этимологизировать посредством всестороннего историко-сравнительного анализа арм. *լուզ* [kouz], означающее "кот" в классическом армянском языке (грабар). Это слово, традиционно считающееся иранского происхождения, не подвергалось более глубокому исследованию, в результате чего когнаты и возможные родственные варианты остались в тени. В одном из архаичных языков региона,

осетинском, потомке аланского, глагольный корень  $q^w\text{əz-} / \text{ǰuz-}$  означает "красться", "подкрадываться", "пробираться тайком". Это лексическое совпадение в армянском и осетинском можно считать древней армяно-аланской изоглоссой, имея ввиду также то обстоятельство, что в армянских диалектах сохранилось множество лексических и семантических разновидностей данного корня.

**Ключевые слова:** куз, подстергать, отглагольное существительное, классический армянский (грабар), аланский, пятизначная классификация.

Далалаян Торк, кандидат филологических наук, Институт языка имени Р. Ачаряна НАН РА, старший научный сотрудник.

**«ԲԵՎՈՐ» ԻՄԱՍՏՈՎ ՀԱՅԵՐԵՆ ՄԻ ՔԱՆԻ ԲԱՌԵՐԻ  
ՍՏՈՒԳԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ\***

DOI: 10.54503/2738-277X.2024.1(21)-19

**Զաքարյան Հովհաննես**

բանասիրական գիտությունների թեկնածու,  
«Տարթ» ԳԿՀ, լեզվաբանության բաժանմունքի ղեկավար,  
hovzakaryan@yahoo.com

**Բանալի բառեր.** հ.-ե. նախալեզու, ձայնդարձ, արմատային տարբերակներ, սկզբնահնչյուն, աճական, սահող s-, ածանց:

**Նախաբան**

Հոդվածը վերաբերում է հ.-ե. \*(s)keu- (<\*sek-) «կտրել, հատել, ճեղքել» պարզական արմատից սերված հայերեն մի շարք այնպիսի բառերի ստուգաբանությանը, որոնք ունեն «բեկոր» և դրան անմիջապես հարող իմաստներ:

Նշված արմատի ածանցյալները լայն տարածում, ձևային և իմաստային բազմազան ճյուղավորումներ ունեն հ.-ե. լեզուներում, այդ թվում՝ հայերենում: Դրանց մի պատկառելի բազմություն ստուգաբանված է և տեղ է գտել հանրահայտ բառարաններում: Սակայն հետազոտությունները ցույց են տալիս, որ դեռ մեծ թիվ են կազմում չստուգաբանված կամ ոչ բավարար ճշգրտությամբ ստուգաբանված բառերը: Աշխատանքի արդյունավետությունն ապահովելու նկատառումով սահմանափակվել ենք նշված արմատից սեր-

---

\* Ներկայացվել է 30.05.2024, գրախոսվել՝ 21.06.2024:

ված հայերեն բառերի իմաստային մեկ ճյուղավորումով՝ «բեկոր» իմաստային դաշտով, ինչպես նաև իմաստով դրանց անմիջապես հարող մի շարք բառերով: Դա կարևոր է հայերենի բառապաշարի բնիկ՝ հ.-ե. շերտի գիտական ուսումնասիրությունն ամբողջացնելու առումով:

Հայերենում «բեկոր» իմաստով կան մի շարք հոմանիշ բառերի շարքեր՝ *ցլեպ (ծլեպ)* «սրածայր բեկոր» – *ծղան* «փայտի կտոր» – *ծեղ (ծիւղ)* «շյուղ, փշուր» – *շիւղ – ցախ* «կտրտած վառելափայտ» – *ճախ* «խոփվ» – *ճաղ* «ձող» – *ճղօն* «փայտի կտոր» – *խաղտ* «փշրանք» – *խախիծ* «կտորտանք (խարկած դմակի)», *ճաթ* «ցնցոտի» – *ճոթ* «կտոր» – *ճութ* «ողկույզ» – *ճիռ* «փոքր ողկույզ» – *ճորճուփ* «ողկույզ», *կրկուտ* «խոփվ» – *խրխոր* «մանր կտոր» – *շերտ*, *ցուպ* «ձող» – *ծուպք* «վառվող փայտի կտոր» – *ծուփք* «մանրած փայտ» – *կուպիճ* «խիճ» – *խիպար* «խիճ», *ծիւ (ծուէն)* – *ճիւ* «փերթ» – *ցաւատ* «ծվեն», *խծուծ* «զգած վուշի մնացուկ» – *խծիպ* «ծլեպ» – *քցիւ* «փշիկ» և այլն: Սրանց արմատները նաև հնչյունապես աղերսվում են միմյանց՝ տարբերվելով ածանցներով, աճականներով, ձայնդարձի աստիճաններով, բաղաձայնական օրինաչափ հերթագայություններով, հնչյունափոխություններով, սակայն մինչ այժմ առկա բառարաններում ու գիտական գրքերում բխեցվել են հաճախ միանգամայն տարբեր ու տարասեռ աղբյուրներից կամ մնացել են չմեկնաբանված: Սույն հոդվածի խնդիրներից են հոմանիշային շարքեր կազմող այդ բառերի միջև ծագումնաբանական համակարգային կապեր հայտնաբերելը և հ.-ե. նույնական սկզբնաձևերից բխեցնելը:

### **Հետազոտության ընթացքը և արդյունքները**

Հ.-ե. \*(s)keu- «կտրել, հատել, ճեղքել» պարզական արմատը և նրա՝ զանազան աճականներով ընդլայնված, ձայնդարձի տարբեր

աստիճաններով արտահայտված, սղված/չսղված, շարժուն (սահող) s-ով կամ առանց դրա, շնչեղացած/չշնչեղացած, քմայնացած/չքմայնացած, շրթնայնացած/չշրթնայնացած \*k-ով տարբերակների ածանցյալները հ.-ե. լեզուներում, այդ թվում՝ հայերենում<sup>1</sup>, ենթարկվել են իմաստային ամենաբազմազան զարգացումների:

Այդ արմատի իմաստային հիմնական ճյուղավորումներից են «ծվեն, բեկոր» նշանակությամբ բառերը: Հայերենում դրանցից ստուգաբանված են բազմաթիվ բառեր, որոնցից հիշենք մի քանիսը. *ցախ* «1. խոփվ, կտրտած վառելափայտ, 2. հացի ծառ» [*\*skʰə-kho-*]<sup>2</sup>, *ցաք-ատ* «ճյուղ կտրելու գործիք» [*\*skʰə-k-*] (ՀՄԲ, հ. 4, էջ 452)<sup>3</sup>, *ցաւ-ատ* «ծվեն, պատառ» [*\*skʰəu-*]<sup>4</sup>, *խզ-ել* «պոկել, կտրել, հատել» [*\*khu-gʰ-*] (ՀՄԲ, էջ 328), *խուզ-ել* (*խոյզ*) «կտրել, հնձել» [*\*kheu-gʰ-*] (ՀՄԲ, էջ 346), *կտոր* «հատված, բեկոր» [*\*(s)ku-d-որ-*], *ճախ* (*ճէխ*) «մանր ցախ, խոփվ» [*\*skʰə-kh-*], *ճակ* «կտոր, փերթ» [*\*skʰə-g-*], *ճաթ* «պատառոտված շոր, ցնցոտի, քուրջ» [*\*skʰə-t-*], *ճիւ* «1. մաս, կտոր, 2. վերջույթ» (որից՝ *ճու-ատ-ել* (*ճվտել*) «1. Քաշելով պոկել, 2. փետրել, 3. ճեղքել, ճաքեցնել») [*\*skʰē-p-*], *ճաթ* «պատառոտված շոր, ցնցոտի, քուրջ» (որից՝ *ճաթել, ճայթել, ճեթել* «ճա-

<sup>1</sup> Ածանցյալների այդ հսկա բազմությանը կարելի է ծանոթանալ Յ. Պոկորնու «Հնդեվրոպական ստուգաբանությունների բառարանում» [**J. Pokorny, Indogermanisches etymologisches Wörterbuch.** Bern-München, 1959.- <http://dnghu.org/indoeuropean.html> (այսուհետև՝ Պոկ.)] և Ս. Նիկոլանի «Հնդեվրոպական ստուգաբանության շտեմարանում» [**S. Nikolaev, Database of Indo-European etymology.**- <http://starling.rinet.ru/cgi-in/response.cgi?root=config&morpho=0&basename=\data\ie\piet&first> (այսուհետև՝ Նիկ.)] մասնավորապես \*sken- «կտրել, պոկել», \*(s)ken-(d)- «մաշկել, ճեղքել», \*(s)ker-4, (s)kerə-, (s)krē- «կտրել», \*(s)ko-l- «կտրել» և այլ գլխաբառերի տակ:

<sup>2</sup> Տե՛ս **Ս. Աճառյան**, *Հայերեն արմատական բառարան* (այսուհետև՝ ՀՄԲ), հ. 4, Ե., 1979, էջ 446-447:

<sup>3</sup> Տե՛ս նաև **Գ. Զահուկյան**, *Հայոց լեզվի պատմություն: Նախագրային ժամանակաշրջան* (այսուհետև՝ ՀԼՊ), Ե., 1987 էջ 130:

<sup>4</sup> Տե՛ս **Գ. Զահուկյան**, *Հայերեն ստուգաբանական բառարան* (այսուհետև՝ ՀՄԲ), Ե., 2010, էջ 742:

քել, ճեղքվել, բեկորների վերածվել») [ $<^*sk'h\acute{o}-t-$ ], *ճաղ* «1. ձող, 2. կրտոր, շերտ» [ $<^*sk'h\acute{o}l-$ ], *ճղ-օն* «ճեղքված փայտի կտոր» [ $<^*sk'h\acute{o}l-$ ], *խոխ* [ $<^*(s)khr\acute{e}-p-$ ], *խոխկ* «խոխվ, խուշուր» [ $<^*(s)khr\acute{e}-g-$ ]<sup>5</sup>, *կինճ* «խիճ» [ $<^*(s)k\acute{e}-d-io-$ ՝ *ն-ի* հավելմամբ], *կոպ-իճ* «խիճ» [ $<^*(s)ko-b-$ ], *կոշկ-ոռ* «խոշոր ու կարծր կտոր» [ $<^*(s)ko-sk\acute{h}-g-$ ], *կրկու-տ* «փայտի կտորտանք, խոխվ» [ $<^*(s)k\acute{o}-r-$ ՝ կիսակրկնությամբ], *խիպ-ար (խիբար)* «խիճ» [ $<^*(s)kh\acute{e}-b-$ ], *խշ-ուր (խուշուր)* «1. կտորտանք, խոխվ, փշուր, մանրուք, տաշեղ, 2. քիչ, սակավ» [ $<^*(s)kh\acute{o}-sk\acute{h}-$ ], *խեշ-եր(անք) (խժռանք)* «բեկորներ, մնացորդ» [ $<^*(s)khe-sk\acute{h}-$ ]<sup>6</sup>, *ժլ-իլ (ժլել)* «կոտրվել, ջարդվել» [ $< \delta h\acute{y} (\delta h\acute{y}) <^*(s)k'h\acute{e}-l-$ ], *ժեղ (ժիղ, ժիլ)* «շյուղ, կտոր, փշուր» [ $<^*(s)k'he-l-$ ], *ժիւղ (ժուղ)* «1. ծեղ, շյուղ, հարդի փշուր, 2. խոխվ» [ $<^*(s)k'heu-l-$ ], *ժղ-ան* «1. ճղոն, վառելափայտի կտոր, 2. շերտ» [ $<^*(s)k'h\acute{e}-l-$ ], *ժլ-ես* «ցլես, սրածայր բեկոր» [ $<^*(s)k'h\acute{e}-l-$ ]<sup>7</sup>, *շերտ* [ $<^*skherd-$ ]<sup>8</sup>, *շարշլ-ել* «քաշկոտել, պատառոտել, ցրցտել, ծվատել» [ $<^*skh\acute{e}-$ ՝ կիսակրկնությամբ] (ՀՄԲ, 583), *խախիճ* «խարկած դմակի կտորտանք» [ $<^*khidio-$ ՝ կիսակրկնությամբ] (ՀՄԲ, 310), *խաղտ* «կտորտանք, փշրանք» [ $<^*kh\acute{o}l-do-$ ] (ՀՄԲ, էջ 313), *խեղեփ* «1. կես մաս, 2. ընկույզի միջուկ» [ $<^*khe-l-eph-$ ] (ՀՄԲ, էջ 326), *խիզ-ար* «մեծ սղոց» [ $<^*kh\acute{e}i-g'h-$ ] (ՀՄԲ, 329), *խիլ (խլել)* «անջատում, խզում»

<sup>5</sup> Տե՛ս **Հ. Ջաքարյան**, *Ճ սկզբնահնչյունով մի քանի բառերի ստուգաբանություն*. - «Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն. Գիտական աշխատություններ», 1-2 (22), 2019, Գյումրի, էջ 228-238:

<sup>6</sup> Տե՛ս **Հ. Ջաքարյան**, *Խխունջ, քրքիր, կոպիտ և մի քանի այլ բառերի ստուգաբանություն*. - «Արեղյանական ընթերցումներ – 2» հանրապետական գիտական նրատաշրջանի հոդվածների ժողովածու (խմբ.՝ Ա. Աբաջյան), Ե., ԵՊՀ հրատ., 2018, էջ 79-93:

<sup>7</sup> Տե՛ս **Հ. Ջաքարյան**, *Ծ սկզբնահնչյունով մի քանի բառերի ստուգաբանություն*. - «Ջահուկյանական ընթերցումներ» (գիտական հոդվածների ժողովածու) (խմբ.՝ Վ. Կատվայան), Ե., 2019, էջ 35-45:

<sup>8</sup> Տե՛ս **Է. Աղայան**, *Բառաքնական և ստուգաբանական հետազոտություններ* (այսուհետև՝ Աղ.), Ե., 1974 էջ 128:

[<\*khēl-] (ՀՄԲ, էջ 330), *խիճ* «կոպիճ, քարի կտորտանք» [<\*khidio-] (ՀՄԲ, էջ 330-331), *խծուծ* «զգած վուշի մնացուկ» [<\*khō-dio-՝ կիսակրկնությամբ] (ՀՄԲ, էջ 334), *խողխողել* (*խոհխոհել*) «սրատել, մորթել» [<\*khol-՝ կրկնությամբ] (ՀՄԲ, էջ 339), *խրխոր* (*խրխուր*, *խըր-խիք*) «1. փշուր, մանր կտոր, չնչին բան, 2. փուխք» [<\*khor-՝ կրկնությամբ] (ՀՄԲ, էջ 355), *ցեպ* «փշուր, բեկոր» [<\*sk(ē)leb-] (ՀԼՊ, էջ 148) և այլն: Այլ լեզուներից նույնարմատ հոմանիշների օրինակներ են՝ հուն. κέρμα «մսակտոր, տաշեղ», κορμός «կտոր, բեկոր», լատ. carō, carnis «մսի կտոր», ումբր. karu «մաս», անգլ.-սաքս. sceard «կտոր, հատված, դրվագ», լիտվ. skarà «ջարդոն, փերթ, լաթ», հ.բ.գերմ. scherze, scherzel «կտրված մաս», լատվ. skrandas «լաթ», հ.հնդկ. kṛntāti «կտորներ, շերտեր», kārta «շերտ», karpāra- «բեկոր», հ.եկեղ.սլավ. črěpъ «բեկոր», հ.բ.գերմ. scirbi, մ.բ.գերմ. schirbe, մ.ու.գերմ. scharf «բեկոր», լիտվ. karpýti «կտոր, հատված», լատվ. šķērpele «փայտի բեկոր, տաշեղ», մ.իռլ. scrissid «շերտեր» (Պոկ., № 1738, (s)ker-4, (s)kerə-, (s)krē- «կրտրել»), մ.բ.գերմ. schiel (\*skēulo-) «բեկոր, տաշեղ», լիտվ. skūtas «փերթ, կտոր, փալաս» (Պոկ. № 1752, skēu-6(t-) «կտրել, զատել, քերծել») ևն:

Սույն հոդվածով առաջարկում ենք հ.-ե. \*(s)keu- «կտրել, հատել, ճեղքել» արմատից սերված տարալեզու օրինակների այս շարքին ավելացնել հայերեն հետևյալ բառերը:

*Ջարդել* «1. կտրել, փշրել, մանրել, 2. կտորել, 3. կտրտել, շերտատել» բառը Հ. Աճառյանը և Գ. Ջահուկյանը չեն ստուգարանել (ՀՄԲ, հ. 4, էջ 124, ՀՄԲ, էջ 651): Իմաստից և ձևից ելնելով՝ առաջարկում ենք *ջարդ-ել* <\*sk<sup>w</sup>hə-r-դ- <\*(s)keu- «կտրել, ճեղքել»



ստուգաբանությունը, որում \*r-ն՝ նախալեզվյան, *η*-ն հետնախալեզվյան աճականներ են:<sup>9</sup>

*Ջախել* (*ջաղխել*, *ջախջախել*, *ջանջախել*, *ջնջխել*, *ջնջղել*) «1. ջարդել, փշրել, կոտրտել, 2. կործանել, տապալել, ընկճել» բառի արմատը Հ. Աճառյանը նույնացրել է վրաց. *ջախեքա* «բախել, զարնել», լազ. *ջախ* «մուրճով զարնել», ուտ. *ծախսիեսուն* «ծեծել, փշրել», թուրք. չախչախ «դռան թակիչ» և մի շարք այլ բառերի արմատների հետ, բայց նշել է, որ «սրանց յարաբերութիւնը ճշտուած չէ» (ՀԱԲ, հ. 4, էջ 119): Գ. Ջահուկյանը սրանց ավելացրել է խեթ. *zah(h)*- «խփել», *zakhāi*- «ճակատամարտ» բառերը և ենթադրել, որ հայերենը փոխառություն է՝ առանց ճշտելու բուն աղբյուրը (ՀՄԲ, 649): Կարծում ենք, որ այս բոլորի սկզբնաղբյուրը կարող է լինել հայերենը, քանի որ նրանում օրինաչափորեն բացատրելի է բառի *h*-ե. ծագումը ահա թե ինչպես: Նախ՝ կա *ճեճեխել* (<*\*ճեխճեխել* <*\*sk'he-kh-*՝ կրկնությունամբ) հոմանիշը<sup>10</sup>, որը *ջ/ճ* հերթագայությամբ և *ա/ե* ձայնդարձով նույնական է *ջախջախել*-ին: Կան նաև *ճղճղել* «պատառոտել» [<*\*sk'hēl-*՝ կրկնությամբ] և *խողխողել* «սրատել, մորթել» [<*\*khol-* <*\*(s)keu-*՝ կտրել, ճեղքել]՝ կրկնությամբ (ՀՄԲ, էջ 339)] բառերը, որոնք թե՛ իմաստով, թե՛ ձևով մոտ են *ջախջախել*-ին՝ հնչյունապես կապվելով արմատասկզբի *ջ/ճ/խ* և արմատավերջի *η/խ* հերթագայություններով, *n/p/w* ձայնդարձով: Երկրորդ՝ *ջախ* արմատը (Մալխ., հ. 4, էջ 132)՝ իր *ճախ*, *ցախ* հերթագայական տարբերակներով, որպես ինքնուրույն բառ՝ ունի «կոտրտած փայտ» իմաստը, որ կապվում է *ջախել* բառի իմաստին: Ինչ վերաբերում է *η/խ* տար-

<sup>9</sup> Սկզբնահնչյուն *ջ*-ի մասին տե՛ս Հ. Ջաքարյան, «Շառափ, ցողել, ծորալ» իմաստներով հայերեն մի քանի բառերի ստուգաբանություն.- «Ջահուկյանական ընթերցումներ», 1(16), Ե., 2021, էջ 126-137, \*r և *η* աճականների մասին՝ ՀՄԲ, 3, 438:

<sup>10</sup> Տե՛ս Ս. Մալխասեանց, *Հայերեն բացատրական բառարան* (այսուհետև՝ Մալխ.), հ. 3, Ե., 1944, էջ 206:

բերակմանը, ապա կարծում ենք, որ նախնականը *ղ*-ն է, մանավանդ որ կան *ջախ* բառի նաև *ջաղջ* (*ջաղձ*) և *ջալ* (*ջայլ*, *ջալոտ*, *ջալոտի*) անհայտ ծագման համարվող տարբերակները (ՀԱԲ, հ. 4, էջք 120, 118, ՀՄԲ, էջ 649) (*ղ/խ* անցման համար հմմտ. *ածուղ* – *ածուխ*, *սանդուղ* – *սանդուխ*, *գազաղ* – *գազախ* են): Այսպիսով՝ առաջարկվում է *ջախ* <\*sk<sup>w</sup>hə-kh- (*ջաղ* <\*sk<sup>w</sup>hə-l-) <\*(s)keu- «կտրել, ձեղքել» ստուգաբանությունը. \*l-ն աճական է:

*ճոթ* (*ճոնդ*, *ճութ*, *ջեթ*) «1. կտոր, մաս, պատառ, 2. կես, 3. ծայր, եզր, 4. ծոպ» (Մալխ. հ. 3, էջք 221, 223)<sup>11</sup> բառը Հ. Աճառյանը համարել է փոխառություն թաթար. չիտ «1. եզերք, սահման, 2. գործվածքեղեն, չիթ» բառից (ՀԱԲ, հ. 3, էջ 209-210): Գ. Ջահուկյանը համաձայն է այդ կարծիքին (ՀՄԲ, էջ 495): Սակայն նշված սկզբնաբյուրից ունենք *չիթ* «բամբակե ծաղկավոր հասարակ գործվածք» փոխառությունը (Մալխ, հ. 4, էջ 23): Մինչդեռ *ճոթ*-ը հնչյունապես տարբեր է թաթարերեն բառից և շատ ավելի նման է վերոհիշյալ *ճաթ-ել* (*ճայթել*, *ճեթել*) «ճաքել, ձեղքվել, բեկորների վերածվել» բնիկ հայերեն բառին: Դրանից բացի՝ *ճոթ*-ը մանավանդ հայերենի բարբառներում խիստ տարածված է և ունի բազում ածանցյալներ (*ճոթիկ* «պատառիկ, քոթիկ», *ճոթել* «ծայրերը չկապել՝ բաց թողնել», *ճոթ անել* «1. բաժանել, կիսել, 2. ձեղքել», *ճոթ լինել* «պատռվել, կտոր-կտոր լինել», *ճոթվորել* «զարդարվել», *ո* սաստկականով՝ *ճոթռել* «պատառոտել, բզկտել», *ճոթռտել* «բզիկ-բզիկ անել», *ճոթըրվոց* «պարծենկոտություն, մեծ-մեծ ջարդելը», *ճոթռդիլ* «շոգից թառամել, թոշնել», *ճոթուպատառ* «ջարդուփշուր», դրափոխությամբ՝ *ճոռթել* «1. ճղել, պատռել, 2. պայթեցնել, ճաթեցնել», *ճոռթակ* «ձեղք» և այլն: Հետևաբար կարելի է ենթադրել, որ դա բնիկ հայե-

<sup>11</sup> Տե՛ս նաև *Հայոց լեզվի բարբառային բառարան* (այսուհետև՝ ՀԼԲԲ), հ. Գ, Ե., 2004, էջ 407, 421:

րեն բառ է, և առաջարկել *ճոթ* < \*sk'ho-t- < \*(s)keu- «կտրել, ճեղքել» ստուգաբանությունը՝ \*t աճականով և ձայնդարձային ու հերթագայական տարբերակներով [*ճութ* < \*sk'hō-t-, *ջեթ* < \*sk<sup>w</sup>he-t-]:<sup>12</sup> Ավելացնենք նաև, որ *չիթ*-ի կողքին առկա է նաև *չիթչի* «չթագործ» փոխառությունը (Մալխ., հ. 4, էջ 23), մինչդեռ *ճոթ*-ի դեպքում նման զուգահեռ չկա: Այնուամենայնիվ, եթե *չիթ*-ի և *ճոթ*-ի ձևային որոշ նմանությունը պատահական է, ապա իմաստային նմանությունը կարող է լինել երկու բառերի բաղարկության հետևանք (*չիթ*-ի «գործվածք, կտորեղեն» իմաստը փոխանցվել է *ճոթ*-ին», հմմտ. *ճոթեղեն, ճոթածախ, ճոթավաճառ, ճոթեզր, ճոթկտրեք* «հարսի շոր ձևելու ծեսը»): Իզուր չէ, որ ՀԼԲԲ-ում *ճոթ* «գործվածք» բառը ներկայացված է որպես մյուս իմաստներով *ճոթ*-ի համանուն: Ի դեպ, թուրքերենում ծիտ-ը ունի միայն «գործվածք» իմաստը<sup>13</sup>, նույնը՝ ադրբեջաներենում<sup>14</sup>:

*Ճոնդ (ջոթ)* «1. ճոթ, ծայր, եզր 2. քղանցք, 3. կարկատանի կտոր» բառը թեև բառարաններում տրված է որպես առանձին գլխաբառ (ՀԼԲԲ, հ. Գ, էջ 410, Մալխ., հ. 3, էջ 223), սակայն պետք է համարել նախորդ *ճոթ* բառի տարբերակ՝ լրացուցիչ իմաստներով (տե՛ս նաև (ՀԱԲ, հ. 3, էջ 209-210). *ն*-ն հայերենին բնորոշ հավելատարր է, որի ազդեցությամբ էլ տեղի է ունեցել *թ>դ* ձայնեղացումը:

<sup>12</sup> Հմմտ. նաև լիտվ. skėlti, skėliù, լատվ. šķel<sup>^</sup>t, šķeļs «ճեղքել», լատվ. šķēle «1. կտոր, 2. հագուստի կտրվածք», šķīla «բեկոր, ծղան, ճղոն», լիտվ. skiltis «կտրված մաս», skylė «ծակ», հ.իլ. skilja «բաժանել, ճեղքել», հուն. σκόλλω «կտրում եմ, փորում եմ», հայ. *ցելուլ* «ճեղքել, պատռել», իւթթ. iškallāi- «կտրել, պոկել», ռուս. скалá «ծայր, քերծ», оскóлок «բեկոր», скóлька «հատված» (տե՛ս *Викисловарь*.-<https://ru.wiktionary.org/wiki> (այսուհետև՝ ՎԲՌ), ущéлье): Հմմտ. նաև *ճայթել (ճեթել)* «պայթել, պատռվելով բացվել, բեկորների վերածվել» հարանուն արմատով բառը:

<sup>13</sup> Տե՛ս *Урецько-русский словарь* (այսուհետև՝ ԹՌԲ), М., 1977 էջ 193:

<sup>14</sup> Տե՛ս *Ռ. Բադրալյան, Ադրբեջաներեն-հայերեն բառարան* (այսուհետև՝ Բադր.), Ե., 1987 էջ 726:

*Ճիմ* (*ջիմ, ճուս, ճուսն, ճուսբ*) «կունձղ, հողի թաց կտոր, բուսածածկ գետնից աղյուսածև հատված կտոր՝ վրան արմատացած կանաչ կամ չոր խոտ» բառը Հ. Աճառյանը համարել է փոխառություն թյուրքական աղբյուրից՝ չաղաթայերեն ձիմ «գուղձ» բառից (ՀՄԲ, հ. 3, էջ 200): Նրա հետ համաձայն է Գ. Ջահուկյանը (ՀՄԲ, էջ 493): Սակայն բարբառային ու ձայնդարձային տարբերակների (*ու-ով* ձևերի գերակշռությամբ), հայերենին բնորոշ *-ն, -բ* հավելումների, *ճմել, ճիմապատել, ճիմահատ, ճմուտ, ճմահող, ճմախոտ, ճմակալել, ճմաշատ, ճմաշերտ, ճմառատ, ճմավոր, ճմե, ճմաջին*<sup>15</sup> (ԱՀԲԲ, էջք 942, 944) և այլ ածանցյալների առկայությունը կասկածելի են դարձնում այդ տեսակետը<sup>16</sup>: Ուստի առաջարկում ենք, նկատի ունենալով դրա «կտոր, մաս, հատված» իմաստային բաղադրիչը, կապ տեսնել դրա և վերոհիշյալ *ճոնդ, ճոթ, ճաթ, ջախ*,

<sup>15</sup> Տե՛ս **Է. Աղայան**, *Արդի հայերենի բացատրական բառարան* (այսուհետև՝ ԱՀԲԲ), Ե., 1976 էջ 942, 944:

<sup>16</sup> Ավելի հավանական է հակառակ՝ հայերենից չաղաթայերեն (գրական թուրքերեն) փոխառությունը, մանավանդ հայերը անհամեմատ ավելի հնուց են հողագործ, քան թուրքերը: Խնդիրն այն է նաև, որ արդի թուրքերենում ձիմ նշանակում է «խոտ, խոտածածկ, սիգամարգ», բայց ո՛չ «գուղձ» (ԹՌԲ, էջ 192): Այդ բառը «գուղձ» իմաստն ունի աղբբեջաներենում (Բաղր., 724), մի լեզու, որը կրել է նաև հայերենի ազդեցությունը: Թուրքերենում «գուղձ» իմաստը երկրորդաբար արտահայտվում է ձիմո բառով, որի հիմնական իմաստներն են «1. դալար խոտ, 2. մարգագետին» (ԹՌԲ, 192): Դրա աղբբեջաներեն տարբերակն է ձիմո «մարգագետին» (Բաղր., 721): Հայերեն որոշ բարբառներում առկա է *ջիման* «1. մարգագետին, 2. խոտածածկ» փոխառությունը (ՀԼԲԲ, Դ, 410): *Գուղձ* բառի թուրքերեն համարժեքն է *kesek* (տե՛ս ստորև), որի արմատը թերևս առնչվում է հ.-ե. \*(s)keu- «կտրել, ճեղքել» արմատին նոստրատիկ մակարդակում: Ի դեպ, Հ. Աճառյանը գրել է. «Գրական թուրքերենի բառերը գոյություն չունեն մեր փոխառությանց շարքում, նրանց ամբողջությունը բաղկացած է միմիայն այն բառերից, որոնք առհասարակ գործածական են խոսակցական-ժողովրդական թուրքերենի մեջ» (**Հ. Աճառյան**, *Հայոց լեզվի պատմություն*, հ. 2, Ե., 1951, էջ 270): Հետևաբար անհավանական է հայերենում տարածված բառի փոխառությունը ուշ միջնադարի միջինասիական թյուրքական գրական-գրքային լեզվից:

*ճիւ, ճաղ, ճակ, ճաք* և այլ բառերի հ.-ե. նախաձևերի միջև՝ այլ աճականով՝ *ճիւ* (*ճոււ*) <\*sk'hē-m- (\*sk'hō-m-) <\*(s)keu- «կտրել, ճեղքել»:<sup>17</sup> Իմաստային զարգացման առումով նկատենք, որ նույն «կտրել, հատել» բնիմաստն ունի ռուս. ձեռն «ճիւ» բառը, որ կապված է *драть* «պլոկել, քերթել, ճղճղել» բառին (ՎԲՌ, ձեռն): Նույն պատկերն է անգլ. *sward* «ճիւ» բառի դեպքում. սրա բնիմաստն է «մաշկ, մորթ»<sup>18</sup>, որ իր հերթին «քերթել, կտրել, ճեղքել» իմաստի զարգացումն է<sup>19</sup>: Թուրք. *kesek* «1. կտոր, բեկոր, 2. գուղձ, ճոււր» բառը (ԹՌԲ, 534) իմաստային նույն զարգացումն է ապրել: Հայերենում կա նաև *ճիւ/ճոււ*-ի ծագումնաբանորեն մի ավելի հեռավոր հոմանիշ տարբերակ՝ *ճնարք* (Մալխ., հ. 3, էջ 217)<sup>20</sup>, որի համար պետք է ենթադրել *\*ճին-* կամ *\*ճուն-* արմատ [*\*sk'hē-n-* կամ *\*sk'hō-n-*]<sup>21</sup> *-ար* և *-ք* ածանցներով (*-ար/-իր/-որ/-ուր* ածանցի համար հմտ. *գալ-ար, պալ-ար, խանգ-ար* «մճիր, մոծիր», *հաճ-ար, ձագ-ար, պատահ-ար, մոծ-իր, խտ-իր, բեկ-որ, հատ-որ, քակ-որ, կտ-որ, մր-ուր, բար-ուր, կտ-ուր* ևն):

*ճոււր* «գուղձ» բառը (Մալխ., հ. 3, էջ 224) թեև Հ. Աճառյանը համարել է *ճիւ* բառի բարբառային տարբերակ (ՀԱԲ, հ. 3, էջ 200), իսկ Գ. Ջահուկյանն անտեսել է, սակայն արդի գրական լեզվում ընկալվում է որպես ինքնուրույն բառ՝ *ճիւ*-ի հոմանիշ: Դրա համար կվերականգնվի *\*sk'hō-m-* նախաձևը, որում *ք-*ն հետնախալեզվ-

<sup>17</sup> Հ.-ե. լեզուներից գուգահեռներ են մ.իռլ. *coire*, գոթ. *hairus*, հ.իսլ. *hjorr*, անգլ.-սաքս. *heoru*, հ.սաքս. *heru* «թուր» <\*(s)ker- «կտրել» (Պոկ. (s)ker-4, (s)kerθ-, (s)krē-) բառերը:

<sup>18</sup> Տե՛ս *Wiktionary*. - <https://en.wiktionary.org/wiki/sward>:

<sup>19</sup> Իմաստային այսօրինակ զարգացումների մասին տե՛ս Հ. Զաքարյան, «Ոտնաման» և «կաշի» նշանակող մի քանի բառերի ստուգաբանություն. - «Ջահուկյանական ընթերցումներ». ակադեմիկոս Գ. Ջահուկյանի ծննդյան 95-ամյակին նվիրված միջազգային գիտաժողովի նյութեր (խմբ.՝ Վ. Կատվայան), Ե., 2015, էջ 53-60:

<sup>20</sup> Ա. Սուքիասյան, *Հայոց լեզվի հոմանիշների բառարան* (այսուհետև՝ ՀԼՀԲ), Ե., 1967, էջ 425:

յան աճական է: Ի դեպ, հայերենում կան նաև *գուղձ*, *կունձ(ղ)*, *քըն-ցեղ*, *կոռթ*, *հողակոշտ* բառերը, որոնք նշանակում են «հողի չոր (այլ ոչ թե թաց) կտոր»:

*Ճուլթ* (*ճիթ*) «1. ողկույզ, կուզ, զնգուռ, 2. փունջ, 3. ասեղնագործվածքի մաս՝ հատված» (ՀԼԲԲ, հ. Գ, էջք 421, 386, Մալխ., հ. 3, էջք 224, 209) բառը տեղ չի գտել ստուգաբանական բառարաններում: Ձևով շատ նման է *ճաթ* և *ճոթ* արմատներին: Իմաստով տեղավորվում է հ.-ե. վերոհիշյալ \*sk'eu- «կտրել, ճեղքել» արմատի իմաստային զարգացումների շրջանակում (հմմտ. վերոհիշյալ *ճախ*, *ցախ*, *խոխ*, *խշուր*, *ճակ*, *ճիւ*, *ճիւղ* և այլ բառեր): Դրա համար կարելի է վերականգնել հ.-ե. \*sk'hō-t- (\*sk'hē-t-) նախաձևը, որում \*t-ն աճական է: Սրա ածանցյալն է *ճուլթակ* «բալի, կեռասի կամ այլ մրգի փունջ» (ՀԼԲԲ, հ. Գ, էջ 421) բառը: *Ճուլթ* (*ճիթ*)-ը հնիւլ. մակարդակում նույնարմատ *շիւղ*, *շիւ*, *ճիւղ* բառերի հետ հարաբերվում է այնպես, ինչպես ռուս. гроздь «ողկույզ, ճուլթ» բառը՝ իր «շյուղ, շիվ» բնիմաստի հետ (ՎԲՌ, гроздь): Փաստորեն հայ. *ճուլթ* (*ճիթ*), ռուս. гроздь, кисть, горсть բառերը նույն բնիմաստն ունեն՝ «ճյուղավորում, նույն հիմքից ելուստների փունջ» (հմմտ. ՎԲՌ, кисть):

*Ճիռ* (*ճուռ*, *ճիւռ*, *ճիռն*, *ճեռ*, *ճեռնը*) «1. խաղողի փոքրիկ՝ սակավահատ ողկույզ, զնգլակ, պլեճ, 2. ազոխ, խակ խաղող, 3. ձիթենու վրա մնացած տկար պտուղ» բառը Հ. Աճառյանը և Գ. Ջառուկյանը համարել են անհայտ ծագման (ՀԱԲ, հ. 3, էջ 201-202, ՀՄԲ, 493): Ածանցյալներն են՝ *ճոխիկ* «փոքր ճիռ» (ՀԼԲԲ, հ. Գ, էջ 415), *ճոտիկ* «փոքր ողկույզ», *ճոտել* «ծայրը ճեղքված ձողով խաղողի ողկույզը ոլորելով պոկել» (ՀԼԲԲ, հ. Գ, էջ 417), *ճեռվոր* «ճիռ հավաքող» (ՀԼԲԲ, հ. Գ, էջ 379), *ճոաքաղ* (Մալխ., հ. 3, էջ 226) և այլն: Իմաստային ու ձևային նմանությունը թույլ է տալիս այս բառը կցելու *ճուլթ* (*ճիթ*)-ի նախաձևին՝ այլ վերջամասնիկներով՝ *ճիռ* (*ճուռ*,

*ճիւռ, ճէռ*) <\*sk'hē-r-s- (\*sk'hō-r-s-, \*sk'heu-r-s-, \*sk'he-r-s-). \*r-ն և \*s-ն ածականներ են<sup>21</sup>: Թերևս *ճիռն* տարբերակի ածանցյալ է *ճոնքոտել* «ծանրաբեռնվել (ծառը՝ պտուղներով)» բառը (Մալխ., հ. 3, էջ 227):

*Ճորճոփ* «ողկույզ, փունջ (պտուղների)» (որից՝ *ճորճոփ-ճորճոփ* «փունջ-փունջ, ողկուզաձև, առատորեն») (Մալխ., հ. 3, էջ 223) բառը չկա ստուգաբանական բառարաններում: Սա գրեթե հոմանիշ է *ճութ*, *ճիռ* բառերին, ուստի ձևային նմանությունն էլ հաշվի առնելով՝ պիտի նրանց նույնարմատ համարել: Բառակազմորեն կա՛մ կիսակրկնավոր է (\*ճոփ-ճոփ <\*sk'ho-ph- <\*sk'eu- «կտրել, ճեղքել». \*ph-ն ածական է), կա՛մ ածանցավոր (ճորճ-ոփ <\*sk'ho-r-g<sup>w</sup>y- <\*sk'eu- «կտրել, ճեղքել». \*r-ն և \*g<sup>w</sup>y-ն՝ ածականներ են), որ ավելի հավանական է (*-ոփ/-ափ/-ուփ/-եփ* ածանցի համար հմմտ. *շորշ-ոփ, տ(ո)ր-ոփ, թարթ-ափ, խարխ-ափ, կո-ուփ, խեղ-եփ, շեր-եփ* և այլն):

*Ճույ* (*ճոււյ, ճուփ, ճոփ, ճույք*) «1. զգեստի ծայրի զարդարուն թելաշար, փունջ, 2. այծենակաճի մակերեսի վրա կախված քուղանման խավ, ծիլ» բառը Հ. Աճառյանը և Գ. Ջահուկյանը համարել են անհայտ ծագման (ՀՄԲ, հ. 2, էջ 467, ՀՄԲ, էջ 366): Սա «փունջ, ճյուղավորում» բնիմաստով համընկնում է *ճութ*, *ճիռ*, *ճորճոփ* բառերին: Հետևաբար առաջարկվում է *ճույ* (*ճոււյ*) <\*(s) k'ho-b- (\*s)k'hō-b-) <\*sk'eu- «կտրել, ճեղքել» ստուգաբանությունը: Այս բանաձևում \*b-ն ածական է, որը հերթագայվում է \*ph>*ի*-ով:

*Ճոււյք* «1. վառվող փայտի կտոր, որ տանում են ուրիշ տեղ կրակ անելու համար» (ՀԼԲԲ, հ. Բ, էջ 430) բառը ստուգաբանական բառարաններում առկա չէ: Սա փաստորեն *ցոււյ* «գավազան, բիր, մական, ձող, ոստ, ճյուղ» [<\*skōbo-՝ \*skeb(h)/p- «կտրել, ճեղքել»] (ՀՄԲ, էջ 744-745, Աղ., էջ 154-155) բառի ձևափոխության մի

<sup>21</sup> Հորվածում առկա r+s>n անցման մասին տե՛ս ՀՄԲ, էջ 534, մոռ, ՀԼՊ, էջ 255:

ճյուղավորումն է, որի համար կարելի է առաջարկել *ծուպ-ք* <\*(s)k'hō-b- <\*sk'eu- «կտրել, ճեղքել» ստուգաբանությունը. \*b-ն աճական է:

*Ծուփք* «ջարդած՝ մանրած փայտ» (ՀԼԲԲ, հ. Բ, էջ 431) բառը ստուգաբանական բառարաններում չկա: Մա ձևով նախորդի (*ծուպք*)՝ *պ/փ* հերթագայությամբ տարբերակն է: Իմաստով հարում է նույնարմատ *ցախ, ճախ, կրկուտ, խրխոր, խոխ, խոխկ, խշուր, խաղտ, ճղոն, ճղան, ցլեպ* և այլ բառերի: Ուստի առաջարկում ենք *ծուփ-ք* <\*(s)k'hō-ph- <\*sk'eu- «կտրել, ճեղքել» ստուգաբանությունը. \*ph-ն աճական է:

*Ծիւ* «կտոր, պատառ (շորի)» (որից՝ *ծուէն, ծուիկ, ծուանգ* «փերթ, ցլեպ, կտոր», *ծուել, ծուատել, ծվռտել* «բզկտել, պատառտել, կտրտել») բառը Հ. Աճառյանը չի ստուգաբանել (ՀՄԲ, հ. 2, էջ 461-462): Գ. Ջահուկյանը կասկածով հնարավոր է համարել այդ բառի կապը հ.-ե. կա՛մ \*g'ēbh-՝ \*g'ebh- «ճյուղ, փայտի կտոր», կա՛մ \*g'ī-u-՝ \*g'ē(i)- «ծլել, ծաղկել, ճեղքվել, պատռվել» արմատի հետ (ՀՄԲ, էջ 364): Նկատի ունենալով այս տարակարծությունները, ինչպես նաև իմաստային առնչությունը վերոհիշյալ քննարկվող բառերի (հատկապես *ճիւ, ճակ, ճաթ, ճոթ, խոխու, ծիւղ, ծիղ* նն) ու դրանց հ.-ե. նախաձև արմատի հետ՝ առաջարկում ենք *ծիւ* <\*(s)k'hēu- <\*sk'eu- «կտրել, ճեղքել» ստուգաբանությունը:

*Ծիւ* «1. աթար, քակոր, ցան, 2. խոփվ» բառը Հ. Աճառյանը և Գ. Ջահուկյանը դիտարկել են որպես *ծիւ* «կտոր, պատառ» բառի համանուն և համարել փոխառություն վրացերենից (ՀՄԲ, հ. 2, էջ 462, ՀՄԲ, էջ 364): Մակայն Հ. Աճառյանը նկատել է, որ այս բառը մատենագրության մեջ գործածված է որպես *ծիւղ* «խոփվ» բառի հոմանիշ (ՀՄԲ, հ. 2, էջք 455, 461): Նաև նկատի ունենալով, որ *ցան* բառն էլ ունի թե՛ «աթար», թե՛ «խոփվ» իմաստները (Մալի., հ. 4, էջ



457), և «ցան» իմաստը կապվում է «մանրել, փշրել, կտրտել», «կրտոր, բեկոր, փշուր» իմաստներին, կարծում ենք, որ *ծիւ* «աթար, քակոր, ցան» և *ծիւ* «կտոր, պատառ» բառերը նույնարմատ են՝ նույն «կտոր, փշուր» բնիմաստի տարբեր զարգացումներ (նույնարմատ համանուններ):

*Խծիպ (խծեպ, խուծապ)* «1. եղունգի եզրի ծվեն, ծլեպ, քցիմ, 2. ճյուղահյուս դուռ կամ ցանկապատ» (ՀԼԲԲ, հ. Բ, էջ 334) բառը ստուգաբանական բառարաններում չկա: Իմաստով մոտ լինելով *ծլեպ, ծիւ, ծիղ, ճոթ* և այլ նույնարմատ բառերի՝ կարելի է կապել դրանց հետ՝ *խծ-իպ* <\*խիծ- <\*khē-g- <\*sk'eu- «կտրել, ճեղքել» ստուգաբանությամբ. առկա են \*g՝ աճական և վերոհիշյալ *-եպ* ածանցը՝ ձայնդարձային *-իպ/-ապ* տարբերակներով (հմմտ. նաև *կճ-իպ «դմակի ծայր», խծ-ապ «վրակար»*):

*Քցիմ* (բրբռ. *քցիպ, քիծեփ, քեծ*) «եղունգի կողքից անջատված փշիկ, խծիպ» բառը Հ. Աճառյանը և Գ. Ջահուկյանը համարել են անհայտ ծագման (ՀԱԲ, հ. 4, էջ 604, ՀՍԲ, էջ 790): Մա ակնհայտորեն նախորդ՝ *խծիպ* բառի տարբերակն է՝ *խ/ք* և *ծ/ց* հերթագայություններով, ձայնավորման *ը/ի/ե* աստիճաններով: Տարբերակված է նաև ածանցը՝ *-իմ/-իպ/-եփ*: Արմատի ստուգաբանական բանաձևը կլինի՝ *քց-* <\*քից- <\*(s)kē-k's-, որում \*k's-ն աճական է (*-ամ/-ում/-ում/-եմ/-իմ* ածանցի համար հմմտ. *խար-ամ, խաշ-ամ, խորշ-ում, խոր-ում, կնգ-ում, համ-եմ, ուշ-իմ*ն):

*Քեցել* «1. գատել, հեռացնել, իրարից բաժանել, 2. դեն նետել, վերացնել, 3. կաթից կտրել» բառը (Մալխ., հ. 4, էջ 571) չկա ստուգաբանական բառարաններում: Մրա արմատական ձևն է՝ *քեց* «գատած» (նույն տեղում): Մա ձևով հարում է հատկապես *քցիմ/ քեծ* բառին, իմաստով՝ *ճուատել, ցուատել, իլել, ջարդել, ջախել* և այլ բառերի: Ուստի առաջարկում ենք բխեցնել նույն ընդհանուր ար-

մատից՝ *ptg* <\*(s)ke-k's-<\*(s)keu- «կտրել, ճեղքել» ստուգաբանական բանաձևով, որում \*k's-ն աճական է:

*Քէզ* «ոչխարների բաժանումը»<sup>22</sup> բառը (Մալխ., հ. 4, էջ 571) ստուգաբանական բառարաններում չկա: Սա նախորդ՝ *ptg*, բառից տարբերվում է միայն աճականով և արմատի ձայնավորմամբ, հետևաբար կարելի է առաջարկել *ptq* <\*(s)kei-g'h-<\*(s)keu- «կտրել, ճեղքել» ստուգաբանությունը. \*g'h-ն աճական է:

*Քէզար* «կալում մնացած խոշոր հարդ, որը գործ են ածում որպես վառելիք» բառը (ՀԼԲԲ, հ. Է, էջ 121) չկա ստուգաբանական բառարաններում: Սրա արմատը (*ptq*) նույնն է, ինչ նախորդ բառը, որին առնչվում է նաև իմաստով: Խնդիրն այն է, որ հարդը հացագզի բույսերի կտրտված չոր ցողունն է, այսինքն՝ այդ բառի իմաստային կարևոր բաղադրիչ է «կտրել»-ը: Իմաստային անցման համար հմնտ. *մղմեղ* «մանր հարդ» հոմանիշը, որի *մեղ* արմատը ծագում է հ.-ե. \*mel- «մանրել, փշրել, ջարդել, աղալ» նախաձևից (ՀԱԲ, հ. 3, էջ 225-226): Հետևաբար բառը կունենա *ptq-ար* <\*(s)kei-g'h-<\*(s)keu- «կտրել, ճեղքել» ստուգաբանությունը. \*g'h-ն աճական է, -ար-ը՝ աճանց (որի մասին տե՛ս վերը՝ *ճնարք* բառի առիթով): Կա նաև *քոզառ* «խոշոր հարդ» ձևը (ՀԼԲԲ, հ. Է, էջ 138):

*Քեղել* «1. փրցնել, պոկել, քաղել, 2. սկրթել, հանել» (որից՝ *քեղպել* «զոխը մատներով կեղևել՝ կլպել», *քեղրդել/քեղրթել* «սկրթել, հանել», *քեղքեղվել* «պատառոտվել, ճղճղվել, ճաթոտել») բառը ((ՀԼԲԲ, հ. Է, էջ 121, Մալխ., հ. 4, էջ 568) չկա ստուգաբանական բառարաններում: Սա ակնհայտորեն *քաղել* «ընտրովի պոկել՝ հանել՝ հավաքել» (\*)(s)kəl- <\*(s)kel- «կտրել, ճեղքել») բառի (ՀԱԲ, հ.

<sup>22</sup> Հմնտ. *քոզ* «զոմի բաժանմունք գառների համար» (ՀԼԲԲ, Է, 138), *քիզ* «գառների ոչխարներից առանձնացնելու տեղ (փարախի կամ գոմի հատված)» (Ճահուկ-Վայքի միջբարբառ) (աղբյուրը՝ բարբառագետ Արտակ Վարդանյան):

4, էջ 541, ՀՄԲ, էջ 773) ձայնդարձային տարբերակն է: Ուստի սրա ստուգաբանական բանաձևը կլինի՝ *քեղ-ել* <\*(s)ke-l- <\*(s)keu- «կտրել, ճեղքել»։ \*l-ն աճական է: Այս բառի արմատական տարբերակը կարելի է համարել *քեղ* «գոխավոր ուտելի բույս», այսինքն՝ «բույս, որ ուտում են քեղելով» (ՀՄԲ, հ. 4, էջ 568-569, ՀՄԲ, էջ 780, Մալխ., հ. 4, էջ 568) անհայտ ծագման համարվող բուսանունը:

*Կասուլ* (*կասել, կալսել*) «ցորենը ծեծել՝ մանրել՝ ջարդել՝ կամնել» բառը Աճառյանը համարել է հավաստի ստուգաբանություն չունեցող (ՀՄԲ, հ. 2, էջ 532): Գ. Ջահուկյանը համարել է փոխառություն իրանական աղբյուրից (հմմտ. ավեստ. *kasu* «փոքր, չնչին», պարսկ. *kastan* «փոքրացնել, նվազեցնել, պակասեցնել»), սակայն հիշեցրել է, որ այս ստուգաբանությունը մերժել են Հյուբշմանը և Աճառյանը (ՀՄԲ, էջ 388): Նկատի ունենալով այս տարածայնությունը և իմաստից ելնելով՝ առաջարկում ենք *կասուլ* <\*(s)kə-k'- <\*(s)keu- «կտրել, ճեղքել» ստուգաբանությունը։ \*k'-ն աճական է: *Կալսել* տարբերակը հետևաբար առաջացել է *կալ(ատեղ)* բառի ազդեցությամբ (ՀՄԲ, հ. 2, էջ 532):

*Կասել* (*կասիլ*) «1. կանգ առնել, դադարել, 2. դանդաղել, հապաղել» (որից՝ *կասեցնել* «ետ պահել, խոչընդոտել, արգելել, խափանել, դադարեցնել») բառը Հ. Աճառյանը համարել է հավաստի ստուգաբանություն չունեցող (ՀՄԲ, հ. 2, էջ 531-532): Գ. Ջահուկյանը, հետևելով Բելլիին, համարել է փոխառություն իրանական աղբյուրից՝ \*kas- «փոքրացնել, նվազեցնել» <հ.-ե. \*kak'- (հմմտ. ավեստ. *kasu* «փոքր, չնչին», պարսկ. *kastan* «փոքրացնել, նվազեցնել, պակասեցնել»), սակայն հիշեցրել է, որ այս ստուգաբանությունը մերժել են Հյուբշմանը և Աճառյանը (ՀՄԲ, էջ 387): Այսպիսով՝ նա այս բառը փաստորեն նույնացրել է նախորդ *կասուլ* բառի հետ: Նույնացման առումով համաձայն լինելով Գ. Ջահուկյանի հետ՝

առաջարկում ենք նույն ստուգաբանությունը, ինչ *կասուլ* բառի համար: Իմաստային անցման տեսակետից նկատի ունենանք, որ «կանգ առնել, դադարել» իմաստը կարելի է մեկնաբանել որպես «ընթացքը կտրել՝ խափանել»:

*Կասկել* «1. (*բրբռ.*) ամուսնության օրենքը խախտել՝ պղծել, 2. (*արևմտհ.*) պոկել, կտրել, հոշել»<sup>23</sup> բառը Հ. Աճառյանը և Գ. Ջահուկյանը համարել են անհայտ ծագման (ՀԱԲ, հ. 2, էջ 535, ՀՄԲ, էջ 388): Սակայն նրանք նկատի չեն ունեցել այս բառի 2-րդ իմաստը: Հատկապես այդ իմաստից ելնելով՝ առաջարկում ենք *կասկ-ել* <\**կաս-կ-* <\*(s)kə-k'- <\*(s)keu- «կտրել, ճեղքել» ստուգաբանությունը. \*k'-ն նախալեզվյան աճական է, կ-ն՝ հետնախալեզվյան: Փաստորեն թե՛ իմաստով, թե՛ ձևով այս բառը կապվում է նախորդ երկու՝ *կասել*, *կասուլ* բառերի հետ:

*խոտել* «1. մերժել, արհամարհել, 2. խորշել, զզվել» (որից՝ *խոտան* «վատորակ, անպետք, անպիտան, պակասավոր, արատավոր, թերի, մերժելի») բառը Հ. Աճառյանը համարել է հավաստի ստուգաբանությունն չունեցող (ՀԱԲ, հ. 2, էջ 403): Գ. Ջահուկյանը գրել է՝ «հազիվ թե կապ ունենա հ.-ե. \*(s)k(h)ed- «ճեղքել, ցրել» արմատի հետ՝ ֆիզիկական իմաստի անցումով հոգեկանի» (ՀՄԲ, էջ 343): Գ. Ջահուկյանի հայտնած կասկածը փարատելու և այդ ստուգաբանությունը հաստատելու համար որպես իմաստային անցման զուգահեռ հիշենք մ.ս.գերմ. brak (և դրանից փոխառյալ ռուս., լեհ., բուլղ. և ն Ծրակ) «խոտան» բառը, որ ծագել է հ.-ե. \*bhreg- «կտրել, կոտրել» արմատից (ՎԲՌ, Ծրակ): Նույն *խոտ-* (<\*(s)kho-d-) արմատից պիտի դուրս բերել նաև *խոտուց* (*խոտոց*) «1. ողնուղեղ, ծուծ, 2. (*բրբռ.*) կտոր, հատված, մաս» բառը, որ մինչ այժմ համարվել է անհայտ ծագման (ՀԱԲ, հ. 2, էջ 403-404, ՀՄԲ, էջ 343), ինչպես

<sup>23</sup> Իմաստի համար տե՛ս ԱՀԲԲ, էջ 697:

նան *խոտոցել* «դանակով կտրտել» (ՀԼԲԲ, հ. Բ, էջ 359) բայը: Սրանց հետ, կարծում ենք, չպետք է շփոթել *խոտոր* «ծուռ, շեղ, թյուր» բառը, որի *խոտ-* արմատը թերևս կապված է վերոհիշյալին համանուն հ.-ե. \*(s)k(h)ed- «ծռել» նախաձևի հետ, չնայած Գ. Ջահուկյանը ավելի հավանական է համարել կապը \*(s)k(h)ed- «ճեղքել, ցրել» արմատի հետ (ՀՄԲ, էջ 343):

### Եզրակացություն

Այսպիսով՝ ներկայացված հայերեն մի շարք բառեր (*ջարդել, ջախել, ճոթ, ճոնդ, ճիւմ, ճումբ, ճութ, ճիռ, ճորճոփ, ծոպ, ծուպք, ծուփք, ծիւ (ծուէն), ծիւ «քակոր», ծլեպ, խծիպ, քցիւմ, քեցել, քեզ, քեզար, քեղել, կասուլ, կասել, կասկել, խտտել* և այլն) մինչ այժմ համարվել են կա՛մ հավաստի ստուգաբանություն չունեցող (անհայտ ծագման), կա՛մ փոխառություն այլ լեզվից: Հնչյունական, ձևային և իմաստային վերլուծությունների հիման վրա առաջարկվում են ստուգաբանության նոր վարկածներ, որոնց համաձայն՝ դրանք սերվում են հ.-ե. \*(s)keu- (<\*sek-) «կտրել, հատել, ճեղքել» արմատից: Դրանով իսկ նաև ծագումնաբանական համակարգային կապեր են հաստատվում հոդվածի սկզբում թվարկված հոմանիշների միջև:

### Օգտագործված գրականություն

Աղայան Է., Արդի հայերենի բացատրական բառարան, Ե., 1976:

Աղայան Է., Բառաքննական և ստուգաբանական հետազոտություններ, Ե., 1974:

Աճառյան Հ., Հայոց լեզվի պատմություն, հ. 2, Ե., 1951:

Աճառյան Հ., Հայերեն արմատական բառարան, հհ. 1-4, Ե., 1971-1979:

Բաղդադյան Ռ., Ադրբեջաներեն-հայերեն բառարան, Ե., 1987:

Զաքարյան Հ., «Ոստնաման» և «կաշի» նշանակող մի քանի բառերի ստուգաբանություն.- «Ջահուկյանական ընթերցումներ». ակադ. Գ. Ջահուկյանի ծննդյան 95-ամյակին նվիրված միջազգային գիտաժողովի նյութեր (խմբ.՝ Վ. Կատվայան), Ե., 2015, էջ 53-60:

Զաքարյան Հ., Ճ սկզբնահնչյունով մի քանի բառերի ստուգաբանություն.- «Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն. Գիտական աշխատություններ», 1-2 (22), 2019 (խմբ.՝ Ս. Հայրապետյան), Գյումրի, էջ 228-238:

Զաքարյան Հ., *Խխունջ, քրքիր, կոպիտ* և մի քանի այլ բառերի ստուգաբանություն.- «Աբեղյանական ընթերցումներ-2» հանրապետական գիտական նստաշրջանի հողվածների ժողովածու (խմբ.՝ Ա. Աբաջյան), Ե., ԵՊՀ հրատ., 2018, էջ 79-93:

Զաքարյան Հ., Ծ սկզբնահնչյունով մի քանի բառերի ստուգաբանություն.- «Ջահուկյանական ընթերցումներ» (գիտական հողվածների ժողովածու) (խմբ.՝ Վ. Կատվայան), Ե., 2019, էջ 35-45:

Զաքարյան Հ., «Շառափ, ցողել, ծորալ» իմաստներով հայերեն մի քանի բառերի ստուգաբանություն.- «Ջահուկյանական ընթերցումներ», Ե., 2021, էջ 126-137:

Հայոց լեզվի բարբառային բառարան, հհ. Ա-Է, Ե., 2001-2012:

Մայխասեանց Ս., Հայերեն բացատրական բառարան, հհ. 1-4, Ե., 1944-1945:

Ջահուկյան Գ., Հայերեն ստուգաբանական բառարան, Ե., 2010:

Ջահուկյան Գ., Հայոց լեզվի պատմություն: Նախագրային ժամանակաշրջան, Ե., 1987:

Սուրիասյան Ա., Հայոց լեզվի հոմանիշների բառարան, Ե., 1967:

Nikolaev S., Database of Indo-European etymology.- <http://starling.rinet.ru/cgi-bin/response.cgi?root=config&morpho=0&basename=\data\ie\piet&first>

Pokorny J., Indogermanisches etymologisches Wörterbuch. Bern-München, 1959.- <http://dnghu.org/indoeuropean.html>

Wiktionary / <https://en.wiktionary.org/wiki>

Викисловарь / <https://ru.wiktionary.org/wiki>

Джаукян Г., Очерки по истории дописьменного периода армянского языка, Е., 1967.

Турецко-русский словарь, М., 1977:

**Zakaryan Hovhannes- Etymology of Several Armenian Words Meaning “Splinter, Chip, Piese, Part”.**- The article, dwelling upon phonetic, morphemic and semantic analyses, puts forward the following new etymologies of words that all come from the PIE root \*(s)keu- “to cut, to split” < \*sek- “to cut, cut off, sever”: *ջարդ-ել* “to break, to smash, to hack” < \*sk<sup>w</sup>hə-r-η-, *ջախ-ել* “to destroy, to smash, to wreck, to break up” < \*sk<sup>w</sup>hə-kh-, *ճոթ* “1, piece, part, 2, edge” < \*sk<sup>h</sup>o-t-, *ճիւղ* “sod, divot” < \*sk<sup>h</sup>ē-m-, *ճուղ* “bunch” \*sk<sup>h</sup>ō-t-, *ճիւղ* “small bunch” < \*sk<sup>h</sup>ē-r-s-, *ծույ* “fringe” < \*(s)k<sup>h</sup>o-b-, *ծիւ* (*ծուկ*) “scrap, shred” < \*(s)k<sup>h</sup>ēu-, *քց-իւղ* “hangnail” < \*(s)kē-k’s-, *քել-ել* “to peel” < \*(s)ke-l-, *կաւ-ուլ* “chop the wheat” < \*(s)kə-k’-, *կաւ-ել* “cease, stop” < \*(s)kə-k’-, *խոտ-ել* “reject” < \*(s)k<sup>h</sup>o-d- etc.

**Keywords:** Proto-Indo-European, Vowel Gradation, Root Variants, Initial Sound, Determinative, S-mobile, Affix.

Hovhannes Zakaryan, PHD in Philology, the Head of Linguistic Department of "Tatev" Center of Research and Education.

**Закарян Оганес-Этимология некоторых армянских слов, обозначающих “часть, обломок, осколок”.**- В настоящей статье на ос-

нове фонетического, словообразовательного и семантического анализов предлагаются следующие новые этимологии слов, которые все происходят от ПИЕ корня \*(s)keu- “резать, раскалывать” <\*sek- “отрезать, разорвать”: ջարդ-ել “сломать, разбить” <\*sk<sup>w</sup>hə-r-η-, ջարդ-ել “крушить, громить, разбить” <\*sk<sup>w</sup>hə-kh-, ճկթ “1, кусок, часть, 2, край” <\*sk<sup>h</sup>o-t-, ճիւ “дёрн” <\*sk<sup>h</sup>ē-m-, ճկթ “гроздь, кисть” <\*sk<sup>h</sup>ō-t-, ճիւ “маленькая гроздь, кисть” <\*sk<sup>h</sup>ē-r-s-, ծնւ “бахрома” <\*(s)k<sup>h</sup>o-b-, ճիւ (ծնւ) “клочок, лоскуток” <\*(s)k<sup>h</sup>ēu-, քգ-իւ “заусеница” <\*(s)kē-k’s-, քել-ել “шелушить” <\*(s)ke-l-, կշու-նլ “нарезать пшеницу” <\*(s)kə-k’-, կշու-ել “перестать, прекратиться” <\*(s)kə-k’-, խլւ-ել “отклонять” <\*(s)k<sup>h</sup>o-d- и т. д.

**Ключевые слова:** праиндоевропейский язык, чередование, корневые варианты, начальный звук, детерминатив, s-mobile, аффикс.

Оганес Закарян, к.ф.н., руководитель лингвистического отдела Научно-образовательного комплекса "Татев".



**ՍՈՍՍՏԻԿ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐՈՎ ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ  
ԿԱՌՈՒՅՑՆԵՐԻ ՏԻՊԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ\***

DOI: 10.54503/2738-277X.2024.1(21)-40

**Խաչատրյան Լալիկ**

բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր  
Խ.Աբովյանի անվան ՀՊՄՀ,

Լեզվաբանական հետազոտությունների  
լաբորատորիայի ղեկավար. [lingualal51@mail.ru](mailto:lingualal51@mail.ru)

**Միրումյան Մարգուշ**

մանկավարժական գիտությունների թեկնածու,  
Խ.Աբովյանի անվան ՀՊՄՀ,

մայրենիի և նրա դասավանդման մեթոդիկայի  
ամբիոնի դոցենտ. [mirumyan1951@mail.ru](mailto:mirumyan1951@mail.ru)

**Բանալի բառեր.** սոմատիզմ, վերլուծական, համադրական, տիպաբանություն, նախդիր, բայահիմք, շարադասություն:

**Նախաբան**

Լեզվի համաժամանակյա կտրվածքում որոշակի բառիմաստով և քերականական արժեքով բնորոշվող լեզվական միավորները լեզվի տարժամանակյա կտրվածքում կարող են ենթարկվել իմաստակառուցվածքային տարաբնույթ փոփոխությունների, որոնց հետևանքով փոխվում են նաև նրանց բառական ու քերականական իմաստները, իսկ որոշ միավորներ էլ կարող են վերաի-

---

\* Ներկայացվել է 11.05.2024, գրախոսվել՝ 26.05.2024:

մաստավորվել: Այդ կարգի փոփոխություններն ունեն որոշակի լեզվական-տրամաբանական հիմքեր, որոնց մեջ կարևորվում է փոխակերպման գործոնը:

Փոխակերպման գործընթացի ուսումնասիրությունը բացահայտում է սերման որոշակի կաղապարներ, որոնք վերացարկված մտածողության տարբեր աստիճանների դրսևորումներ են: Սերման կաղապարներ են համարվում միջուկային նախադասություններն ու բառակապակցությունները, որոնցից սերում են բաղադրյալ բառերի կաղապարները՝ որպես արդյունք նախադասություն-բառակապակցություն փոխակերպական գործընթացի<sup>1</sup>: Փոխակերպման գծային պլանում բառակապակցությունները բնութագրվում են երկակի դերով. նախ՝ որպես միջուկային նախադասությունների փոխակերպման հետևանք, երկրորդ՝ որպես սերող կաղապարներ՝ բաղադրյալ բառերի ձևավորման համատեքստում<sup>2</sup>: Բառակազմական մակարդակում կատարված փոփոխությունների համատեքստում որոշակի դեր ունի հինհայերենյան վերլուծական բարդությունների փոխակերպումը համադրական կառուցատիպերի:

### **Վերլուծական կապակցություններից անցում համադրական բարդությունների**

Փոխակերպման յուրահատուկ գործընթաց են ապրել որոշ բայական կապակցություններ կամ բայակապակցություններ, որոնց «բաղադրամասերը ժամանակի ընթացքում միաձուլվում են

<sup>1</sup> Գ. Զահուկյան, *Ժամանակակից հայերենի տեսության հիմունքները*, Ե., 1973, էջ 565:

<sup>2</sup> Սույն հոդվածում բաղադրյալ բառեր հասկացության շրջանակում քննելու ենք միայն համադրական բարդությունների առաջացումը վերլուծականությունից համադրականության անցման ուղիով:

և դառնում իբրև ամբողջական՝ բաղադրյալ բայեր, օրինակ՝ *գործածել* (հին՝ ի գործ ածել), *ակնարկել* (հին՝ ակն «աչք» և արկանել «ձգել, զցել, նետել»), *ունկնդրել* (հին՝ ունկն «ականջ» և դնել «դնել»), *ակնածել* (հին՝ ակն ածել), *քարկոծել* (հին՝ «քարով կոծել՝ ծեծել»), *մտածել* (հին՝ զմտաւ ածել») և այլն»<sup>3</sup>:

Ինչպես ցույց են տալիս վկայված օրինակները, որոշ բայական բառույթներ ժամանակի ընթացքում վերլուծականությունից անցել են համադրականության: Հայ քերականագիտության մեջ վերլուծական կամ հարադրական բայերը որոշակիորեն տարբերակվում են համադրական կամ ձույլ բարդություններից: Թեև համադրական բարդության մի տեսակը՝ կցականը, և հարադրությունը համարվում են անիսկական բարդություն, սակայն որոշ հատկանիշներով կցական բարդություններն ավելի մոտենում են իսկական բարդություններին, որ ամենից առաջ արտահայտվում է նորանց ձևային դրսևորումներում: Իմաստային տեսանկյունից կցական բարդությունները չունեն իսկականների սերտությունը, ուստի և հեշտությամբ կարող են տրոհվել ըստ հիմնական բաղադրիչների՝ անկախ բառական շեշտով. այդ պատճառով էլ սրանք դասվում են անիսկական բարդությունների շարքը<sup>4</sup>:

Կցական բարդությունները բոլոր բարդությունների նման ունեն մեկ բառային արտահայտություն, մյուս կողմից՝ մյուս բարդություններից տարբերվում են նրանով, որ «այդ մեկ բառն ստացվում է բառերից կազմված կապակցություններից»<sup>5</sup>:

<sup>3</sup> Ա. Մուրվալյան, *Հայոց լեզվի դարձվածաբանություն և բայակազմություն*, Ե., 1959, էջ 94:

<sup>4</sup> Ա. Սքրահամյան, *Բայը ժամանակակից հայերենում*, գիրք Ա, Ե., 1962, էջ 163:

<sup>5</sup> Գ. Զահուկյան, Էդ. Աղայան և ուրիշներ, *Հայոց լեզու*, I մաս, Ա պրակ, Ե., 1980, էջ 429-443:

Ինչպես նշում է Ա.Աբրահամյանը, հարադրական բարդությունների նկատմամբ համադրական բառույթներն իրենց կազմության առանձնահատկություններով ավելի բարձր աստիճանի վրա են կանգնած. նրանց մեջ բայական իմաստի վերացարկումն ու քերականական ընդհանրացումը ավելի են աչքի ընկնում<sup>6</sup>:

Մ.Աբեղյանը հարադրական բայերից կցական բարդությունների առաջացման կապակցությամբ նկատում է, որ երբ հարադրական բայերի բներից նոր բառեր են կազմվում, վերջիններիս մեջ հարադիրն ու իր բայի բունը միացած իբրև մեկ բառ են գրվում, որովհետև բարդության երկրորդ անդամը չի գործածվում այն ձևով ու նշանակությամբ, որ ունի բարդության մեջ: Նա վկայում է հետևյալ օրինակները՝ *հանձն առնուլ* (գրաբար՝ յանձն առնուլ), բայց՝ *հանձնառու, վրեժ խնդրել, բայց՝ վրեժխնդիր, վրեժ առնել* (գրաբար՝ վրեժ առնուլ) *վրիժառու* և այլն<sup>7</sup>:

Էդ. Աղայանը, անդրադառնալով կցական բարդությունների բնորոշ գծերին, այն տեսակետն է հայտնում, որ դրանք ստացվում են ոչ թե բաղադրական հիմքերի, այլ զանազան կարգի բառակապակցությունների անդամների միավորումով, ըստ որում՝ կազմության (անդամների միավորման) եղանակն է կցումը (ազյուտինացիան)<sup>8</sup>: Հարադրություններից առաջացած բարդությունների կրցական տեսակի որոշելու համար Էդ. Աղայանն առաջարկում է բարդության բաղադրիչների անջատման հետընթաց քայլը, այսինքրն՝ եթե հնարավոր է բարդությունից «ստանալ» հարադրություն, ապա բարդությունը կցական է, իսկ եթե բարդությունները չենք կարող վերածել կապակցության (հարադրությունների կամ լրա-

<sup>6</sup> Ա.Աբրահամյան, նշվ. աշխ., էջ 158:

<sup>7</sup> Մ.Աբեղյան, *Հայոց լեզվի տեսություն*, Ե., 1965, էջ 174:

<sup>8</sup> Էդ. Աղայան, *Ընդհանուր և հայկական բառագիտություն*, Ե., 1984, էջ 274:

ցական բառակապակցությունների, հատվածական բարդությունների և այլն), դրանք այլևս չեն կարող դիտվել կցական բարդություններ, ինչպես՝ *հանձնարար, հուշարար, ակնկալել, օրենսդիր, կիրառել* և այլն<sup>9</sup>:

Չխորանալով երևույթի տարատեսակ դրսևորումների նկարագրության մեջ՝ փորձենք ցույց տալ հին հայերենի վերլուծական կառույցների անցումը համադրական բարդությունների՝ երևույթը քննարկելով ինչպես գրաբարի գոյավիճակում, այնպես էլ գրաբարդի հայերեն տարժամանակյա դիտվածքում: Քննության նյութ ենք դարձնելու այն անվանաբայական հարադրությունները, որոնց արտահայտության պլանում առկա են *սոմատիկ բաղադրիչներ*:

Սոմատիզմները մարմնի մասերի (անդամների) նյութական կամ վերացական անվանումներ են, որոնք զգալի տեսակարար կշիռ ունեն ազատ և կայուն կապակցությունների արտահայտության պլանում որպես կառույցի բաղադրիչներ՝ հանդես գալով ուղիղ և փոխաբերական իմաստներով<sup>10</sup>: Հին հայերենում, որպես բայական հարադրությունների անվանական բաղադրիչներ, հանդես են գալիս *ակն, արիւն, ձեռն, ունկն, ծունր, միտք*<sup>11</sup>, *դէմք* և այլ

<sup>9</sup> Նույն տեղում: Այդ նույն միտքը նույն օրինակներով վկայում է նաև Հ. Պետրոսյանը (**Հ. Պետրոսյան, Հայերենագիտական բառարան**, Ե., 1987, էջ 139-140): Նկատենք սակայն, որ այդ նույն օրինակները Մ. Աբեղյանը վկայում է որպես գրաբարյան հարադրություններից առաջացած *կցական բարդություններ*. հարցն այդ բառերն արժևորելու տարժամանակյա հայեցակետն է: Այդ բառերը հին հայերենում (գուցե նաև՝ նախագրային շրջանում) արդեն հարադրություններից առաջացած կցական բարդություններ են, ուստի կարող է թյուրըմբռնում առաջանալ, եթե գրաբարյան բարդությունները գնահատում ենք արդի հայերենի բարդություններին ներկայացվող չափանիշներով:

<sup>10</sup> **Стариченко В. Д., Большой лингвистический словарь**, Ростов-на -Дону, 2008, էջ 601-602.

<sup>11</sup> *Շունր* և *միտք* բառերը պայմանականորեն ենք զետեղում սոմատիզմների շարքում:

բառեր: Մենք նկատի ունենք հենց այդ սոմատիզմները, քանի որ նրանցով ձևավորված բայական հարադրություններն են բաղադրիչների ձուլման ճանապարհով վերածվել կցական բարդությունների: Ընդ որում՝ վերլուծականությունից կցականության անցումը կարելի է դիտարկել ինչպես գրաբարի մակարդակում (համաժամանակյա հայեցակետ), այնպես էլ գրաբար-արդի հայերեն կտրրվածքում (տարժամանակյա հայեցակետ):

Ձևակազմական և իմաստափոխական այդ գործընթացները կատարվել են որոշակի եղանակներով. գործընթացների ժամանակ տեղի են ունենում հետևյալ փոփոխությունները, ինչպես՝ նախդիրների անկում, բայահիմքի փոփոխություն, բայածանցի անկում, շարադասական դիրքի փոփոխություն, շեշտի դիրքի փոփոխություն, ինչպես նաև տարբեր գործոնների համակցում և այլն:

Դիտարկենք այդ եղանակներն առանձին-առանձին:

**Ա) Նախդիրների անկում-** ժամանակի ընթացքում բառակապակցության արտահայտության պլանում նախդիրները կորցնում են գործառական դերը և դուրս են գալիս նրա կառուցվածքից, ինչպես *ի մտի դնել- մտադիր, մտադրվել, ի գործ ածել -գործածել, ի թօթափել ական կամ յական թօթափել-ակնթարթ* և այլն:

Երևույթը դիտարկենք լեզվական փաստերի շրջանակում:

*Ի դիմի հարկանիլ* սոմատիզմով հարադրությունը հին հայերենում նշանակում է «մեկին դեմ կանգնել, հակառակ լինել, հաղթահարել», հմմտ. Այր ամպարիշտ՝ յանդգնութեամբ *հարկանի ի դիմի*, իսկ ուղիղի ինքնին իմանայ զճանապարհս իւր (Առակ, ԻԱ, 29): Եւ զիա ղո կարիցէք *ի դիմի հարկանել* միում ումէք յաշխարհակալաց ծառայից տեառն իմոյ (Եսայի, ԼԶ, 9): Որում *ի դիմի հարեալ* վանէ (Խոր., 46):

Նախդրի անկման հետևանքով արդի հայերենում ունենք *դիմահար* համադրական կազմությունը՝ «դեմ առ դեմ բախվող, դեմքին՝ դիմացը խփող՝ հարվածող»: Հմմտ. Նա իրեն նետեց լռած հրանոթի հետևը և դիմահար կրակով սկսեց ոչնչացնել իր վրա եկող գերմանական տանկերը (ՎԱ, ԺՀԼԲԲ):

Գրաբարում *ի թօթափել ական* կամ *յական թօթափել* նշանակում է «մի ակնթարթում, ժամանակի փոքր՝ աննշան հատվածում», ինչպես՝ Ջհարկ քնոյ յոտանաւոր տքնութեան *ի թօթափել ական* վճարէր (Կոր., 38): *Յական թաւթափել...* աշխարհն Աղուանից մարգարէագէտք... լինէին (Կոր., 70): Նախդրի անկման եղանակով հարադրության բաղադրիչները հանդես են գալիս միաձույլ՝ համադրական կազմությամբ՝ *ակնթարթ*: Նշանակում է «աչքը մի անգամ թարթելու տևողությունը», հմմտ. Գյուղը դատարկվեց մի ակնթարթում (ՀԹ, 2, 397):

**Բ) Բայահիմքի փոփոխություն-** Եթե հարադրության բայական բաղադրիչն անկանոն բայ է, ապա համադրական բարդության պլանում հանդես է գալիս նրա երկրորդ հիմքը՝ որպես բառակազմական բաղադրիչ, ինչպես՝ *ակն ունիմ – ակնկալել, ըմպել զարին – արյունարբու, ձեռն տալ – ձեռնտու*:

Գրաբարում *ակն ունիմ* հարադրությունը նշանակում է «հույս ունենալ, մի բանի հույսով սպասել»: Հմմտ. Միանգամայն և *ակն ունէր* դիւթութեամբ վիկութեան իւրոյ կենդանացուցանել զԱրայն (Խոր., 50): Նմին *ակն ունիմք* (Եղ., 87): Գրաբարում գործածվում է նրա համադրական կազմությունը՝ *ակնունիմ* «աչքերն ուղղել հույսին. բարու կամ չարի, ակնկալությամբ սպասել». Դու մի՛ *ակնունիցիս* ողջանդա՛մ բարեմիտ ապրել (Բ Մակ., 7, 19):

Գրաբարում կազմվել է *ակնկալել* համադրական բարդությունը՝ *ունիս* բայի երկրորդ հիմքի բառակազմական արժեքով՝ *կալ*: Հմմտ. *Ակնկալեսցի* իբրև զանձրև բարբառ իմ (Օր., ԼԲ, 2):

Գրաբարի *ակնկալել* համադրական բարդությունը փոխանցվել է արդի հայերենին բառական նույն իմաստներով, հմմտ. Եվ սրանցից ես *ակնկալում եմ* այդ շնորհը... Ունայն է հույսդ և իզուր ջանքդ (ԴԴ, ԺՀԼԲԲ):

*Արին* բաղադրիչով գրաբարում ունենք *ըմպել զարին* բայական հարադրությունը, որն ուղղակի իմաստով նշանակում է «արյուն խմել՝ ըմպել», հմմտ. Եւ ձեռն պարսկական ոչ վաստակեր զբազմախողխող երկաթն *արեամբ արբուցանել* (Խոր., 290): *Արբցեն զարին* նոցա իբրև զգինի (ՆՀԲ, 1, 764):

Գրաբարում հարադրության բայական բաղադրիչի երկրորդ հիմքի (արբ) միջոցով կազմվել է *արինարբու* (ածանցավոր) բառը՝ «արյունախում, արյունահեղ, փխբ. գազան» իմաստներով: Հմմտ. Իբրև զգազանս շաղղակերս և *արինարբուս* (Եղ., 165): Որոց զօրագլուխ էր *արինարբու* և այսակիրն Մահմատ (Ղեւ., 19): Արդի հայերենում *արյունարբու* բառը գործածվում է գրաբարյան իմաստներով՝ «արյունուշտ, արյունախում, գազանաբարո», ինչպես՝ Կուրծք տվեցին գորքերին *արյունարբու* արքայի (ԵԶ, ԺՀԼԲԲ):

*Ձեռն տալ* հարադրությունը գրաբարում նշանակում է «օգնել, սատարել»: Հմմտ. *Ձեռն տուր* մեզ, եւ դադարեսցէ գունդս մոլեկան ի կոտորածի քաղաքիս (Ա Մակ., ԺԱ, 50): Բայահիմքի փոփոխության հետևանքով (տու) ձևավորվել է *ձեռնտու* համադրական կազմությունը՝ «նպաստավոր, նպատակահարմար, շահավետ, փխբ. օգնող, նպաստող» իմաստներով: Հմմտ. *Ձեռնտու* գործարք՝ առաջարկ:



**Գ) Բայածանցի անկում**-Վերլուծական կապակցության փոխակերպման ժամանակ բայական բաղադրիչի՝ տևական կերպի -ան- ածանցը կարող է ընկնել, ինչպես՝ *ձեռն հասանել – ձեռնհաս, ձեռն արկանել – ձեռնարկել*:

*Ձեռն* բաղադրիչով գրաբարում հանդիպում են որոշակի հարադրություններ և համատիպ համադրական բարդություններ:

*Ձեռն հասանել* հարադրությունը նշանակում է «ձեռքը մի բանի հասնել», որից *ձեռնհաս* բարդությունը՝ «ձեռներեց, կարող, ունակ» իմաստներով, հմմտ.՝ Ունևորաց և *ձեռնհասից* ամենայն մարդիկ իցեն սիրելիք (ՆՀԲ, 2, 154): Իբրև այլ ոչ ինչ էր *ձեռնհաս*, փախստական անկաներ առ արքայն Քուշանաց (Եղ., 141):

Արդի հայերենում *ձեռնհաս* բարդությունը պահպանել է գրաբարյան իմաստը, հմմտ. *Ձեռնհաս* մարդկանց միջոց տան ժողովելու (ՀԹ, 6, 66):

*Ձեռն արկանել (ի գործ)* հարադրությունը գրաբարում նշանակում է «ձեռնարկել, սկսել», հմմտ. Այն ինչ լինէր նոցա զանաչառ զանողորմ *ձեռն* պատերազմի *ի գործ արկանել* ( Բ Մակ., Ժ, 29): *Քանզի ձեռն արկանել* և ունել ոչ կարեր ... սկսաւ այնուիետև յառաջ կոչել զկրսերս յաւագաց (Եղ., 16):

Բայական այդ հարադրությունից գրաբարում ունենք հետևյալ համադրական բարդությունները՝ *ձեռնարկ*՝ «մի գործ ձեռնարկելը» և *ձեռնարկել*՝ «ձեռնամուխ՝ ձեռներեց լինել» իմաստներով<sup>12</sup>. Հմմտ. Խորհուրդ կրկին, *ձեռնարկ* վերստին (Նար., ըստ ՆՀԲ): Ի պատերազմիլ ընդ նոսա *ձեռնարկեաց* (Ա Եզր., Ա, 27):

Արդի հայերենում *ձեռնարկ* համադրական բարդությունը ձեռք է բերել նոր իմաստավորում՝ «դասագիրք, ուսումնաօժանդակ

<sup>12</sup> Փոխաբերական իմաստով նշանակում է նաև «ստորագրություն, կնիք»:

նյութերի ժողովածու»։ հմմտ. Ժամանակակից բուհական համակարգին անհրաժեշտ են նոր ուսումնական *ձեռնարկներ*։

*Ձեռնարկել* կցական բարդությունն ընդլայնել է գրաբարյան իմաստները և ձեռք է բերել «մի բան՝ նոր գործ սկսել» նշանակությունը, ինչպես՝ Մի շարք ուսումնասիրությունների *ձեռնարկել*՝ երկիրը, ժողովուրդը, գրականությունը .... (ՀԹ, ԺՀԼԲԲ)։

**Դ) Շարադասական դիրքի փոփոխություն-** վերլուծական կառույցների բաղադրիչների դիրքի փոփոխությամբ ձևավորվում է համադրական բարդություն, ինչպես՝ *դնեմ գձեռն -ձեռնադրել, հեղուլ գարին* - *արյունահեղ*։

*Դնեմ գձեռն* (ի վերայ ուրուք) հարադրությունը գրաբարում նշանակում է «օրհնել, հոգևոր աստիճան տալ, մկրտել, ձեռնադրել»։ Հմմտ. Ջերիցուրեան *ձեռն դնեմ ի վերայ քո* (Բուզ., 226)։

Այդ հարադրությունից գրաբարում առաջացել է *ձեռնադրել*՝ համադրական բարդությունը՝ պահպանելով հարադրության բառական նշանակությունը։ Հմմտ. *Ձեռնադրեցին* նոցա ըստ եկեղեցւոյ՝ երիցունս (Գործ., 14, 22)։

Արդի հայերենում *ձեռնադրել* համադրական բարդությունը գործածվում է գրաբարյան իմաստով ու բառական արժեքով, ինչպես՝ Եթե *չձեռնադրեք*, կթուրքանանք (ՀԹ, 6, 58)։

*Հեղուլ գարին* նշանակում է «սպանել, կոտորել», որ պայմանավորված է *արին* բառի փոխաբերական իմաստով՝ «սպանություն, կոտորած»։ Հմմտ. Որ *հեղուլ գարին* մարդոյ փոխանակ արեան նորա (Մնն., Թ, 6)։ *Հեղումն արեան* իւրեանց եղև ի պարծանս վերնոցն և ներքնոց (Եղ., 113)։ Մի լիցի պղծութիւն և գայթակղութիւն ի սրտի Տեառն իմոյ *հեղուլ գարին* արդար տաբապարտուց (Ա Թագ., ԻԵ, 31)։ Հարադրության բաղադրիչների (բայական բաղադրիչի բայահիմքի) ձուլման ճանապարհով գրաբարում առա-

ջացել է *արհունահեղ* բառը՝ «մարդասպան» իմաստով, հմմտ. Եւ խնդրեցից ի քէն զվրեժ շնացելոյ և *արհունահեղի* և եղից զքեզ յարին քո (Եզեկ., ԺԶ, 38): Արդի հայերենում, բառիմաստի ընդլայնման գործոնով պայմանավորված, *արյունահեղ* բառը ձեռք է բերել նաև «արյունալի, արյունոտ» հատկանշային իմաստներ, ինչպես՝ *Արյունահեղ* պատերազմ (Մամուլ):

**Ե) Շեշտի փոփոխություն**-վերլուծականությունից համադրական կառուցատիպի են անցնում այն կապակցությունները, որոնց անվանական բաղադրիչը զրկվում է բառային շեշտից, ինչպես՝ *ակն ածել -ակնածել, ծունր դնել- ծնրադրել*:

Դիտարկենք այդ սոմատիզմներով կազմված հարադրությունների գրաբարյան իմաստներն ու դրանցից մակաբերված բարդությունների իմաստագործառական արժեքներն ընդհանուր հայերենում:

*Ակն* սոմատիկ բաղադրիչով գրաբարում հանդիպում են այնպիսի հարադրություններ, որոնք արդի հայերենում վերածվել են կցական բարդությունների:

*Ակն ածել* «պատկառել, զգուշանալ. վախենալ», հմմտ. Սաւուդ ակն ածէր յերեսաց նորա (Ա Թագ., ԺԸ, 15): Թագաւորեցոյց .... զԱրշակ, *ակն ածելով* ի զօրացն Հայոց (Խոր., 277): Գրաբարում գործածվում է նաև համադրական կազմությունը՝ «խնամք՝ հոգ տանել» լրացուցիչ իմաստով. Տեսից զնա և ակնածեցից ի վերայ նորա (ՆՀԲ, 1, 24): Արդի հայերենում *ակնածել* համադրական բարդությունը հիմնականում պահպանել է գրաբարյան հարադրութան իմաստները՝ «պատկառել, ակնածանք տածել, քաշվել», հմմտ. Ատոմը *ակնածեց* ակամա՝ տեսնելով իր առջև անձնվեր մարդկանց (ԴԴ, ԺՀԼԲԲ):

*Ծունր* բաղադրիչով գրաբարում ունենք *ծունր դնել* հարադրությունը՝ «ճնկի իջնել՝ աղոթելու, երկրպագելու», ինչպես՝ Եւ երիս ժամս յաւուր *դնէր ծունր*, և կայր յաղօթս (Դանի, 6, 10): *Եղ ծունր*, աղաղակեաց ի ձայն բարձր. Տէ՛ր, մի՛ համարիր դոցա զայս մեղս (Գործ., Է, 59):

Հարադրության բաղադրիչների ձուլման ճանապարհով արդի հայերենում ունենք *ծնրադրել // ծնրադնել* համադրական կազմությամբ բայական տարբերակները և *ծնրադիր* մակբայը: *Ծնրադրել* կցական բարդությունն արդի հայերենում բազմիմաստ բառ է և խոսքում հանդես է գալիս ուղղակի և փոխաբերական իմաստներով. 1. Աղոթքի՝ աղերսանքի համար ծունկի իջնել՝ գալ. «Ավե Մարիան» երկրպագող երաժշտասեր մի մուսուլման երգը լսելուց հետո ամենևին էլ կաթոլիկ եկեղեցում *ծնրադրելու* մղում չի ունենա (Մամուլ): 2. փխբ. Ծնկի իջնելով՝ ողջունել կամ հարգանք մատուցել. Այլասերիլ կոչեցեք զայն, եթե կը փափագիք, բայց չեք կրնար չի *ծնրադրել* անոր առջև (ԳԶ, ԺՀԼԲԲ): 3. փխբ. Պատել, փռվել, տարածվել. *Ծնրադրել է* խավարը խոժոռ Աղոթարարի ջերմեանդությամբ (ՊՄ, Դ, 209):

*Ծնրադիր* բարդությունն ունի հատկանշային արժեք և նշանակում է՝ 1. ծնկների վրա իջած, ծնկաչոք (մկբ.)- Բոլորը *ծնրադիր* համբուրում են այդ մի բուռ հողը (ԱԻ, ԺՀԼԲԲ): 2. փխբ. ծնկաչոք կատարվող՝ կատարված (ած.)- Մահ պետք է համասփռենք հոն, ուր մեր ստրուկի *ծնրադիր* պաղատանքները չի հասան (Ս, ԺՀԼԲԲ):

*Ունկն* սոմատիկ բաղադրիչով գրաբարում հանդիպում է *ունկն դնել* հարադրությունը՝ «ականջ դնել, լսել» իմաստներով: Հմմտ.՝ Լուարուք ձայնի իմում, կանայք Ղամեքայ, և *ունկն դիր* բանից իմոց (Օնն., Դ, 23): Մառա *ունկն դնէր* առ դրան խորանին (Օնն.,

ԺԸ, 10): Այդ հարադրությունից բաղադրիչների միաձուլման եղանակով գրաբարում ունենք *ունկնդիր* բարդությունը («լսող, հնազանդ, աշակերտ, ատենակալ») և *ունկնդիր լինել* («լսել, ունկնդրել, հնազանդ լինել, ուշադրություն դարձնել») հարադրությունը: Հմմտ. Ամենայն ազինք ի տան թագաւորին *ունկնդիր* են հրամանաց թագաւորին (Ա Մակ., Բ, 19): Քննեսցի *յունկնդրացն* յատենի (ՆՀԲ, 2, 551): Եւ *ունկնդիր եղն* Աբրամ ձայնի Սարայի (Օնն., ԺԶ, 2): *Ունկնդիր լիցիս* պատուիրանաց նորա (Ելք, ԺԵ, 26):

Արդի հայերենին փոխանցվել են գրաբարյան *ունկնդիր*<sup>13</sup> և *ունկնդրել* համադրական կազմությունները՝ ընդլայնելով բառական իմաստները: Հմմտ.՝ *Ունկնդիր*- 1. Մեկի խոսքերը՝ երգը՝ նվագը լսող. Այնինչ բնության զվարթ համերգի *Ունկնդիրն* անխոս, հավիտենական, Ժայռը մտախոհ՝ իր մոայլ մտքի հետևից ընկած՝ լսում է նրան (ՀԹ, 1, 51): 2. Բուհական համակարգի ուսանող՝ ազատ կարգավիճակով. Գեղեցիկ շարասյուն կազմած՝ անցնում են զինվորական ակադեմիայի *ունկնդիր* սպաները (Մամուլ): 3. Հրապարակային դասախոսություն լսող. Ջեկուցողի միալար ձայնից կախվում էին *ունկնդիրների* գլուխները (ԱԲ, ԺՀԼԲԲ):

Արդի հայերենում *ունկնդրել* համադրական կազմությունը պահպանել է գրաբարյան *ունկնդիր լինել* հարադրության բառական իմաստը, հմմտ. 1. Լսել, ականջ դնել. Եվ լուսինն, աստղերն, ամպեր խմբովին, *Ունկնդիր էին* նրա սուրբ երգին (ՀԹ, 1, 272):

Հին հայերենի *դէմք* անեզական գոյականի արմատի կրրկնությամբ և *առ* - նախդրով ունենք *դէմ առ դէմ* վերլուծական բարդությունը՝ «երես առ երես, դեմ հանդիման» իմաստներով: Հմմտ. *Դէմ առ դէմ* եկեալ պատերազմի (ՆՀԲ, 1, 611)

<sup>13</sup> Արդի հայերենում *ունկնդիր* բառի իմաստային կառուցվածքից դուրս է եկել «ատենակալ» իմաստը. տեղի է ունեցել բառիմաստի նեղացում:

Բաղադրիչների շեշտի փոփոխության հետևանքով արդի հայերենում ունենք *դեմառդեմ* համադրական կազմությունը՝ նախնական բառիմաստներով, ինչպես՝ Վաղեմի ախոյանները հանկարծ իրար *դեմառդեմ* դուրս եկան (Մամուլ):

**է) Տարբեր գործոնների համակցում** - վերլուծականությունից համադրականության անցման պատճառ կարող են դառնալ միաժամանակ տարբեր գործոններ, ինչպես՝

ա) *Նախդրի և բայածանցի կորուստ - յակն արկանել - ակնարկել, յակն տեսանել - ակննատես:*

*Յակն արկանել* հարադրական բարդությունը գրաբարում նշանակում է «ուրիշի աչքի առաջ բերել»։ հմմտ.՝ Ջերեսս նոցա ինձ *յակն մի՛ արկանեք* (Ա Մակ., Է, 3):

Նույն հարադրությունից արդի հայերենում ունենք *ակնարկել* համադրական կազմությունը հետևյալ իմաստներով. 1. «հարևանցիորեն ասել՝ հասկացնել»։ Շատ ծածուկ հավաքում էին այն գումարը, որի մասին գիշերվա կերուխումի ժամանակ *ակնարկել էր* քաղաքից եկած «մեծավորը» (ԱԲ, ԺՀԼԲԲ): 2. «հայացքով կամ աչքի շարժումով նշան անել՝ մի բան ցույց տալ»։ Մայրը կրկին *ակնարկեց* որդուն, որ լռե (Ը, ԺՀԼԲԲ)<sup>14</sup>:

*Յակն տեսանել* - գրաբարում նշանակում է «աչքով տեսնել»։ օրինակ՝ Տարագիր առնե, *չտեսանե յակն* (ՆՀԲ, 1, 24):

Այս հարադրությունից ընդհանուր հայերենում ունենք *ակննատես* բարդությունը: Հմմտ.՝ Ահա ոչ ըստ կամաց արտօսրալիր ողբովք ճառագրենք զբազում հարուածս, յորում պատահեցաք և մեք իսկ *ակննատեսք* լինելով (Եղ., 5): Արդի հայերենում այն

<sup>14</sup> Ընդհանրապես, արդիհայերենյան համադրական կազմությունների բոլոր նշանակությունների մատուցումը նոր բան չի ավելացնում նրանց կառուցվածքային պլանին. հետևաբար բազմիմաստ բառերի դեպքում կրավարարվենք երկու-երեք իմաստային կիրառություն արձանագրելով:

բազմիմաստ բարդություն է, հմմտ. 1. «Որևէ դեպքի՝ իրողության ներկա գտնված անձ. վկա», օրինակ՝ Մի *ականատես* միշտ ավելացնում է: - Սարքովի էր բուրբը, Առաքելը սատանի հունար ունի (ԱԲ, ԺՀԼԲԲ): 2. «Սուկ դիտող». Այդ հոսանքը լարեց բազմությանը, որ *ականատեսի* դերից անցավ գործով մասնակցի դերին (ԴԴ, ԺՀԼԲԲ):

բ) Հոլովաձևի մթագնում և նախդրի անկում. *զմտաւ ածել-մտածել*: Զմտաւ ածել (ածել զմտաւ) հարադրությունը գրաբարում նշանակում է «մտորել, խորհել, մտքում դնել», ինչպես՝ Ո՞վ *ածիցէ զմտաւ* թէ զինչ կամիցի (Բմաստ., Թ, 13): Մինչդեռ նա զայս *ածէր զմտաւ* (ՆՀԲ, 2, 282):

Հարադրության բաղադրիչները, վերոնշյալ գործոններով պայմանավորած, միաձուլվել են, և վերլուծական բարդությունն արդի հայերենում ունի համադրական կառուցատիպ՝ տարբեր նըշանակություններով. 1. «Միտք անել, խորհել». Սենյակի մթնում խոր լռության մեջ այդ գիշեր երկար *մտածում էր* նա՝ Աչքերը հառած մութ առաստաղին (ԵԶ, ԺՀԼԲԲ): 2. «Որևէ հարցի շուրջ դատողություններ անել, կշռադատել». Երկու տարեց կին խելք խելքի տված *մտածում էին* գալիքի մասին (ԱԲ, ԺՀԼԲԲ) :

Ինչպես ցույց է տալիս լեզվական փաստերի տարժամանակյա քննությունը, հին հայերենի մի շարք վերլուծական բարդություններ (և ազատ կապակցություններ) արդի հայերենում հանդես են գալիս համադրական կառուցատիպերով. դա լեզվի միտումն է, որ բխում է լեզվի տնտեսման օրենքից:

### Եզրակացություն

Ինչպես գրաբարում, այնպես էլ լեզվի տարժամանակյա կրտրվածքում դիտարկելի է վերլուծական կառույցների փոխակեր-

պումը համադրական բարդությունների: Քննության ոլորտ են ընդգրկվել միայն անվանաբայական հարադրությունները, որոնց արտահայտության պլանում առկա են *սոմատիկ բաղադրիչներ*: Հին հայերենում, որպես բայական հարադրությունների անվանական բաղադրիչներ, հանդես են գալիս *ակն, ձեռն, ունկն, արիւն, դեմ(ք)* և այլ սոմատիզմներ: Այդ կարգի փոփոխություններն ունեն որոշակի լեզվական- տրամաբանական հիմքեր, որոնց մեջ կարելի է փոխակերպման գործոնը: Փոխակերպումն ընթացել է հետևյալ եղանակներով. փոխակերպման ընթացքում տեղի են ունենում հետևյալ փոփոխությունները.

- ա) նախդիրների անկում - ի մտի դնել – մտադիր, մտադրվել,
- բ) շեշտի փոփոխություն - ակն ածել -ակնածել, դեմ առ դեմ –դեմառդեմ,
- գ) բայահիմքի փոփոխություն – ակն ունիմ – ակնկալել, ըմպել գարին - արյունարբու, ձեռն տալ – ձեռնտու,
- դ) բայածանցի անկում - ձեռն հասանել – ձեռնհաս, ձեռն արկանել – ձեռնարկել,
- ե) շարադասական դիրքի փոփոխություն - դնեմ զձեռն – ձեռնադրել, հեղուլ գարին - արյունահեղ,
- զ) տարբեր գործոնների համակցում (նախդրի և բայածանցի անկում) - *յակն արկանել – ակնարկել* և այլն:

Հին հայերենի սոմատիկ բաղադրիչներով վերլուծական կառույցների տարժամանակյա տիպաբանության որոշումը հայերենի պատմական բառագիտության առանցքային հարցերից է:

#### Օգտագործված գրականություն

Աբեղյան Մ., Հայոց լեզվի տեսություն, Ե., 1965:

Աբրահամյան Ա., Բայը ժամանակակից հայերենում, գ. Ա, Ե., 1962:



Աղայան Էդ., Ընդհանուր և հայկական բառագիտություն, Ե., 1984:  
 Մուրվալյան Ա., Հայոց լեզվի դարձվածաբանություն և բայակազմություն, Ե., 1959:

Ջահուկյան Գ., Ժամանակակից հայերենի տեսության հիմունքները, Ե., 1973:

Ջահուկյան Գ., Աղայան Էդ. և ուրիշներ, Հայոց լեզու, I մաս, Ա պրակ, Ե., 1980:

### Համառոտագրություններ

ա) Աստուածաշունչ մատյան<sup>15</sup>

Ա Եզր.- Գիրք Եզրի Ա

Ա Թագ.- Թագաւորութեանց Ա

Առակ - Առակք Սողոմոնի

Ա Մակ.- Գիրք Մակաբայեցոց Ա

Բ Մակ.- Գիրք Մակաբայեցոց Բ

Գործ.- Գործք Առաքելոց

Դանի.- Դանիել

Եզեկ. Եզեկիել

Ելք - Ելք

Եսայ. Եսայի

Իմաստ.- Իմաստութիւն Սողոմոնի

Ծնն.- Գիրք Ծննդոց

Օր.- Երկրորդումն Օրինաց

<sup>15</sup> Աստուածաշունչ մատեան Հին և Նոր կտակարանաց, Հայաստանի Աստուածաշնչային ընկերութիւն, Մեծ Բրիտանիա, 1997:

## բ) Գրաբար մատյաններ

Բուզ.-Փաւստոսի Բիւզանդացոյ Պատմութիւն Հայոց, Թիֆլիս, 1913:

Եղ.- Եղիշէի Վասն Վարդանայ և Հայոց պատերազմին, Ե., 1957:

Խոր.- Մովսիսի Խորենացոյ Պատմութիւն Հայոց, Տփլիս, 1913:

Ղեւ.- Պատմութիւն Ղեւոնդեայ Մեծի Վարդապետի Հայոց, Ս. Պետերբուրգ, ի տպարանի Ի. Ն. Սկորոխոզովի, 1887:

Նար.- Գր. Նարեկացի, Մատեան ողբերգութեան, Ե., 2016:

## գ) Ժամանակակից հեղինակներ

ԱԻ – Ավ. Իսահակյան (ըստ ԺՀԼԲԲ)

ԱԲ – Ա. Բակունց (ըստ ԺՀԼԲԲ)

ԳԶ – Գր. Զոհրապ (ըստ ԺՀԼԲԲ)

ԴԴ – Դ.Դեմիրճյան (ըստ ԺՀԼԲԲ)

ԵԶ – Եղ. Զարենց (ըստ ԺՀԼԲԲ)

ՀԹ – Հովհ. Թումանյան, Երկերի ժողովածու, հհ. 1-4, Ե., 1969:

ՊՍ – Պ.Սևակ, Երկերի ժողովածու, հհ. 1-4, Ե., 1972-1973:

Ս. – Սիամանթո (ըստ ԺՀԼԲԲ)

ՎԱ – Վ. Անանյան (ըստ ԺՀԼԲԲ)

Ը. – Ընթացի (ըստ ԺՀԼԲԲ)

## դ) Բառարաններ

ԺՀԼԲԲ – Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան, Հայկական ՄՍՀ ԳԱ հրատ., հհ. 1-4, Ե., 1969 – 1980:

ՆՀԲ – Գ.Աւետիքեան, Խ.Սիւրմէլեան, Մ.Աւգերեան, Նոր բառգիրք հայկազեան լեզուի, Երկասիրութիւններից վարդապետաց, հհ. Ա-Բ, ի Վենետիկ, ի տպարանի Սրբոյն Ղազարու, 1836 -1837:

Պետրոսյան Հ., Հայերենագիտական բառարան, Ե., 1987:

Стариченок В. Д., Большой лингвистический словарь, Ростов-на-Дону, 2008.

**Khachatryan Lalik, Mirumyan Margush- Typology of Analytical Structures with Somatic Components in Armenian.**- Linguistic units, defined in a synchronous section of the language by their semantics and grammar, can undergo various semantic and structural changes in diachrony, as a result of which their lexical and grammatical meanings also change, and some units can be reinterpreted. Changes of this kind have their own linguistic and logical foundations, which emphasize the realities of transformation.

In the context of the changes that have occurred at the word-formation level, the transformation of Ancient Armenian complex analytical constructions into synthetic ones plays a certain role.

The article examines the transition of lexical units with an analytical structure to synthetic ones both in Ancient Armenian and in the history of the Armenian language. Nominative-verbal constructions that have somatic components are studied. The nominal components of these units are *ակն*, *ձեռն*, *ունկն*, *արիւն*, *դէմք* (*the eye, hand, ear, knee, blood, face*) etc. Such transitions have linguistic and logical foundations and are implemented according to certain word-formation types. During the transformation, the following changes take place:

- a) loss of prepositions: ի մտի դնել – մտադիր, մտադրվել,
- b) change of accent: ա՛կն ածել - ակնածե՛լ, դե՛մ առ դեմ – դեմառ-դե՛մ,
- c) replacing a verb in a phrase with a synonym: ակն ունիմ – ակնկալել, ըմպել զարիւն - արյունաբբու,
- d) loss of the verbal suffix: ձեռն հասանել – ձեռնհաս, ձեռն արկանել – ձեռնարկել,
- d) rearranging components: դնեմ զձեռն – ձեռնադրել, հեղուկ զարիւն - արյունահեղ,

е) loss of the noun prefix and a suffix of a verb (mixed type): յալկն արկանել – ալկնարկել, etc.

The definition of a typology of analytical structures with a somatic component in the history of the Armenian language is one of the key issues of its historical derivation.

**Keywords:** Somatism, Analytical, Synthetic, Typology, Preposition, Verb stem, Word order.

Khachatryan Lalik, Head of the Linguistic Research Laboratory of ASPU after Kh. Abovyan, Doctor in Philology, Professor.

Mirumyan Margush, PhD in Pedagogical sciences, Associate Professor of the department of Mother tongue and its teaching methodology of ASPU after Kh. Abovyan.

**Хачатрян Лалик, Мирумян Маргуш- Типология аналитических структур с соматическими компонентами в армянском языке.-** Языковые единицы, определяемые в синхронном срезе языка их семантикой и грамматикой, могут претерпевать различные семантико-структурные изменения в диахронии, в результате чего меняются также их лексические и грамматические значения, а некоторые единицы могут быть переосмыслены. Изменения такого рода имеют свои языковые и логические основы, которые подчеркивают реалии трансформации.

В контексте изменений, произошедших на словообразовательном уровне, определенную роль играет преобразование древнеармянских сложных аналитических конструкций в синтетические.

В статье рассматривается переход лексических единиц с аналитической структурой в синтетические как в грабаре, так и в истории армянского языка. Исследованы номинативно-глагольные конструкции, которые имеют соматические компоненты. В качестве именных составляющих указанных единиц выступают *ալկն*, *ձեռն*, *նւնկն*,

*արիւն, դեմք*) (*глаз, рука, ухо, колено, кровь, лицо*) и др. Такие переходы имеют лингвистические и логические основы и реализуются по определенным словообразовательным типам. В ходе трансформации происходят следующие изменения:

а) утрата предлогов: ի մտի դնել -մտադիր, մտադրվել,

б) смена акцента: ա՛կն ածել- ակնածե՛լ, դե՛մ առ դէմ- դեմադե՛մ,

в) замена глагола в словосочетании синонимом: ակն ունիմ- ակն-կալել, ըմպել զարիւն- արյունարբու,

г) утрата глагольного суффикса: ձեռն հասանել -ձեռնհաս, ձեռն արկանել- ձեռնարկել,

д) перестановка компонентов: դնեմ զձեռն- ձեռնադրել, հեղուկ զարիւն - արյունահեղ,

е) утрата приставки существительного и суффикса глагола (смешанный тип): *յակն արկանել -ակնարկել* и т. д.

Определение типологии аналитических структур с соматическим компонентом в истории армянского языка является одним из ключевых вопросов его исторического словообразования.

**Ключевые слова:** соматизм, аналитический, синтетический, типология, предлог, глагольная основа, порядок слов.

Хачатрян Лалик, заведующий лабораторией лингвистических исследований АГПУ им. Х. Абовяна, доктор филологических наук, профессор.

Мирумян Маргуш, кандидат педагогических наук, доцент кафедры родного языка и методики его преподавания АГПУ им.Х.Абовяна.

**ԲԱՍԵՆԻ ԽՈՍՎԱԾՔԸ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՈՒՄ  
(ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ)\*<sup>1</sup>**

DOI: 10.54503/2738-277X.2024.1(21)-61

**Խաչատրյան Հասմիկ**

բանասիրական գիտությունների թեկնածու,  
ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ,  
ավագ գիտաշխատող. Hasmikkhach1960@gmail.com

**Բանալի բառեր.** Կարևոր բարբառ, Բասենի խոսվածք, հոգնակի թիվ, սեռական հոլով, բացառական հոլով, անձնական դերանուն, ածական:

**Ներածություն**

Բարբառագիտության խնդիրներից կարևորում ենք բարբառների և խոսվածքների արդի վիճակի նկարագրությունը՝ նկատի ունենալով, որ հայ ժողովրդի գաղթերն ու բռնագաղթերը, հատկապես 1915 թ. ցեղասպանությունը, նաև կենսական, կրթական միջավայրը, գրական լեզուն մեծապես ազդել են բարբառների և խոսվածքների հնչյունական, բառապաշարային և քերականական առանձնահատկությունների վրա: Շիրակի մարզ կատարած գիտարշավների ընթացքում, ըստ մեր դիտարկումների, չնայած Գյումրու և մարզի տարածքի այլ խոսվածքների հնչյունական համակարգի և բառապաշարային շերտի ընդհանրությանը և օրինաչափություններին, առկա են նաև զգալի տարբերություններ, որոնք

\* Ներկայացվել է 24.05.2024, գրախոսվել՝ 12.06.2024:

<sup>1</sup> Հետազոտությունն իրականացվել է ՀՀ գիտության կոմիտեի ֆինանսական աջակցությամբ՝ 21T-6B111 ծածկագրով գիտական թեմայի շրջանակում:

դրսևորվում են ձևաբանության մեջ, մասնավորապես՝ սահմանական եղանակի կազմության և բայի խոնարհման համակարգում:

Շիրակի մարզի բարբառային միավորները հայ բարբառագիտության մեջ բավարար ուշադրության չեն արժանացել և մեխանիկորեն ընդգրկվել են Կարնո բարբառի մեջ: Գ. Ջահուկյանը այս բարբառում ներառել է Կարինի, Լենինականի, Բաբերդի, Խնդաձորի խոսվածքները<sup>2</sup>:

Բացի բնիկներից՝ Շիրակի մարզում բնակություն են հաստատել նաև 19-րդ դարի ռուս-պարսկական, ռուս-թուրքական պատերազմների, ինչպես և 1915 թվականի Հայոց ցեղասպանության հետևանքով տեղահանված հայեր: Գաղթելով Մուշից, Ալաշկերտից, Խնուսից, Բասենից, Կարսից, Կարինից, Բուլանուխից, Խուրից, Բիթլիսից՝ յուրաքննաչուրն իր հետ բերել է հայրենի օրրանի բարքերն ու սովորությունները, նաև մայրենի բարբառը:

Շիրակի մարզի բնակավայրերում մեծ թիվ են կազմում Բասենից գաղթածները: Նրանք վերաբնակվել են Ախուրյան, Արթիկ, Անի, Ամասիա, Աշոցք համայնքների մի շարք գյուղերում<sup>3</sup>:

Կարնո բարբառը Կը ճյուղի ամենատարածված բարբառներից է: Կենտրոնը եղել է Կարին քաղաքը: Ըստ Հ. Աճառյանի՝ Կարնո բարբառով էին խոսում նաև Բասենում<sup>4</sup>:

Որպես Կարնո բարբառի Բասենի մի խոսվածքի դրսևորում՝ քննության ենք ենթարկել Արթիկի Մեծ Մանթաշ բնակավայրի բարբառային միավորը: Այս գյուղի բնակիչների գերակշռող մասը Բասենից եկածներ են: Ըստ բարբառախոսների հաղորդած տեղե-

<sup>2</sup> Գ. Ջահուկյան, *Հայ բարբառագիտության ներածություն* (այսուհետև՝ չԲՆ), Ե., 1972, էջ 132:

<sup>3</sup> Տե՛ս Լ. Գևորգյան, *Շիրակի տարածքի խոսվածքների փոխհարաբերությունը* (այսուհետև՝ ՇՏԽՓ), Ե., 2012, էջ 11-12:

<sup>4</sup> Հ. Աճառեան, *Հայերեն գաւառական բարբառան*, Թիֆլիս, 1913, էջ 2:

կուրթյունների և Սանասար Բաղդասարյանի՝ Մեծ Մանթաշ գյուղի (նախկին անունը՝ Մեծ Արախավալի) բնակիչների նախնիները գաղթել են 1830 թ. Արևմտյան Հայաստանի Ստորին Բասեն գավառակի Խորասան, Ծառս, Վերին Բասենի Գոմաձորեր գյուղերի ավելի քան 50 և Մշո գավառի երկու բնակավայրերից (Վարտեկ և Աշխեն)<sup>5</sup>: «Մեր գյուղը, Մեծ Մանթաշ» գրքի հեղինակի՝ Ս. Բաղդասարյանի վկայությամբ՝ «Մեծ Մանթաշ ներգաղթածների կորիզը և գաղթի կազմակերպիչները եղել են խորասանցիները»<sup>6</sup>:

Բասենը Մեծ Հայքի Այրարատ նահանգի գավառներից է: Անունն ունի տոհմա-ցեղային ծագում. կապված է համանուն փասիաններ կամ բասիաններ ցեղանվան հետ, որի մասին հիշատակում են դեռևս Քսենոֆոնը, Փ. Բուզանդը, Եղիշեն, Ղ. Փարպեցին, Ս. Խորենացին և այլք<sup>7</sup>: Խորասանը Արևմտյան Հայաստանի Էրզրումի նահանգի Ստորին Բասեն գավառակի վարչական կենտրոնն է եղել: Խորասանի հայերը 1828-1830 թթ. ռուս-թուրքական պատերազմից հետո ռուսական նահանջող զորքի ուղեկցությամբ բռնել են գաղթի ճանապարհը<sup>8</sup>: Գալով Արևելյան Հայաստան՝ նրանց մի մասը բնակություն է հաստատել Շիրակի մարզի Մեծ Մանթաշ գյուղում:

Մեծ Մանթաշ գյուղի բնակիչները, որպես բասենցիներ, խոսում են նույն՝ Կարնո բարբառով<sup>9</sup>: 2023 թ. հայերենի բարբառագիտական ատլասի նյութերի հավաքման ծրագրի շրջանակում կատարած հարցումներով այս բնակավայրի խոսվածքը գրանցել ենք

<sup>5</sup> Սանասար Բաղդասարյան, *Մեր գյուղը, Մեծ Մանթաշ (1830-2015)*, Ե., 2015, էջ 10:

<sup>6</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 10-12:

<sup>7</sup> *Հայկական Սովետական հանրագիտարան*, հ. 2, Ե., 1976, էջ 301-302: *Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան*, հ. 1, Ե., 1986, էջ 610:

<sup>8</sup> *Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան*, հ. 2, Ե., 1988, էջ 794:

<sup>9</sup> **Հ. Աճառեան**, *Հայերեն գալատական բառարան*, էջ 2:



նույն գյուղի բնակչուհի Նունիկ Խաչիկի Պողոսյանի (ծնվ. 1960 թ.) և այլ բարբառախոսների օգնությամբ:

Սույն հոդվածի նպատակն է համաժամանակյա մեթոդով քննել Շիրակի մարզի Մեծ Մանթաշ գյուղի խոսվածքը՝ որպես Կարնո բարբառի Բասենի բարբառային մի միավորի դրսևորում:

Գ. Ջահուկյանը, ըստ բազմահատկանիշ-վիճակագրական դասակարգման, Կարնո բարբառն ընդգրկել է հայերենի բարբառների արևմտյան խմբակցության Փոքր Ասիայի կամ արևմտյան բարբառախմբի կազմում՝ որպես առանձին միավոր (ՀԲՆ, էջ 132-133): Հոդվածում անդրադարձել ենք սույն խոսվածքի քերականական առանձնահատկություններին:

### **Քերականական առանձնահատկություններ**

Մեծ Մանթաշի խոսվածքի անվանական համակարգում դրբսևորված են բավականին ուշագրավ իրողություններ: Բացի թվաձևային *-էր* (եր), *-ներ* (ներ) տարածված հոգնակերտներից, գործածվում են նաև *-ք*, *-իք*, *-դիք*, *-ան*, *-անք*, *-դանք*, *-էնք*, *-օնք* վերջավորությունները, որոնք միմյանց նկատմամբ գտնվում են լրացուցիչ բաշխման հարաբերության մեջ՝ որպես նույն քերականական իմաստն արտահայտող ձևայիններ: Դրանց ընտրությունը պայմանավորվում է թվանիշ հիմքերի վանկաքանակությամբ և իմաստային առանձնահատկություններով: *-էր* թվանիշ թեքույթ են ստանում միավանկ բառերը (*ջ՛ուր-ջ՛րրէր*, *տուն-տըներ*, *միս-մըսէր*, *թէլ-թէլէր* ևն): Ինչպես երևում է օրինակներից, *ու*, *ի* ձայնավորներով միավանկ բառերի հոգնակի թվաձևերի հիմքը հնչյունափոխվում է: *-էր* հոգնակերտով են կազմվում նաև որոշ կենդանիների՝ միավանկ հիմքով անունների հոգնակի թվի ձևերը (*հ՛առճ-հ՛առճէր*, *կօվ-կօվէր*, *ուլ-ուլէր* ևն):

Հարկ է փաստել սակայն, որ միավանկ հիմքով որոշ կենդանիների անունների հոգնակի թիվը ձևավորվում է նաև *-ան* կամ *-անկ* հոգնակերտներով. այն, ի դեպ, ավելի գործածական է տարեցների խոսքում: Օրինակ՝ *էձ-իձանկ, էշ-իշան/էշէր, գ էլ-գ իլան, ձ իձ-ձ իանկ/ձ իան*: Երբեմն հոգնակիի կազմության երկձևություններով դրսևորվում են բառի նրբիմաստները: Այս առումով ուշագրավ է, որ հոգնակիի երկու ձևերն օժտված են իմաստային տարբերություններով. *էշէր-ը էշ* բառի հոգնակի թիվն է, իսկ *իշվանկ-ը* գործածվում է մարդկանց մասին խոսելիս՝ հեզնական-ծաղրական իմաստով (Իշվանկը չէին հասկըծե, թե ինձ բ՛լղի էնէին, Գ՛ էվոյի իձանն էլի էգան):

*-Ան* հոգնակերտ են ստանում նաև *գյուղ* և *տեղ* բառերը՝ *գ էղ-գ էղան, տեղ-տեղան* (էղ տեղանը յես շաղ էմ էղե: Վերի գ էղանը ջ՛ ուրը բ՛ էրէն զը Ալազյազու):

Բազմավանկ բառերի հոգնակին խոսվածքում կազմվում է *-ներ* հոգնակերտ վերջավորությամբ (*հ՛ ախպուր-հ՛ ախպրներ, հ՛ աղիկ-հ՛ աղկրներ, աման-ամրներ, բ՛ էրան-բ՛ էրրներ, օսկօռ-օսկրներ, բ՛ անջար -բանջրներ, ծաղիգ-ծաղգրներ, յերէս-յերէսներ* են): Ձայնավորով վերջացող բազմավանկ բառերը, բացի *-ներ* հոգնակերտ վերջավորությունից, ստանում են նաև *-ք, -դանք, -դինք* հոգնանիշ թեքություններ՝ հաճախ գուգահեռաբար (*քեռի-քեռէկ//քեռվր-դանկ, խընամի-խընամիկ//խընամդօնկ, հօրկուր-հօրկուրներ//հօրկըրդանկ* են):

Ք հոգնակերտ (խոսվածքում՝ *կ*) են ստանում *ի-ով*, նաև գրաբարում *այ-ով* վերջացող բառերը, որոնցում *այ>է* (*հայլի-հայլիկ, գ էղածի-գ էղածիկ, դ՛ ըրածի-դ՛ ըրածիկ, խընամի-խընամիկ, սադանա-սադանէկ, ճամպա-ճամպէկ, հ՛ արգա (ակոռա)-հ՛ արգէկ, գ՛ ուլբա-գ՛ ուլբէկ*):

Ուշագրավ է, որ Բասենի այս խոսվածքում *ի*-ով վերջացող ուրոշ բառերում *ք* հոգնակերտից առաջ *ի* ձայնավորը դառնում է *է*: Օրինակ՝ *գ ինի-գ ինէկ, քէռի-քէռէկ, քէնի-քէնէկ* (*Գ ինէկը* դ՛րին սեղնին: *Քէռէկը* յէսօր բ՛լղի գան, օր խաշ ուղէնկ): Կարծում ենք՝ այս հնչյունափոխությունը տեղի է ունեցել *այ*-ով վերջացող բառերի համաբանությամբ:

Ազգակցական հարաբերություններ արտահայտող մի շարք գոյականներ ստանում են *-իք (իկ), -օնք (օնկ), -դիք (դինկ), -դանք (դանկ), -վըդանք (վըդանկ)* հոգնակերտները (*ամնիկ, կընիզմատտիկ, իընամօնկ//իընամդիկ, ախպըրդանկ//ախպըրդինկ//ախպըրդիկ, կընզըտիկ, մատտիկ, քուրվըդիկ, տէկըրդի(ն)կ //տէկըրդանկ, տիրվըդանկ//տէրէր, մօրկըրդիկ//մօրկըրդանկ, քէռէզընտիկ, տէգէրզընտիկ, քէտվըդանկ* են):

Հանդիպում են նաև մի շարք այլ գոյականներ, որոնք ստանում են վերոբերյալ հոգնակերտները (*հօկվըդանկ, ջօրվըդանկ, թըշնամօնկ* են): Շիրակի մարզի խոսվածքներում *կին* բառի հոգնակին բարբառներում տարածված *կընզըտիկ* հոգնակի փոխարեն գործածվում է համառոտված *կընտիկ* ուշագրավ տարբերակով, որը գործածվում է նաև բառաբարդումներում (քեռակիններ՝ *քէռէզընտիկ, տէգէրկանայք՝ տէկէրկընտիկ*):

Հարկ է նշել, որ ըստ Հ. Աճառյանի, Ա. Ղարիբյանի և Հ. Մըկըրտչյանի՝ Կարնո բարբառում գործածվում է նաև *-ստան (-էստան)* հոգնակերտը (Հ. Մկրտչյանը հիշատակում է նաև *-վի-ն*)<sup>10</sup>, որը, սակայն, Բասենի հիշյալ խոսվածքներում այսօր այլևս գործածական չէ:

<sup>10</sup> Հ. Մկրտչյան, *Կարնո բարբառը*, Ե., 1952, էջ 44-46, Ա. Ղարիբյան, *Հայ բարբառագիտություն*, Ե., 1953, էջ 408, Հ. Աճառյան, *Հայ բարբառագիտություն, Ուրուագիծ և դասատրություն հայ բարբառների*, Մոսկուա-Նոր Նախիջևան, 1911, էջ 108:

Անվանական հոլովման համակարգում ձևային արտահայտությամբ հատկանշվում են ուղղական, սեռական-տրական, բացառական, գործիական հոլովաձևերը: Սեռական-տրական հոլովաձևերը կազմվում են հոլովանիշ թեքություներով և հնչյունական հերթագայություններով:

*Ի*-ն ամենատարածված և ընդհանրական հոլովանիշ թեքությոն է եզակի թվում: Այս հոլովման են ենթարկվում գրաբարյան - *ք* հոգնակերտով բառերը (*հ'աշկի, մըտկի, ձ'էնկի, շէմկի, մէշկի, խէշկի* են), անձնանունները (*Առշագի, Անուշի, Հ'արուտի, Սատիգի, Տիկոանի, Կարոյի* են), կենդանիների և թռչունների անունները (*հ'անձի, գ'ովշի, կադվի, խօզի, օշխըրի, արձըվի, կակավի, հավի, դօխի, թուտագի* են): Հարկ է փաստել սակայն, որ բացառություն են էշ, գ'էլ, էձ բառերը, որոնք Բասենի խոսվածքներում դրսևվորվում են *ու* հոլովիչով (*իշու, գ'իլու, իձու*): *Ի* հոլովման են պատկանում նաև գրաբարյան *ն* վերջնահնչյունով բառերը, որոնք գրաբարում պատկանել են *ա* ներքին, իսկ արդի գրական հայերենում՝ *ան* արտաքին հոլովման (*ք'էրի, գ'անի, թօռի, ձ'ըզի, ձ'էրի* են): Ուշագրավ է, որ *ն* վերջնահնչյունով որոշ բառեր զուգահեռաբար ենթարկվում են նաև *ան* հոլովման, սակայն *ն*-ի անկմամբ: Օրինակ՝ *յէզա, դ'ընա* (*Յէզա* պօճէն մի՛ քաշէ: *Դ'ընա* շէմէն վօղը յերգընձուձ նէս): *Ի* հոլովանիշ թեքությոն ընդգրկում է նաև փոխանվանաբար գործածվող մյուս խոսքի մասերը (*մէնձի, ձէրմըզի, հառպաձի, ք-սօղի, էպօղի* են):

Տեղանունների սեռական հոլովը ևս կազմվում է՝ բառի վերջին ավելացնելով *-ի* հոլովանիշ թեքությոթ (*էրէվընի, Սէվանի, Աբարանի, Բ'ասենի Վանի, Մուշի* են), իսկ ազգակցական հարաբերություն ցույց տվող բառերի և դրանցով բաղադրված բարդություններինը ձևավորվում է հոլովանիշ հիմքի և *-ոջ* թեքությոթի համա-

դրությանը (*աներօճ, հ'ընգերօճ, տիրօճ, քրրօճ, կիսրօճ* են), ժամանականիշ բառերինը՝ *-վա* հոլովական վերջավորությանը (*ամառվա, հ'անափօղվա, հ'իրգընվա, շապտըվա* են):

Հոգնակի թվաձևերի սեռական հոլովը կազմվում է *ու* հոլովանիշ թեքույթով (*անըններու, բ'երըններու, գ'իշերներու, գ'օղերու, դ'անգըներու, շըներու, կօվերու, օշխըրներու, քաղկըներու, ջ'ըրերու, տըներու* են): Բասենի այս խոսվածքում բացառական հոլովի իմաստը արտահայտվում է հիմնականում *-են* վերջավորությամբ, չնայած երբեմն գործածվում է *ից* վերջավորությունը (*աղվեսեն-աղվեսներեն, աներօճեն-աներներեն, հ'աշխըրկեն-հ'աշխըրներեն, Առշագեն, հաժիծ/հաժեն-հաժերեն, ձ'եռ(կ)են-ձ'եռներեն, գ'իլեն// գ'իլուծ-գ'իլերեն/գ'իլանեն, թօռեն-թօռներեն, տընեն-տըներեն* են): Մեծ Մանթաշ գյուղի խոսվածքում տեղանունների բացառականը դրսևվորվում է *ու* հոլովանիշ վերջավորությամբ՝ *Էրեկընու, Աբարանու, Արտրգու, քաղկու* (*Ատտրգու* ախճիկ էն հ'ուգե, Գ'ալըդ հուրդի՞ծ է: *Մանտրշու* գ'ուկամ):

Բացառական հոլովի ուշագրավ մեկ այլ ձև ևս ունի Կարնո բարբառի Մեծ Մանթաշի խոսվածքը: Բացի նշված ձևերից՝ խոսվածքում բացառականը արտահայտվում է նաև *էցեն* (*էծեն*) վերջավորությամբ: Օրինակ՝ *Առշագէծեն, ճամպէծեն, աղվեսէծեն, բ'երներէծեն, գ'եղէծեն, գ'ինէծեն, իշէծեն, մառտէծեն, քրտէծեն, հօրէծեն, լեզվէծեն* (Ինօնկ Աղասու *քրտէծեն* բ'ըռնաձ ման կուդան: Էս փարեն *ճամպէծեն* էմ գ'ըդէ): Կարծում ենք՝ այս յուրահատուկ վերջավորությունը ձևավորվել է բացառականի *ից* և *են* կրկնակի հոլովիչների համադրումից, ճիշտ այնպես, ինչպես մահ ու+ան՝ *մահվան*, կամ դիմ+աց +ի՝ *դիմացի*:

Գործիական հոլովը արտահայտվում է *-ուլ* վերջավորությամբ համադրված կազմություններով (*հ'աշխըրքուլ-հ'աշխըրներ-*

*րով, գ՛էղով-գ՛էղերով, դ՛ըննով-դ՛ըննէրով, կարմընջով-կարմընջ-նէրով, ծովով-ծովէրով, ամսով-ամսընէրով, քրթօծով-քուրէրով* են):

Մյուս արևմտյան բարբառների նման խոսվածքը չունի *ուս* ձևույթով ներգոյական հոլով: Ներգոյական հոլովի իմաստը դրսե-վորվում է վերլուծական կազմությամբ՝ սեռական հոլովաձևով և *մէճ* հետադրությամբ բաղադրված, ընդ որում՝ մեջ կապը միշտ գործածվում է *ը* հոդի հետ (*բօստընի մէճը, գ՛էղի մէճը, ք՛էրնի մէճը, կըջըջի մէճը, գ՛էղէրու մէճը, ջ՛ըրէրու մէճը, օրօծկնէրու (օրորոց-նէրի) մէճը, հօղէրու մէճը* են):

Կարևոտ բարբառի Բասենի խոսվածքում առկայացման կար-գին վերաբերում են միայն որոշյալության և ստացականության քե-րականական իմաստները: Մեծ Մանթաշ գյուղի խոսվածքում որո-շյալությունը դրսևորվում է *ը* և *ն* որոշիչ հոդերով: Ն որոշիչ հոդը գործածվում է ձայնավորահանգ բառերի դեպքում (Ծառը ծաղգավ: Կօվն էր ծընէ: Լիգուն հ՛էրգան է: Պաղը, տունը ավիրվավ: Ինօր էձը սատկավ: Էրէխէն ամանը ջ՛առտէծ): Ստացականության իմաստը ձևավորվում է *ս, դ* հոդերով ( Օրինակ՝ *Գ՛ըլօխըս* ցավա գը: *Հ՛օղնէ-ըըս* հ՛առաճ չէն էրտա):

Ածականի բաղդատական աստիճանը ձևավորվում է հիմնա-կանում արդի գրական հայերենի նման՝ ածականի դրական աստի-ճանին *ավէլի* (խոսվածքում՝ *հ՛ավէլի*) բառի առադրմամբ: Սակայն տարեցների խոսքում հանդիպում է նաև *ջիլիգ* բառով կազմված ածականի բաղդատական աստիճանը (Հ՛ինկը էդօրէն *ջիլիգ* ուժէղ է), որի մասին հիշատակում է նաև Հ. Մկրտչյանը<sup>11</sup>:

Ածականի գերադրական աստիճանը կազմվում է *ամենա-* ածանցով կամ *ամեն-*ի հոլովված ձևով՝ *հ՛ամենէն*, իսկ տարեցների

<sup>11</sup> Հ. Մկրտչյան, *Կարևոտ բարբառը*, էջ 54-55:

խոսքում նաև՝ *ջ'իլիզէն* գերադրականի ձևով (*հ'ասէնածանդը* կամ *հ'ասէնէն ծանդը*, «Սատոյի ախճիզը *ջ'իլիզէն* դօճաղ է»):

Շիրակի տարածքի Բասենի՝ խնդրո առարկա խոսվածքում գործածվում են քանակական, դասական և բաշխական թվականները: Ընդհանրապես խոսվածքի թվականները արդի գրական հայերենի թվականներից էական տարբերություններ չեն դրսևորում՝ բացառությամբ բարբառի հնչյունական արտաբերական առանձնահատկությունների: *էրզու* թվականի վրա որոշ դեպքերում ավելանում է *ս* հնչյունը՝ *էրզուս*, *յոթ*-ը տարեցների խոսքում նաև՝ *օխտը*:

Թվականի բաշխականության իմաստը դրսևորվում է քանակական թվականի կրկնությամբ՝ *էրզու(ս)-էրզու(ս)*, *հ'իրէկ-հ'իրէկ*, *յօտ-յօտ* ևն:

*Ես*, *դու*, *մենք*, *դուք* անձնական դերանունների տրական հոլովը այս խոսվածքում կազմվում է գրաբարյան հոլովաձևերի (*ինձ*, *մեզ*, *քեզ*, *ձեզ*) հնչյունական տարբերակների և *ի* վերջավորության բաղադրությամբ՝ *ընձի*, *քեզի*, *մեզի*, *ձեզի*: Հայցական հոլովի իմաստը դրսևորվում է տրականաձև կազմությամբ (սիրէ գը *ընձի*, *քեզի*, *մեզի*, *ձեզի*): Անձնական դերանունների բացառական հոլովաձևը ձևավորվում է տրականի հիմքից *-էն* վերջավորությամբ (*ընձէն*, *քեզէն*, *մեզէն*, *ձեզէն*, *հ'իրանէն*, *հ'իրանձէն*), գործիականը՝ *-նօլ* հոլովանիշ թեքույթի զուգադրությամբ (*ընձնօլ*, *քեզնօլ*, *մեզնօլ*, *ձեզնօլ*, *հ'իրանօլ*, *հ'իրանձօլ*): Եզակի 3-րդ դեմքի իմաստը արտահայտվում է *հ'ինկը* կամ *էնիզ* (*Հ'ինկը* գ'ընած կամ *էնիզ* գ'ընած), հոգնակի 3-րդ դեմքինը՝ *հ'իրանկ* կամ *ինօնկ//էնօնկ* (*Հ'իրանկ* (*ինօնկ//էնօնկ*) գ'ընածին) ձևերով:

Ըստ Վ. Կատվայանի՝ այս տարածաշրջանում «Դերանունների համակարգում ընդհանուր են *ի*, *իզ* հավելյալ մասնիկները՝ *էսի*,

*էղի, էնի, քսիգ, ըղիգ, ընիգ*, երբեմն՝ *էսիգ, էղիգ, էնիգ*<sup>12</sup>: Հարկ է փաստել սակայն, որ Բասենի այս խոսվածքում ցուցական դերանունների *քսիգ, ըղիգ, ընիգ* տարբերակների փոխարեն գործածվում են *իսի, իղի, ինի, իսիգ, իղիգ, ինիգ* հնչյունափոխական տարբերակները: Մեծ Մանթաշ գյուղի երիտասարդ սերնդի բարբառային խոսքում նկատելի է նաև *ք*-ով տարբերակը (որը հավանաբար Գյումրու խոսվածքի ազդեցությամբ է պայմանավորված)՝ *քսիգ, քղիգ, քնիգ*, իսկ տարեցները գործածում են *իսիգ, իղիգ, ինիգ* տարբերակները: Օրինակ՝ *իսիգ ծառ է, իսի տունը, էնիգ (ինիգ) սիրէ գ՛ը էղիգ, իսիգ է պիջիգը, ինի մառտը* և այլն: Այս դերանունների հոգնակի թվի ձևերն են՝ *էսոնկ//իսոնկ, էղոնկ//իղոնկ, էնոնկ//ինոնկ*: Խոսվածքում պահպանվում է *այս, այդ, այն* (սա, դա, նա) ցուցական դերանունների եռանդամությունը՝ *էսի//իսի մառտը, էղի//իղի մառտը, էնի//ինի մառտը*: Սրանց սեռական-տրական հոլովածները կազմվում են *այսը, այդը, այնը* տիպի հիմքով: Այսպես՝ *էսօր//իսօր* տունը, *էղօր//իղօր* տունը, *էնօր//ինօր շունը, Բսօր մօղէծավ, էղօր գարգէծ, ինօր բ՛արէվ տըվավ*:

Բարբառախոսների խոսքում երբեմն նկատելի է արևմտահայ բարբառներին բնորոշ *hou, hoŋ, hoŋ* ցուցական դերանունների գործածությունը: Օրինակ՝ Հածը *hoŋ* ղըրգէծի: Ինի մառտը *hou*՝ մեր տուն գ՛ուկար: Բ՛այը *hoŋ* է դ՛ըրաձ, վերու՛: Եվ ինչպես Վ. Կատվալյանն է դիտարկել. «Ի տարբերություն խոսակցական արևելահայերենի՝ *համար, պէս, հետ* կապերը հաճախ գործածվում են անձնական դերանունների ոչ թե սեռական, այլ տրական հոլովածների հետ՝ *ընձի համար, քէզի մար/համար/, ընձի հետ, ընձի պէս*»<sup>13</sup>:

<sup>12</sup> Վ. Կատվալյան, *Շիրակի մարզի բարբառային խոսքի ընդհանուր բնութագիրը*, Շիրակը հայոց բառ ու բանի գանձարան, Միջազգային գիտաժողովի նյութեր, Ե., 2023, էջ 70:

<sup>13</sup> Վ. Կատվալյան, նշվ. աշխ., էջ 70-71:



Բասենի այս խոսվածքում *ու/* հարցական դերանունը դրսևորվում է *վօվ/վէվ* տարբերակներով (այս խոսվածքում *հ'օվ* ձևը չկա), իսկ եզակի սեռական հոլովը՝ *հ'նու* (Ինիզ *հ'ն'ու* տեսավ): *Ով* դերանվան հոգնակի ուղղականը դրսևորվում է եզակի ուղղականի հիմքով (*Վ'օվ* էգան: *Վօվ* օր էգան, էնօնկ էլ տիրածան):

### Եզրակացություն

Ամփոփելով Շիրակի մարզի Մեծ Մանթաշ գյուղի բարբառային միավորի քերականական հատկանիշներից անվանական համակարգին բնորոշ իրողությունների քննությունը՝ կարող ենք ասել, որ այն, լինելով Կարնո բարբառի Բասենի մի խոսվածք, հանդես է բերում քերականական հետևյալ առանձնահատկությունները՝ 1. Խոսվածքը հատկանշվում է հոգնակիության յուրահատուկ դրսևորումներով, ինչպիսիք են *ք* հոգնակերտից առաջ բառավերջի *խ*-ի է դառնալը, (*քէռէկ, գ'իւէկ*): 2. Միավանկ բառերի (որոշ կենդանիների անունների) հոգնակիի կազմությունը *-ան* հոգնակերտով (*իշան, իձան, գ'իլան*): 3. Բասենի խոսվածքի կարևոր յուրահատկություններից է բացառականի *էգէն* վերջավորությունը, որը, կարծում ենք, ձևավորվել է բացառականի *ից* և *էն* կրկնակի հոլովիչների համադրումով (*ճամսկէձէն*): 4. Խոսվածքի անվանական հոլովման համակարգը հատկանշվում է հիմնականում արտաքին թեքմամբ հոլովանիշ վերջավորություններով ինչպես եզակի, այնպես էլ հոգնակի թվում, ինչպես նաև եզակի թվի հարացույցում *ի* հոլովանիշ թեքույթի, իսկ հոգնակի թվում՝ *ու* հոլովանիշի ընդհանրական արժեքով: 5. Դերանունների համակարգում ընդհանուր են *ի, իզ* հավելյալ մասնիկները՝ *իսի, իղի, ինի, իսիզ, իղիզ, ինիզ*: 6. Ածականի բաղդատական և գերադրական աստիճանները դրսևորվում են նաև *ջ'իլիզ, ջ'իլիզէն* փոխառյալ բառերով: 7. *Համար, պես,*

*հետ* կատերը խոսվածքում գործածվում են ոչ թե սեռական, այլ տրական հոլովածների հետ:

### Օգտագործված գրականություն

Աճառեան Հ., Հայերէն գաւառական բառարան, Թիֆլիս, 1913:

Աճառեան Հ., Հայ բարբառագիտութիւն, Ուրուագիծ և դասաւորութիւն հայ բարբառների, Մոսկուա-Նոր Նախիջևան, 1911:

Աճառյան Հ., Հայոց լեզվի պատմություն, հ. 2, 1951:

Գրիգորյան Ա., Հայ բարբառագիտության դասընթաց, Ե., 1957:

Գևորգյան Լ., Շիրակի տարածքի խոսվածքների փոխհարաբերությունը, ատենախոսություն, Ե., 2012:

Կատվալյան Վ., Շիրակի մարզի բարբառային խոսքի ընդհանուր բնութագիրը, Շիրակը հայոց բառ ու բանի գանձարան, Միջազգային գիտաժողովի նյութեր, Ե., 2023:

Հակոբյան Թ., Մելիք-Բախշյան Ստ., Բարսեղյան Հ., Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հ. 1, Ե., 1986, հ. 2, Ե., 1988:

Հայերենի բարբառագիտական ասլասի նյութերի հավաքման ծրագիր, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Ե., 1977:

Հայկական Սովետական հանրագիտարան, հ. 2, Ե., 1976:

Ղարիբյան Ա., Հայ բարբառագիտություն, Ե., 1953:

Մկրտչյան Հ., Կարնո բարբառը, Ե., 1952:

Ջահուկյան Գ., Հայ բարբառագիտության ներածություն, Ե., 1972:

**Khachatryan Hasmik- Bassen Speech in the Marz of Shirak (grammatical features).**- In this article, the speech of Mets Mantash village, Artik Region of Shirak Marz, was examined as a manifestation of a speech of Bassen of the Karin dialect. The nominal system of the speech of Mets

Mantash shows quite remarkable facts. The article refers to the following grammatical features as characteristic of the Karin dialect: 1. In addition to the plural forming endings -er, -ner, the endings -k, -ik, -dik, -an, -ank, -dank, -enk, -onk are also used. 2. One of the unique manifestations of the plural forms of this speech is a) the i-e interchange before the plural forming ending K, as: *keri* > *kerek* (*ptnʰ* > *ptnʰtʰ*), *g'ini* > *g'inek* (*q'hñh* > *q'hñtʰ*). b) The formation of the plural of monosyllabic words (names of some animals) with the plural forming ending -an (*ishan* (*hʒwñ*), *idzan* (*hãwñ*), *g'ilan* (*q'hjuwñ*)). 3. One of the remarkable facts of Bassen speech is the ending -etsen of the ablative case, which, apparently, is formed by the combination of the both ablative endings -ets and -en (*ktits* > *ktetsen* (*ppunʰδ+tñ* > *pnʰtδtñ*), *champits* > *champetsen* (*čwñwʰjʰδ+tñ* > *čwñwʰtδtñ*)). 4. Additional particles *i*, *ig* are used in the pronominal system: *isi*, *idi*, *ini*, *isig*, *idig*, *inig* (*huʰ*, *hñʰ*, *hñʰ*, *huʰq*, *hñʰq*, *hñʰq*). 5. The forms of the demonstrative pronouns *hos*, *hod*, *hon* (*hou*, *hoñ*, *hoñ*) are very common. 4. The comparative and superlative degrees of the adjective are also formed by the borrowings *j'iliz*, *j'ilizen* (*ç'hʰq*, *ç'hʰqtñ*).

**Keywords.** Dialect of Karin, Bassen speech, Plural, Genitive case, Ablative case, Personal pronoun, Adjective.

Khachatryan Hasmik, PhD in Philology, Institute of Language named after H. Acharyan of NAS RA, Senior Researcher.

**Хачатрян Асмик- Басенский говор в Ширакской области (грамматические особенности).**- В данной статье объектом исследования говор села Мец Манташ Артикского района Ширакской области - как проявление одного говора Басена диалекта Карно. В именной системе говора Мец Манташа проявились весьма примечательные реалии. В статье говорится о следующих грамматических особенностях, характерных для диалекта Карно: 1. Кроме окончаний *-er*, *-ner*, образующих множественное число, также употребляются окончания с формообразующим *p* (-к<sup>h</sup>): -к<sup>h</sup>, -ик<sup>h</sup>, -дик<sup>h</sup>, -ан, -анк<sup>h</sup>, -данк<sup>h</sup>, -енк<sup>h</sup>, -онк<sup>h</sup>. 2.

Одним из своеобразных проявлений множественного числа является: а) превращение "и" в "э" перед формообразующей согласной К<sup>h</sup> (Զ) в окончании слова во множественном числе, например: կ'երի > կ'эрэк (*płnɨh > płnɨk*), Դ'ինի > Դ'инэк (*q'hɨh > q'hɨk*). б) Образование множественного числа односложных слов (названий некоторых животных) с помощью формообразующего "-ан" (ишán (*hɨʃán*), идзán (*hɔʃán*), гилán, (*q'hɨʃán*). 3. Одним из примечательных фактов басенской речи является аблативное окончание -эц'эн, которое, по всей видимости, сформировалось в результате сочетания аблативного -hɨg (-иц) и -tɨ́ (эп) двойных морфем (к<sup>h</sup>т<sup>h</sup>иц > к<sup>h</sup>эц'эн (*pɨpɨhɔ+tɨ́ > pɨkɔtɔtɨ́*), чамп<sup>h</sup>иц > чамп<sup>h</sup>эц'эн (*ɔʃɨʃɨhɔ+tɨ́ > ɔʃɨʃɨkɔtɔtɨ́*). 4. В системе местоимений употребляются дополнительные частицы -и, -иц: *иси, иди́, уни́, иси́к<sup>h</sup> (исі́г), иди́г (иді́г), уни́г (уні́г) (ɦɨɦ, ɦɨɦ, ɦúɦ, ɦɨɦq, ɦɨɦq, ɦúɦq)*. 5. Весьма распространены формы указательных местоимений *һос, һод, һон (һou, һoɨ, һou)*. 4. Собирательная и превосходная степени прилагательного выражаются также заимствованными словами *джилі́з, джилі́з'эн (ɨ'hɨɦq, ɨ'hɨɦqtɨ́)*.

**Ключевые слова:** диалект Карно, говор Басена, множественное число, родительный падеж, аблатив, личное местоимение, имя прилагательное.

Хачатрян Асмик, кандидат филологических наук, Институт языка имени Р. Ачаряна НАН РА, старший научный сотрудник.

**ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԽՈՍՎԱԾՔՆԵՐԻՆ ԲՆՈՐՈՇ  
ՄԻ ՔԱՆԻ ԲԱՌԵՐԻ ՄԱՍԻՆ\*<sup>1</sup>**

DOI: 10.54503/2738-277X.2024.1(21)-76

**Կատվայան Վիկտոր**

բանասիրական գիտությունների դոկտոր,  
ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ,  
առաջատար գիտաշխատող. viktorkatvalyan@mail.ru

**Բանալի բառեր.** բարբառ, խոսվածք, բառապաշար, բառի-մաստ, բառակազմություն, փոխառություն, բառարան:

**Նախաբան**

Բարբառախոս հանրությունները միմյանցից տարբերվում են խոսքի ինչպես հնչյունական ու քերականական, այնպես էլ բառապաշարին առնչվող հետաքրքրական իրողություններով: Վերջիններս կարող են դրսևորվել և՛ իմաստաբանության, և՛ բառակազմության ու բառագործածության ոլորտներում:

2022-2023 թթ. «Շիրակի մարզի բարբառային համապատկեր» ծրագրի շրջանակում շուրջ ինը տասնյակ բնակավայրերում բարբառագիտական դաշտային աշխատանքների ընթացքում մեր ուշադրությունը գրավել են մարզի խոսվածքներին բնորոշ բառապաշարային մի շարք իրողություններ: Նշենք, որ մարզը բարբառա-

\* Ներկայացվել է 02.06.2024, գրախոսվել՝ 08.07.2024:

<sup>1</sup> Հետազոտությունն իրականացվել է ՀՀ բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի ֆինանսական աջակցությամբ՝ 21T-6B111 ծածկագրով «Շիրակի մարզի բարբառային համապատկեր» գիտական թեմայի շրջանակում:

գիտական առումով առանձնանում է Հայաստանի Հանրապետության այլ տարածաշրջաններից. այստեղ լեզվական մի յուրահատուկ միասնություն է ձևավորվել թերևս Կարնո բարբառի Գյումրու խոսվածքի մեծ ազդեցության շնորհիվ, և որքան էլ յուրաքանչյուր բնակավայր ունի խոսվածքային, առանձին դեպքերում՝ նաև բարբառային յուրահատկություններ, այնուամենայնիվ շատ զգալի են հնչյունաքերականական ու բառապաշարային ընդհանրությունները: Այդ հանգամանքը թույլ է տալիս բառային միավորները առավելաբար դիտարկելու առանց տարածագործառական լրացուցիչ բնութագրերի, որովհետև ներկայացվող բառային միավորները ընդհանուր կամ գրեթե ընդհանուր են մարզի բոլոր խոսվածքների համար:

Այս աշխատանքում դիտարկվում են մարզի խոսվածքների համար բնութագրական և առավել գործածական բառերի երեք խումբ. ա) փոխառյալ բառեր, բ) իմաստային յուրօրինակ դրսևորումներով բառեր, գ) մարզի խոսվածքների բնորոշ կազմություններ:

### **Փոխառյալ բառեր**

Այս խմբի բառերը հիմնականում թուրքերենից և պարսկերենից փոխառություններ են, ընդ որում՝ թուրքերենից փոխառությունները ավելի շատ են: Դրանցից են, օրինակ, հետևյալները՝ *չալէլ* (նվագել), *չամուռ* (ցեխ), *չրփլախ* (մերկ), *քոկ /քոք/* (արմատ), *յանի* (իբր) և այլն: Պարսկերենից են փոխառվել մեծ գործածականություն ունեցող *քուլիկ* (բոլորը), *քյալլա* (գլուխ), *քյոշա* (անկյուն), *փալան* (համետ) և այլ բառեր: Այս խմբում կան նաև միջնորդավորված փոխառություններ, օրինակ՝ *լախանա* բառը փոխառված է թուրքերենից, բայց թուրքերենը փոխառել է հունարենից, որում բառն

ունի *կանաչեղեն* իմաստը<sup>2</sup>: Թուրքերենից է փոխառված նաև *քուռակ* իմաստով *սրպա* բառը, որը այդ լեզվին անցել է պարսկերենից: Վերջինում բառն ունի *sipa* ձևը և «եռոտանի» իմաստը<sup>3</sup>: Փաստորեն, թուրքերենում բառը ձեռք է բերել նոր իմաստ և այդ իմաստով անցել բարբառային հայերենին: Բայց հետաքրքրական է, որ վերջինում, մասնավորապես՝ Բայազետի բարբառում, պահլավերենից փոխառնված *քուռակ* բառը («ձիու կամ էջի ձագ» իմաստով) նշանակում է նաև *եռոտանի* հարմարանք, որի վրա նստում և ծեծում են գերանդին: Այսպիսով՝ մի դեպքում ունենք «եռոտանի» իմաստից անցում «քուռակ» իմաստին, մյուս դեպքում հակառակը՝ «քուռակ» իմաստից «եռոտանի» իմաստին: Պետք է կարծել, որ տարածաշրջանի տարբեր լեզուներում ու բարբառներում տեղի են ունեցել նմանության զուգորդությամբ<sup>4</sup> իմաստափոխական համանրման գործընթացներ՝ թեկուզ և հակառակ ուղղություններով:

### Իմաստային յուրօրինակ դրսևորումներով բառեր

Հետաքրքրական են բառերի իմաստային յուրօրինակ դրսևորումները: Այսպես, *հ՛էրտիզ* (երդիկ) բառը մարզի խոսվածքներում ունի ոչ միայն «տանիքի պատուհան» իմաստը, այլ նաև «կտուր, տանիք» իմաստը: Հ. Աճառյանը *երդ* (երդիկ) արմատի ծագումը չի մեկնաբանել, նշել է միայն իմաստը՝ «տանիքի լուսամուտ», ապա նաև՝ «տուն, տանեցիք»<sup>5</sup>: Երկրորդ դեպքում թերևս առկա է համ-

<sup>2</sup> Տե՛ս Հ. Աճառեան, *Թուրքերեն փոխառեալ բառերը Պոլսի հայ ժողովրդական լեզուին մէջ համեմատութեամբ Վանի, Ղարաբաղի և Նոր-Նախիջեւանի բարբառներուն*, Մոսկուա-Վաղարշապատ, 1902, էջ 150:

<sup>3</sup> Տե՛ս նշվ. աշխ., էջ 318:

<sup>4</sup> Այս իրողության մասին տե՛ս Է.Աղայան, *Լեզվաբանության հիմունքներ*, Ե., 1987, էջ 360:

<sup>5</sup> Տե՛ս Հ. Աճառեան, *Հայերեն արմատական բառարան* (այսուհետև՝ ՀԱԲ), հ. 2, Ե., 1926, էջ 44:

ըմբռնման երևույթ (երբ մասը գործածվում է ամբողջի իմաստով), մանավանդ որ յուրաքանչյուր տուն կարող է ունենալ միայն մեկ երդիկ: Գավառական բառարանում բառի իմաստը ներկայացվում է հետևյալ կերպ. «...գիւղական տուներու տանիքին վրայ բացուած ծակ կամ պատուհան, որմէ լոյսը կը թափանցէ ներս և թոնիրին ճիշտ ու ճիշտ դէմը գտնուելով՝ ծուխը անկէ դուրս կ'ելլայ: Ասկէ առնելով լայնաբար կը նշանակէ նաև «ծխնէլոյզ»<sup>6</sup>: Սակայն արմատական բառարանում հայերենից վրացերենի կատարած փոխառության՝ *երդո* ձևի համար Աճառյանը նշում է «տափակ տանիք կամ կտուր, նաև տախտակամած» իմաստները<sup>7</sup>: «Հայոց լեզվի բարբառային բառարան»-ը իբրև *երդիկ* բառի երկրորդ իմաստ նշում է «հողէ կտուր, տանիք» իմաստը, որ վերագրվում է Սեբաստիայի և Կարնո բարբառներին<sup>8</sup>: «Արդի հայերենի բացատրական բառարան»-ում ևս նշվում է բառի նույն երկրորդ իմաստը<sup>9</sup>: Պետք է կարծել, որ *երդիկ* բառի «տանիք» իմաստը, արդյունք լինելով բառիմաստի ընդլայնման, գալիս է բավականին հին ժամանակներից: Այդ են վկայում ինչպես վրացական *երդո* փոխառությունը, այնպես էլ դեռևս միջին հայերենում *երդիկ* բառի՝ «տանիք» իմաստով գործածությունը (Իմ ես՛ր, դու յերդիկն ի քուն, ծոցդ լոյս կու տայ աստղներուն<sup>10</sup>): Ավելին, գրաբար մատենագրության մեջ վկայված է *երդակից* ձևը, որը Հայկազյան բառարանում մեկնաբանվում է հետևյալ կերպ. «Որոյ երդն՝ այսինքն յարկն կից է ընդ դրացոյն.

<sup>6</sup> **Հ.Աճառեան**, *Հայերէն գաւառական բառարան*, Թիֆլիս, 1913, էջ 299:

<sup>7</sup> Տե՛ս ՀԱԲ, հ. 2, էջ 44:

<sup>8</sup> Տե՛ս *Հայոց լեզվի բարբառային բառարան* (այսուհետև՝ ՀԼԲԲ), հ. 1, Ե., 2001, էջ 377:

<sup>9</sup> Տե՛ս **Է.Աղայան**, *Արդի հայերենի բացատրական բառարան*, Ե., 1976, էջ 339:

<sup>10</sup> **Ռ.Ղազարյան**, **Հ.Ավետիսյան**, *Միջին հայերենի բառարան*, Ե., 2009, էջ 187:



յարկակից»<sup>11</sup>: Ընդ որում՝ հիշյալ բառարանում *յարկ* բառի «բնակարան, տուն, տաճար» և այլ իմաստների հետ հիշատակվում է նաև «ծածկոյթ տան, ձեղուն» իմաստը<sup>12</sup>: Այնպես որ, թեև գրաբար մատենագրության մեջ *երդ/երդիկ* բառի՝ «տանիք, կտուր» իմաստով գոծածության օրինակներ ուսումնասիրողները չեն դիտարկել, սակայն թվում է՝ այդ իմաստի ընկալումը գրաբարին ևս խորթ չի եղել:

*Տագ* (տակ) բառը Հ. Աճառյանը համարում է պահլավական փոխառություն՝ «հատակ, տակ, խորք» իմաստով<sup>13</sup>: Այդ իմաստը պահպանվում է նաև հայերենում: Արմատական բառարանում նշվում են այլ իմաստներ ևս՝ «բույսի տակի մասը, արմատ», նաև՝ «ցեղ, զարմ»<sup>14</sup>: Ի դեպ, վերջին իմաստով արմատի գործածություն ունենք Թիֆլիսի, Բայազետի բարբառներում՝ *ազգուտակ // ասկուտակ* բառում, որ նշանակում է «ցեղ, տոհմ»: Հ. Աճառյանը, անդրադառնալով Մխիթար բժշկապետի գործածած «կարմիր տակեր» կապակցությանը, կասկած է հայտնում, թե արդյո՞ք խոսքը տորոնի մասին է («տորո՞ն»)՝<sup>15</sup>: Նկատենք, որ Շիրակում հանդիպում են *կարմիր տակ, ձերմակ տակ* կապակցություններ, որ նշանակում են ճակնդեղի տեսակներ, ուստի հնարավոր է, որ Մխիթար բժշկապետի երկում առկա *կարմիր տակեր* կապակցությունը նշանակում է «կարմիր ճակնդեղ»: Հավելենք, որ ուսումնասիրողները միջին հայերենում արձանագրել են *տակ* բառի «ճակնդեղ» իմաստի առկայությունը՝ նշելով հետևյալ օրինակը. «Արտ մի բակլայ

<sup>11</sup> Գ.Աւետիքեան, Խ.Միւմելեան, Մ.Աւգերեան, *Նոր բարգիւրք հայկազեան լեզուի*, (այսուհետև՝ ՆՀԲ), հ. 1, Վենետիկ, 1836, էջ 673

<sup>12</sup> Տե՛ս ՆՀԲ, էջ 347:

<sup>13</sup> Տե՛ս ՀԱԲ հ. 4, Ե., 1926, էջ 360:

<sup>14</sup> Նույն տեղում:

<sup>15</sup> Նույն տեղում:

կանանչ կերաք, թող զբազուկն ու կարմիր տակ»<sup>16</sup>: Պետք է նշել, որ դիտարկվող բառը բարբառների մեծ մասում ունի «տակ» իմաստը, Վանում՝ «արմատ», մի շարք բարբառներում (Արաբկիրի, Արարատյան, Եվդոկիայի, Ջեյթունի, Հաճրնի, Ղարաբաղի, Ջուղայի, Սեբաստիայի, Վանի)՝ «ճակնդեղ» իմաստը: Հայերենից քրդերենին անցել է «ցողուն» իմաստով: Հետաքրքրական է, որ թե՛ Աճառյանը, թե՛ ՀԼԲԲ-ն բառի «ճակնդեղ» իմաստը Կարնո բարբառում չեն արձանագրել: Կարծում ենք՝ Կարնո և մի շարք այլ բարբառներում *տակ* բառի «ճակնդեղ» իմաստը հետագա զարգացումն է ավելի հին *արմատ* իմաստի:

*Պատկամ* (պատգամ) բառը հին հայերենում ուներ «հրաման, պատվեր, վճիռ, լուր» իմաստները, նաև՝ «լրատար, պատգամաբեր»<sup>17</sup>: Պահլավական փոխառություն է: Ըստ Աճառյանի՝ *պատգամ* բառը պահպանված է Ախալքալաքում, Շիրակում՝ «խնամախոս» նշանակությամբ<sup>18</sup>: Ըստ ՀԼԲԲ-ի՝ բառը Կարնո բարբառի Ջավախքի տարբերակում նշանակում է «տղայի կողմից աղջկա տուն գնացող խնամախոս»: Հավանական է, որ Շիրակում ունենք «լրատար, պատգամաբեր» իմաստի հետագա զարգացումը:

*Ջարդ* արմատի ծագումը Հ.Աճառյանը չի մեկնաբանել, նշել է, որ այն առանձին գործածական է նոր հայերենում և ունի «կոտորած» իմաստը, իսկ հին մատենագրության մեջ հանդիպում է բաղադրություններում: Դրանցից *ջարդել* բայը ունի «մանրել, խորտակել, կոտորել» իմաստները<sup>19</sup>: Հայագետը բարբառներից բերված բոլոր հնչատարբերակների համար նշում է «ջարդել, կոտորատել»

<sup>16</sup> Ռ. Ղազարյան, Հ.Ավետիսյան, *Միջին հայերենի բառարան*, էջ 743:

<sup>17</sup> Տե՛ս ՀԱԲ, 4, էջ 38: ՆՀԲ, հ. 2, էջ 606:

<sup>18</sup> Տե՛ս ՀԱԲ, հ. 4, էջ 38:

<sup>19</sup> Տե՛ս ՀԱԲ, հ. 4, էջ 124:

իմաստները<sup>20</sup>: Շիրակի խոսվածքներում *ջարտել* բառը գործածվում է «շերտերով կտրատել» իմաստով՝ հացը, ձմերուկը, միսը, խնձորը ջարտել: ՀԼԲԲ-ն բառի «մանրել, բրդել» իմաստն արձանագրում է Համշենի բարբառում<sup>21</sup>: Հնուց եկող այս իմաստին էլ սերտորեն առնչվում է շիրակյան «կտրատել» իմաստը:

Բնիկ հայերեն *քան* արմատի համար Աճառյանը նշում է «չափ, որչափ լինելը» իմաստը: Այդ իմաստը կա նաև *այսքան*, *այդքան* և նման ձևերում, *քանակ* բառում: Ըստ հայագետի՝ այս արմատը մատենագրության մեջ իբրև գոյական առանձին գործածված չէ, բայց շատ սովորական է իբրև նախադրություն<sup>22</sup>: Արդի գրական հայերենում այս բառը շաղկապի դեր է կատարում՝ համեմատության կառույցներում արտահայտելով գերազանցության իմաստ<sup>23</sup>: Արմատական բառարանում բերվում են *քանի*, *քան* *զ* ձևերի բարբառային հնչատարբերակներ<sup>24</sup>: Հետաքրքրական է, որ Ազատան գյուղի խոսվածքում *քան* ձևը գործածվում է «չափ» կապի իմաստով. *ձ էր առածը մերի քան չէ. մեր գ էղի քան չէ*: Այս իրողությանը բավականին մոտ է բառի՝ *պես*, *նման* իմաստներով գործածությունը միջին հայերենում (խառնչե քան զեջ)<sup>25</sup>: Ակնհայտ է, որ *քան* բառի՝ *չափ* իմաստով գործածությունը ևս գալիս է միջինհայերենյան կամ ավելի վաղ շրջանից:

*Քան* բնիկ հայերեն բառը վկայված է «ծեծ», ապա նաև՝ «վերք» իմաստներով: Այդ արմատով ձևավորվել է նաև *զանել* (ծեծել)

<sup>20</sup> Նույն տեղում:

<sup>21</sup> Տե՛ս ՀԼԲԲ, հ. 5, Ե., 2008, էջ 166:

<sup>22</sup> Տե՛ս ՀԱԲ, հ. 4, էջ 38:

<sup>22</sup> Տե՛ս ՀԱԲ, հ. 4, էջ 550:

<sup>23</sup> Տե՛ս Բ.Աղայան, *Արդի հայերենի բացատրական բառարան*, էջ 1551:

<sup>24</sup> Տե՛ս ՀԱԲ, հ. 4, էջ 550-551:

<sup>25</sup> Ռ.Ղազարյան, Հ.Ավետիսյան, *Միջին հայերենի բառարան*, էջ 799:

բայր<sup>26</sup>: Աճառյանը ենթադրում է, որ *գան* բառի «վերք», մանավանդ «կեղտոտ վերք» նշանակությունից պետք է բխած լինի գավառական *գանիլ* բայի «զգվել, գարշել» իմաստը<sup>27</sup>: Հայագետը չի նշում, թե որ բարբառն ունի այդ իրողությունը: Գավառական բառարանում կա *գան* «զգվանք, գանիլը», նաև՝ «*գանս կուգա*», բայց բարբառը չի նշվում<sup>28</sup>: Շիրակի մարզի խոսվածքներն ունեն *գանել*՝ «զգվել» բառը, իսկ Կարսի Ղրզրլչախչախ գյուղից եկածների խոսքում արձանագրվել է նաև *գանը գալ* ձևը (գ՛անըս էգավ)<sup>29</sup>:

### Բաղադրություններ

Հայերենի բարբառային բոլոր դրսևորումներն էլ բնութագրվում են բառերի բաղադրության հետաքրքրական իրողություններով, որոնք երևան են հանում լեզվի բառակազմական հարուստ հնարավորությունները: Ներկայացնենք Շիրակի բարբառային խոսքում դիտված ինքնատիպ մի քանի կազմություն:

Արմատական բառարանում *իիլ* արմատի առնչությամբ Աճառյանը հիշատակում է նաև հնից ավանդված *արմատաիիլ*, *տակաիիլ*, *փշաիիլ* բառերը<sup>30</sup>, ՀԼԲԲ-ում հանդիպում են *բանջարքաղի*, *բանջարխան* կազմությունները<sup>31</sup>: Շիրակի խոսվածքներում արձանագրել ենք *բ՛անջրիիլ*՝ «բանջարը արմատով հողից հանելու շեղք» իմաստով բառը, որը ՀԼԲԲ-ն վկայել է Կարնո բարբառում<sup>32</sup>: Կար-

<sup>26</sup> Տե՛ս ՀԱԲ, հ. 1, էջ 514:

<sup>27</sup> Տե՛ս ՀԱԲ, էջ 515:

<sup>28</sup> Տե՛ս **Հ.Աճառյան**, *Հայերեն գալատական բառարան*, 1913, էջ 219:

<sup>29</sup> Տե՛ս Հայերենի բարբառագիտական նյութերի հավաքման ծրագրով գրանցված թիվ 208 տետր:

<sup>30</sup> Տե՛ս ՀԱԲ, հ. 2, էջ 365:

<sup>31</sup> Տե՛ս ՀԼԲԲ, հ. 1, 2001, էջ 163:

<sup>32</sup> Նույն տեղում:

ծում ենք՝ այս բառի նախաձևն է *բանջարահիլ*, որի վերջի լ-ն ընկել է:

Շիրակի խոսվածքներում *աղանձ* հասկացությունն արտահայտվում է *խէձախ* բառով: Աճառյանը գավառական բառարանում բերում է *խայծաղ* ձև՝ «աղանձ, բոված ցորեն» իմաստով, և նշում է, որ Կյուրիհնի *խաձաղ* և Կարիհնի *խէձաղ* ձևերը հուշում են, որ նախնականն է *խայծաղ*՝ *խայծ* արմատով<sup>33</sup>: Արմատական բառարանում նշվում է, որ *խայծաղ* բնիկ հայերեն բառը կա միայն գավառականներում՝ *խաձաղ*, *խէձաղ* ձևերով և «աղանձած ցորեն» նշանակությամբ: Բնիկ հայերեն բառ է՝ *խայծ+աղ* (հմտ. կախ-աղան) բաղադրիչներով: Բառն արձանագրվում է Ախալցխայում, Մուշում, Սեբաստիայում<sup>34</sup>:

Մարզի խոսվածքներում տարածված է *ձեռքնթուխ* բառը՝ «ձեռքով թխված աթար (պատի քարերին ծեփված)» նշանակությամբ: Բառը վկայված է նաև ՀԼԲԲ-ում՝ վերագրվելով Կարիհնին, Շիրակին: Իբրև առաջին իմաստ բերված է «ձեռքով թխված հաստ ու տափակ հացի տեսակ» նշանակությունը, իբրև երկրորդ իմաստ՝ «ձեռքով թխված աթար»<sup>35</sup>: Դաշտային աշխատանքների ընթացքում առաջին իմաստը չենք արձանագրել՝ գուցե կենցաղում կատարված փոփոխության պատճառով:

Շիրակի խոսվածքներում մեծ տարածում ունի *ինչըխ* ձևը: Աճառյանը գավառական բառարանում բերում է *ինչպես* նշանակությամբ այս բառի հնչյունական տարբերակներ տարբեր բարբառախոս վայրերում՝ *ինչէխ* (Ակն), *ինչըխ* (Ախալցխա, Ախալքալաք, Կարին, Ոզն, Վան), *իշխո* (Դվին): Նա ենթադրում է, որ բառը

<sup>33</sup> Տե՛ս **Հ. Աճառեան**, *Հայերէն գաւառական բառարան*, էջ 450:

<sup>34</sup> Տե՛ս ՀԱԲ, հ. 2, էջ 326:

<sup>35</sup> Տե՛ս ՀԼԲԲ, հ. 3, էջ 329:

ձևավորվել է *ինչ ցեղ* կապակցության կրճատումով: Արմատական բառարանում Աճառյանը իր ենթադրությունը արդեն հաստատում է լեզվական փաստերով: Բնիկ հայերեն *ցեղ* արմատի համար նա նշում է «ազգատոհմ, սեռ, տոհմ» իմաստները, ապա դրա գավառական գործածությունների մեկնաբանությունում բերում է Սմբատ պատմիչից (13-րդ դար) «այսցեղ քաջությամբ» (այսպիսի քաջությամբ) օրինակը և նշում, որ Շատախում *ցեղ* բառն ունի «պէս, կերպ» նշանակությունը (Դու իմ ցեղ չես ապրի «դու ինձ պէս չես մեծացած»): Հայագետը եզրակացնում է, որ *ինչպես* նշանակությամբ *ինչեիս*, *ինչըիս* կամ *ինչըղ* ձևերը առաջացել են *ի՞նչ ցեղ* կապակցությունից<sup>36</sup>: Խնդրո առարկա բառին Աճառյանն անդրադառնում է նաև *ինչ* արմատի առնչությամբ՝ ուշադրություն հրավիրելով Մաղաքիա արեղայի (13-րդ դար) հետևյալ նախադասության վրա. ««Եհարց Հուլաւունն զխալիֆայն թէ ի՞նչ ցեղ կաս» (իմա՛ «ի՞նչպէս ես»)»<sup>37</sup>: Նշենք, որ նույն տրամաբանությամբ է ձևավորվել Մշո, Բայազետի, Սասունի բարբառներում գործածվող *իմալ* (ինչպէս) բառը՝ հավանաբար անցնելով հնչյունափոխական այսպիսի մի ուղի՝ *ինչի նման>ինման>իլման*<sup>38</sup>*>իմալ*:

### Եզրակացություն

Բարբառախոս յուրաքանչյուր հանրության բառապաշարը պարունակում է ժողովրդի տվյալ հատվածի լեզվամտածողությանը, լեզվամշակույթին ու կենցաղին բնորոշ հետաքրքրական շերտեր, որոնք կարևոր նշանակություն ունեն ոչ միայն լեզվական,

<sup>36</sup> Տե՛ս ՀԱԲ, հ. 4, էջ 453:

<sup>37</sup> Տե՛ս ՀԱԲ, հ. 2, էջ 245:

<sup>38</sup> *Նման* բառի՝ *լման* տիպի մի շարք բարբառային տարբերակներ բերված են Արմատական բառարանում (տե՛ս ՀԱԲ, հ. 3, էջ 459):

այլ նաև մշակութային, ազգագրական առումներով, էական են նաև ազգային ինքնության ուսումնասիրության ու նկարագրության տեսանկյուններով: Որևէ տարածքի բարբառային խոսքի բառապաշարի բնութագրիչ հատկանիշներից է նաև առանձին հասկացություններ արտահայտելու համար այլ տարածաշրջաններից տարբերվող բառային միավորների գործածությունը, որը կարող է պայմանավորված լինել անմիջական ու միջնորդավորված յուրօրինակ փոխառություններով, կարող է և արտահայտվել բառերի՝ հնից եկող իմաստների պահպանմամբ, փոփոխմամբ կամ զարգացմամբ, ինքնատիպ բաղադրությունների ձևավորմամբ: Նման հայեցակետով Շիրակի խոսվածքների բառապաշարին անդրադարձը թույլ է տալիս եզրակացնել, որ հիշյալ իրողությունների դիտարկումները ոչ միայն կարևոր են բարբառախոս որոշակի հանրության բառապաշարի առանձնահատկությունները վեր հանելու առումով, այլև կարող են առիթ դառնալ՝ կատարելու որոշ ճշգրտումներ և մեկնաբանություններ:

#### Օգտագործված գրականություն

Աղայան Է., Արդի հայերենի բացատրական բառարան, հ. 1-2, Ե., «Հայաստան» հրատ., 1976:

Աղայան Է., Լեզվաբանության հիմունքներ, ԵՊՀ, 1987:

Աճառեան Հ., Թուրքերեն փոխառեալ բառերը Պօլսի հայ ժողովրդական լեզուին մէջ համեմատութեամբ Վանի, Ղարաբաղի և Նոր-Նախիջեւանի բարբառներուն, Մոսկուա-Վաղարշապատ, Լազարեան ճեմարան, 1902:

Աճառեան Հ., Հայերէն արմատական բառարան, հ. 1-4, Ե., ԵՊՀ, 1926:

Աճառեան Հ., Հայերէն գաւառական բառարան, Թիֆլիս, Լազարեան ճեմարան, 1913:

Աւետիքեան Գ., Սիւրմէլեան Խ., Աւգերեան Մ., Նոր բառգիրք հայկազեան լեզուի, հ. 1, Վենետիկ, 1836:

Հայերենի բարբառագիտական նյութերի հավաքման ծրագրով գրանցված թիվ 208 տետր:

Հայոց լեզվի բարբառային բառարան, հ. 1, հ. 3, ՀՀ ԳԱԱ հրատ., 2001, 2004:

Ղազարյան Ռ., Ավետիսյան Հ., Միջին հայերենի բառարան, ԵՊՀ, 2009:

**Katvalyan Viktor - About some words characteristic to the speech of the Shirak region.-** The article examines three groups of words representing a number of lexical realities characteristic of the speech of the Shirak marz. a) borrowed words, b) words with unique semantic manifestations, c) formations characteristic of the speeches of the region. Reference to the vocabulary of Chirac's speeches allows us to conclude that observations of the mentioned realities are not only important in terms of highlighting the specifics of the vocabulary of a certain linguistic community, but can also become an opportunity to make some adjustments and interpretations.

**Keywords:** Dialect, Speech, Vocabulary, Word meaning, Word formation, Borrowing, Dictionary.

Katvalyan Victor, Doctor in Philology, Institute of Language of the National Academy of Sciences of the Republic of Armenia, Leading Researcher.

**Катвалян Виктор - О нескольких словах, характерных для диалектной речи Ширакской области.-** В статье рассматриваются три



группы слов, представляющие ряд лексических реалий, характерных для речи Ширакского марза. а) заимствованные слова, б) слова с уникальными смысловыми проявлениями, в) образования, характерные для говоров региона. Обращение к лексике диалектной речи Ширика позволяет сделать вывод о том, что наблюдения над упомянутыми реалиями важны не только с точки зрения выявления специфики лексики определенной языковой общности, но и могут стать поводом для внесения некоторых коррективов и интерпретаций.

**Ключевые слова:** диалект, говор, словарный запас, значение слова, словообразование, заимствование, словарь.

Катвалян Виктор, доктор филологических наук, Институт языка имени Р. Ачаряна НАН РА, ведущий научный сотрудник.

**ՄԱՐԱՂԱՅԻ ԲԱՐԲԱՌԻ ԽՈՍՎԱԾՔՆԵՐ  
ՆԱԽԻՋԵՎԱՆԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ\***

DOI: 10.54503/2738-277X.2024.1(21)-89

**Վարդանյան Արտակ**

բանասիրական գիտությունների թեկնածու,  
ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ,  
ավագ գիտաշխատակից. artva@list.ru

**Բանալի բառեր.** Մարաղայի բարբառ, խոսվածք, Նախիջևան, Գողթն, բարբառային հատկանիշներ, Վերին Ագա, Ներքին Ագա, Դեր:

**Նախաբան**

Նախիջևանի բարբառային բազմազանության մեջ 19-20-րդ դարերում գործածվում էին ոչ միայն տեղաբնիկ բարբառներ (Ագուլիսի, Ջուղայի, Արարատյան, Արցախ-Սյունիքի) և միջբարբառներ (Ճահուկ-Վայքի, Հյուսիսային Գողթնի), այլև 1828 թ. հաջորդող տարիներին Պարսկաստանից Նախիջևանի տարածք ներգաղթածների՝ Խոյի և Մարաղայի բարբառները:

Խոյի բարբառը ընդգրկում էր պատմական Հայաստանի Վասպուրական աշխարհի Նախճավան, Այրարատ աշխարհի Շարուր և Սյունիք աշխարհի Երնջակ գավառների 33 բնակավայր, Մարաղայի բարբառով էին խոսում պատմական Գողթն գավառի արաքսամերձ հատվածի ընդամենը 3 գյուղեր՝ Վերին Ագա, Ներքին Ագա և Դեր (Հավելված 1):

---

\* Ներկայացվել է 17.05.2024, գրախոսվել՝ 17.06.2024:

1918-1920 թթ. իրադարձությունների նախօրյակին, երբ բնակչության բացարձակ մեծամասնությունը կազմում էին հայերը, Նախիջևանի տարածքն ընդգրկում էր շուրջ յոթ տասնյակ հայաբնակ և մասամբ հայաբնակ քաղաքներ ու գյուղեր<sup>1</sup>:

Նախիջևանի Ինքնավար Հանրապետության կազմավորումից հետո՝ 1924 թ., հայ բնակչության թիվը չգերազանցեց 20 տոկոսը, քանի որ պետական մակարդակով խոչընդոտվեց տարածքից գաղթած հայության՝ հայրենի բնակավայրեր վերադարձը<sup>2</sup>: Ողջ խորհրդային շրջանում այդ հանրապետության դրսևորած հետևողական հակահայ քաղաքականության հետևանքով հայերի թիվը գնալով ավելի նվազեց և 1988-1989 թթ.՝ Նախիջևանի վերջնական հայաթափման նախօրյակին, կազմում էր տարածքի ընդհանուր բնակչության ընդամենը 1,5-2 տոկոսը:

Մարաղայի բարբառը կրող հիշյալ երեք բնակավայրերում այդ օրերին ընդամենը մի քանի տասնյակ հայեր էին ապրում, որոնք բռնությամբ տեղահանվեցին 1989 թ.: Այս երեք բնակավայրերի խոսվածքները, բարեբախտաբար, Հայերենի բարբառագիտական ատլասի նյութերի հավաքման ծրագրով ժամանակին գրանցել է մեր լուսահոգի գործընկեր Ալբերտ Խաչատրյանը<sup>3</sup>: Մեր նպատակն է գի-

<sup>1</sup> Ա-Ղո (Յովհաննէս Տէր-Մարտիրոսեան), *Հայ-թուրքական ընդհարումը Կովկասում (1905-1906թթ.)*. փաստական, վիճակագրական, տեղագրական լուսաբանություններով, Ե., 1907:

<sup>2</sup> А. Варданян, Изгнание коренного армянского населения из Нахиджевана.-*Зов Вушансара: статьи, эссе, рассказы*, Е., 2010, с. 51-56.

<sup>3</sup> Վերին Ազա, Ներքին Ազա և Դեր գյուղերի խոսվածքները Ալբերտ Խաչատրյանը գրանցել է 1977թ. (ԼԻ արխիվ, տետր հ. 14), բարբառախոսներ՝ Հայկանուշ Գյուլբուդաղյան (ծնվ. 1910թ.), Մայրիկ Նադիրյան (ծնվ. 1899թ.), Սուրեն Սահակյան (ծնվ. 1897թ.), Եղիշե Ամիրյան (ծնվ. 1906թ.), Վարդանուշ Եսայան (ծնվ. 1912թ.): Ա. Խաչատրյանը նշում է, որ այս երեք խոսվածքները լեզվական սերտ առնչություն են ներկայացնում:

տական պատշաճ մակարդակով հավաքված նյութի ընձեռած հնարավորության սահմաններում համեմատել Նախիջևանի Գողթն գավառի հիշյալ գյուղերի խոսվածքների (այսուհետև՝ խոսվածք) և Մարաղայի մայր բարբառի հատկանիշները, որոշակի եզրակացության հանգել այս խոսվածքի՝ նոր միջավայրում ունեցած բարբառային նկարագրի վերաբերյալ:

Մարաղայի բարբառը, որպես հայերենի առանձին բարբառ, դեռևս անցյալ դարի սկզբներին ուսումնասիրել է Հրաչյա Աճառյանը<sup>4</sup>, ինչպես հետագայում Մանվել Ասատրյանն է առանձին մենագրությամբ ուսումնասիրել Խոյի բարբառը<sup>5</sup>: Գևորգ Ջահուկյանը բազմահատկանիշ վիճակագրական սկզբունքի կիրառմամբ Խոյի և Մարաղայի բարբառներն ընդգրկել է մեկ բարբառային միավորում և անվանել Խոյ-Մարաղայի բարբառ հայերենի բարբառների արևելյան խմբակցության Խոյ-Մարաղայի կամ հարավարևելյան բարբառախմբում<sup>6</sup>:

Սույն աշխատանքում նախընտրել ենք կիրառել Հրաչյա Աճառյանի *Մարաղայի բարբառ* եզրույթը, քանի որ Գողթնի տարածքի խոսվածքը համեմատում ենք հենց Մարաղայի տարածքի մայր բարբառի հետ:

Ինչպես հայտնի է, Մարաղայի բարբառը գործածվել է Պարսկաստանի Ուրմիա լճից արևելք ընկած շուրջ մեկ տասնյակ բնակավայրերում (Մարաղա քաղաք, Շուշավա, Փեհրավա, Բինաբ, Միանբադ, Սուլդուզ, Խոջամիր, Թաղիաբադ, Սուջբուլաղ և այլ գյուղեր), որտեղ անհիշելի ժամանակներից են հայերն ապրել՝ ասորիների հետ համատեղ: 1828 թվականից հետո Մարաղայի հայության

<sup>4</sup> Հ. Աճառյան, *Քննություն Մարաղայի բարբառի*, Ե., 1926:

<sup>5</sup> Մ. Ասատրյան, *Ուրմիայի (Խոյի) բարբառը*, Ե., 1962:

<sup>6</sup> Գ. Ջահուկյան, *Հայ բարբառագիտության ներածություն*, Ե., 1972, էջ 135:

կեսը գաղթել է Կովկաս, ներառյալ՝ Նախիջևան, Արցախ<sup>7</sup>: Հայտնի է, որ Նախիջևանի Վերին և Ներքին Ազաներ և Դեր գյուղեր ժամանակին հայեր են ներգաղթել Մարաղայի Սուլդուզ գյուղից<sup>8</sup>:

### Տեղանունների ստուգաբանություն

Կարծիք կա, որ *Ազա* տեղանունը, վերջնահնչյունի անկմամբ, բխում է Գողթնի պատմական *Ազատ* քաղաքի անվանումից<sup>9</sup>, մանավանդ աշխարհագրորեն հենց հնագույն այդ քաղաքատեղիի տարածքում են տեղադրված Վերին Ազա (Yuxarı Aza), Ներքին Ազա (Aşağı Aza, Azadkənd) և Դեր (Dər, Darkənd) գյուղերը, որոնց տարածքում և մեծակա դաշտերում պահպանվել են պատմական քաղաքի որոշ հատվածներ, ոչ հեռու՝ նաև Ազատ բերդը:

Ազային հարևան *Դեր* գյուղի, ինչպես նաև ոչ հեռու գտնվող *Դիսար* (Başkənd) գյուղի անվանումներն էլ ամենայն հավանականությամբ կապված են պատմական *Դեդիսար*<sup>10</sup> տեղանվանը և վերջինիս ամփոփված ձևերն են:

### Դիտարկումներ

Հիշյալ երեք գյուղերի խոսվածքում Մարաղայի բարբառին խիստ բնորոշ հնչյունափոխական օրենքները (բառասկզբի ձայնեղ պայթականների և պայթաշփականների խլացում, Աձառյանի օրենք, *ü, ö, ü* քմային ձայնավորների և *q, k, p* քմային բաղաձայնների առկայություն, ձայնավորների ներդաշնակություն, գաղտնա-

<sup>7</sup> Հ. Աձառեան, նշվ. աշխ., էջ 10:

<sup>8</sup> Թ. Հակոբյան, Ս. Մելիք-Բախշյան, Հ. Բարսեղյան, *Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան*, Ե., 1988, էջ 85:

<sup>9</sup> Ա. Այվազյան, *Նախիջևանի վիմագրական ժառանգությունը. Գողթն գավառ*, հ. Գ, Ե., 2007, էջ 66:

<sup>10</sup> Ա. Այվազյան, նշվ. աշխ., էջ 67-68:

վանկի լիաձայնություն, բառասկզբի *h* հնչյունի դիմաց՝ *h*, օտար բառերի բառասկզբի *ʃ*-ի դիմաց՝ *ʃh*, վերջնավանկային շեշտ և այլն) ընդհանուր առմամբ պահպանվել են: Այնուամենայնիվ, կան հնչյունական հատկանիշների որոշակի առանձնահատկություններ, որոնք դրսևորվել են հետագայում՝ նոր միջավայրում:

Հրաչյա Աճառյանը Մարաղայի բարբառին վերաբերող «Քննություն Մարաղայի բարբառի» հիմնարար աշխատանքում նշում է ձայնավորների և երկբարբառների բավական հարուստ համակարգ՝ 11 ձայնավոր (*a, o, nɪ, t, h, h', ɹ, ɹ̃, ü, ö, iii*) և 6 երկբարբառ (*ɹt, ɹh, nɪt, nɪh, o', o'h*), բաղաձայնական համակարգում՝ 34 հնչյուն, ներառյալ՝ գրական արևելահայերենի բաղաձայններից տարբերվող *q, ʃ, p'* քմայինները, ինչպես նաև *z, j'* հնչյունները:

Նոր միջավայրում, սակայն, բոլոր երկբարբառները և *h', ɹ̃* ձայնավորները վերացել են (ոսկի > *վճսկի* > *վէշճի*, ամիս > *ամրիս* > *ամիս*, անձրև > *անձրվրի* > *անձվիր*, եղբայր > *ախպրի* > *ախպեր*, խաւիժ > *խաւրիժ* > *խաւիժ*, թագաւոր > *թաքաւրի* > *թաքաւեր*), իսկ *q, ʃ, p'* քմային բաղաձայնները համապատասխանաբար վերածվել են *ջ, ճ, չ* պայթաշփականների: Փաստորեն, մեկուկես դարի ընթացքում նոր միջավայրում այդ երևույթը դարձել է համատարած՝ գինի > կիհի > *ճինի*, գարի > *կւրի* > *ճւրի*, գերեզման > *կերէզման* > *ճերէզման*, բակ > *պսկ* > *պսճ*, վառեակ > *վառէկ* > *վառէճ*, կես > *կէս* > *ճէս*, ոսկի > *վէսկի* > *վէշճի*, քոյր > *քուր* > *չուր*, քորել > *քուրել* > չօրել, ականջ > *սնգսնջ* > *սնջսնջ*, կարենալ > *գւրսնլ* > *ջւրսնլ* և այլն: Ի դեպ, հնչյունափոխության վերջին երևույթի նախանշանները դեռևս անցյալ դարասկզբին Մարաղայի բարբառում նկատել է Հրաչյա Աճառյանը: Նա նշում է. «Նկատելի ձայնաբանական երևոյթ է, որ այս *q, ʃ, p'*

ձայները արդեն սկսել են դառնալ *ջ, ճ, չ*: Միևնույն ընտանիքում երկու հնչյունն էլ կայ: Շատ հետաքրքիր է դիտել նոր սկսուող ձայնաբանական երևոյթի ընթացքը: Տեղացիք ձայնափոխութիւնը նկատում են և այդպէս հնչողներին պակասատր կամ լեզուն քաղցր են համարում:»<sup>11</sup>:

Խոսվածքում վերացել է նաև *ւ* հնչյունը՝ վերածվելով *վ*-ի՝ *խաւրիժ > խավիժ, չոււան > չուվան, շոււար > շուվար*:

Մարաղայի բարբառի ա/ւն որոշիչ հողը խոսվածքում հարագատորեն պահպանվել է՝ *մարթա, ճէտինսւ, կուլօխսւ, պէրսնսւ* և այլն:

Հոգնակերտ ամենակիրառական *քէր* մասնիկը, ենթարկվելով հնչյունափոխության, նույնպէս պահպանվել է՝ *ականջներ > անգւնջքիր > անջւնջէր, ջրաղացներ > ճւնդւնջքիր > ճւնդւնջէր*, կայծակներ *> կէճալքիր > կէճալչէր*, աղջիկներ *> ախչիլքիր > ախչիլչիր* և այլն:

Հրայա Աճառյանը նշում է, որ Մարաղայի բարբառում *բաղաձայն+ն* վերջավորությամբ բառերում *ն*-ն «ընկնելու վրա է». խոսվածքում այն լիովին ընկել է՝ *տուռէր, ակէր, յէգէր, ծընգէր, մուկէր* և այլն:

Լիարժեք պահպանվել են բացառականի *էն* և գործիականի *օվ* վերջավորությունները:

*Ես, դու, մենք, դուք* անձնական դերանունների տրականները տարբերվում են հնչատարբերակներով՝ *ինձի, քէգի, միգի, ծիգի - ինձը, չէգը, մէգը, ծէգը*:

Անկատար դերբայը կազմվում է *լ(ի)* վերջավորությամբ և կրկին տարբերվում հնչատարբերակներով՝ *սիրէլ(ի)//սիրալ իւ, իս, ի, ինք, էք, ին - սիրալ իւ, իս, ը, ինչ, էչ, ին*:

<sup>11</sup> **Հ. Աճառեան**, նշվ. աշխ., էջ 21:

Ապառնի դերբայը նույնպես հնչատարբերակված է՝ *ասալու//ասուլը իմ//ոււմ, իս//ոււս, ի//ու, ինք//իյ՞, էք, ին - ասուլը իմ/, իս, ը//ու, ինք, էք, ին:*

Օժանդակ բայով կազմվող ժխտականը նախադաս է՝ *չիւմ, չիս, չի, չինք, չէք, չին տալը//տալի - չիւմ, չիս, չի, չէք, չին տալը:*

Անցյալ կատարյալի եզակի առաջին դեմքը կազմվում է *ւ-*ով՝ *խըմամ, խասամ*։ Երևույթը բնորոշ է շրջակա՝ Նախիջևանի և Վասպուրականի տարածքի բարբառների մեծ մասին:

Ընդհանուր առմամբ, կարելի է ասել, որ խոսվածքի հոլովման և խոնարհման համակարգերը հիմնականում համապատասխանում են Մարադայի բարբառի համակարգերին՝ սակավաթիվ առանձնահատկություններով: Ի դեպ, այդ առանձնահատկությունների մի մասն էլ գուզահեռ ձևերով առկա է նաև մայր բարբառի խոսվածքներում:

Մի քանի խոսք խոսվածքի բառապաշարի մասին. այն գրեթե անադարտորեն պահպանել է մայր բարբառի բառապաշարը, առկա են միայն որոշ տարբերություններ՝ մոտավորապես բառապաշարի 10 տոկոսի հաշվարկով: Օրինակներ՝ *ճըղըզ-խազ* («գիծ»), *փաջա-էրթիս* («երդիկ»), *նավդան-ճօրնակաթ* («ջրհորդան»), *յապպա-չյւրւմւմ* («աթար»), *մյւքւմ-կուկուրուզ* («եգիպտացորեն»), *չոյչոյնդոյր-պւմ-գուկ* («բագուկ»), *դադդդան-ադինջ* («եղինջ»), *արագիլի խաց-փււր-փինւմ* («փիփերթ»), *դըմըղ-մւննջիր* («փոցխ»), *ւյլջւյ-ձէրնօց* («ձեռնոց»), *լւնդւր-ճիլօ* («նիհար»), *չըրթըղ-պիճ* («գարեկ») և այլն: Որոշ բառեր էլ պահպանվել են ուղղակի հնչունափոխված՝ *ճւրխսւկ-ճւրխսւճ* («ճախարակ») *ունգուզ-ւնգօզ* («ընկույզ»), *խսւզւլ-խազալ* («աշնան չոր տերև»), *չիխկըլւմ-չսկսւլւմ* («խակ ծիրան»), *ճուչ-ճօջ* («մեծ») և այլն:



### Եզրակացություն

Այսպիսով՝ 19-րդ դարում Պարսկաստանի Մարաղայի շրջանից Նախիջևանի Գողթն գավառի Վերին Ազա, Ներքին Ազա, Դեր գյուղերում վերաբնակված բնակիչների խոսվածքի և Մարաղայի բարբառի բարբառային հատկանիշների համեմատությունը ցույց է տալիս, որ մայր բարբառը նոր միջավայրում հիմնականում պահպանվել է: Մասամբ փոփոխության է ենթարկվել հնչյունական համակարգը (երկբարբառների պարզեցում, *զ*, *կ*, *ք* քմայինների փոխարինում *ջ*, *ճ*, *չ* պայթաշփականներով, *չ* հնչյունի բացակայություն և այլն): Խոսվածքի հոլովման և խոնարհման համակարգերը հիմնականում համապատասխանում են Մարաղայի բարբառի համապատասխան համակարգերին՝ սակավաթիվ առանձնահատկություններով: Անաղարտորեն պահպանել է նաև մայր բարբառի բառապաշարը՝ որոշ տարբերություններով:

Կարելի է եզրակացնել, որ Նախիջևանի տարածքի ութ բարբառների թվում մինչև անցյալ դարի երկրորդ կեսը հարազատորեն պահպանվել և գործածվել են նաև Մարաղայի բարբառի խոսվածքները՝ հնչյունաբանական, ձևաբանական և բառապաշարային ոչ մեծ առանձնահատկություններով:



### Օգտագործված գրականություն

Ա.Դո (Տէր-Մարտիրոսեան Յ.), Հայ-թուրքական ընդհարումը Կովկասում (1905-1906թթ.), փաստական, վիճակագրական, տեղագրական լուսաբանություններով, Ե., 1907:

Աճառեան Հ., Քննություն Մարաղայի բարբառի, Ե., 1926:

Այվազյան Ա., Նախիջևանի վիմագրական ժառանգությունը. Գողթն գավառ, հ. Գ, Ե., 2007:

Ասատրյան Մ., Ուրմիայի (Խոյի) բարբառը, Ե., 1962:

Հակոբյան Թ., Մելիք-Բախշյան Ս., Բարսեղյան Հ., Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, Ե., 1988:

Հայերենի բարբառագիտական ատլասի նյութեր. Մարաղա (Իրան), ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի արխիվ, տետր հ. 358:

Հայերենի բարբառագիտական ատլասի նյութեր. Վերին Ազա (Նախիջևան), ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի արխիվ, տետր հ. 14:

Ջահուկյան Գ., Հայ բարբառագիտության ներածություն, Ե., 1972:

Варданын А., Изгнание коренного армянского населения из Нахиджевана.-Зов Вишапасара: статьи, эссе, рассказы, Е., 2010.

**Vardanyan Artak - Subdialects of the Artsakh-Syunik dialect in the Territory of Nakhijevan.**-The article is devoted to a comparison of the dialectal characteristics of the Maragha dialect with the general dialect of the residents who moved to the villages of Verin Aza, Nerkin Aza, Der Gokhtn province of Nakhijevan in the first half of the 19th century from the Maragha region of Persia. The study shows that the mother dialect was largely preserved in the new environment. The phonetic system underwent partial changes (simplification of diphthongs, replacement of palatal *q'*, *ly'*, *p'* with

affricates ջ, ճ, չ, absence of sound լ, etc.). The dialect's declension and conjugation systems basically correspond to the corresponding systems of the Maragha dialect, with few peculiarities. The vocabulary of the mother dialect has also been preserved in its immaculate form, with a limited number of differences.

It can be concluded that among the eight dialects on the territory of Nakhijevan, until the second half of the last century, the dialects of the Maragha dialect, with minor phonetic, morphological and lexical features, were also preserved and used.

**Keywords:** Maragha dialect, Subdialect, Nakhijevan, Goghthn, Dialect features, Verin Aza, Nerkin Aza, Der.

Vardanyan Artak, PhD in Philology, Institute of Language named after H. Acharyan of NAS RA, Senior Researcher.

**Варданян Артак – Говоры Марагинского диалекта на территории Нахиджевана.** – Статья посвящена сравнению диалектных признаков Марагинского диалекта с общим говором жителей, переселившихся в села Верин Аза, Неркин Аза, Дер Гохтнской провинции Нахиджевана в первой половине XIX веке из Марагинской области Персии. Исследование показывает, что мать-диалект в основном сохранился в новой среде. Частичному изменению подверглась фонетическая система (упрощение дифтонгов, замена палатальными  $q'$ ,  $y'$ ,  $p'$  на аффрикаты ջ, ճ, չ, отсутствие звука լ и т. д.). Системы склонения и спряжения говора в основном соответствуют соответствующим системам Марагинского диалекта, с малочисленными особенностями. Лексика мать-диалекта также сохранилась в беспорочном виде, с ограниченным числом различий.

Можно сделать вывод, что среди восьми диалектов на территории Нахиджевана до второй половины прошлого века сохранялись и употреблялись также говоры Марагинского диалекта, с незначитель-

---

ными фонетическими, морфологическими и лексическими особенностями.

**Ключевые слова:** Марагинский диалект, говор, Нахиджеван, Гохтн, диалектные признаки, Верин Аза, Неркин Аза, Дер.

Варданян Артак, кандидат филологических наук, Институт языка имени Р. Ачаряна НАН РА, старший научный сотрудник.

## Ք Ն Ն Ա Ր Կ Ո Ւ Մ

ԳՐԱԿԱՆ ԱՐԵՒՄՏԱՀԱՅԵՐԷՆԻ ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ  
ՀԱՄԱԿԱՐԳԻ ՏԵՂԱՇԱՐԺԵՐԸ՝ ԸՍՏ ԱՐԵՒՄՏԱՀԱՅԵՐԷՆԻ  
ԱՌԿԱՅ ԴԱՄԱԳԻՐՔԵՐՈՒ (ԲԱՅ)\*

DOI: 10.54503/2738-277X.2024.1(21)-101

## Ֆիշենկձեան Անի

պատմական գիտություններու թեկնածու,  
ՀՀ ԳԱԱ Հ. Աճառեանի անուան լեզուի ինստիտուտ,  
գիտաշխատող. fishenkjianani@gmail.com

**Բանալի բառեր.** քերականական համակարգ, անկանոն, զարտուղի, տեղաշարժ, արեւմտահայերէն, բայածանց:

## Նախաբան

Գրական արեւմտահայերէնի քերականական համակարգի բոլոր ոլորտներուն՝ հնչյունաբանութեան, ձեւաբանութեան եւ շարահիւսութեան մէջ առկայ եւ նկատելի են փոփոխություններ, որոնք հայ լեզուաբանական գրականութեան մէջ բնութագրուած են «տեղաշարժեր» եզրաբառով: Արեւմտահայերէնի քերականական համակարգերու փոփոխություններուն առաւել չափով անդրադարձած են հայրենի լեզուաբաններ<sup>1</sup>:

Մէկդարեայ սփիւռքի գոյութեան ժամանակահատուածին, յատկապէս Մերձաւոր Արեւելքի մէջ ձեւաւորուած համայնքները յոգուտ կրթամանկավարժական գործունէութեան, հնարաւորը կա-

\* Ներկայացվել է 13.06.2024, գրախոսվել՝ 24.06.2024:

<sup>1</sup> Յու. Ավետիսյան, *Տեղաշարժեր արդի գրական հայերենում*, Ե., 2011, 92 էջ:

տարած են մատղաշ սերունդը թրքախօսութենէ, քրտախօսութենէ եւ արաբախօսութենէ հեռու պահելու, եւ այդ միտումով սկիզբ առած է դպրոցական դասագիրքերու պատրաստութիւնը, նախաեղեոնեան ժամանակաշրջանի արեւմտահայերէնի ծաղկուն լեզուն վերադարձնելու սփիւռքի արեւմատախօս հատուածին:

Թէեւ դասագիրքերու պատրաստութիւնը դանդաղ կ'ընթանար, սակայն արեւմտահայերէնը սկսած էր մատուցուիլ հրապարակի վրայ առկայ դասագիրքերով, որոնց մեծապէս նպաստեցին՝ եկեղեցին, մամուլն ու թատրոնը:

Օր ըստ օրէ հրապարակուած քերականութեան նոր դասագիրքերը նախորդներէն գրեթէ ոչինչով կը տարբերէին: Իսկ եթէ կը տարբերէին չկար պարզաբանում, որ պայմանաւորուած էր « ... տպագրական սահմանափակ կարելիութիւններով, ինչպէս եւ տարակարծութիւնները՝ գիտական ուժերու ցրուածութեամբ եւ միասնական կեդրոնի բացակայութեամբ»<sup>2</sup>:

Արեւմտահայերէնի քերականական կարգերու ուսումնասիրութիւնը բացի Սփիւռքի շարք մը մտաւորականներէն<sup>3</sup>, առաւել հետաքրքրած է հայրենի լեզուաբանները, որոնք իրենց հետազօտական աշխատանքները հրապարակած են մենագրութեամբ եւ կամ յօդուածաշարով:

Սոյն աշխատանքը նուիրուած է իօսքի մասերէն՝ Արեւմտահայերէնի բայական համակարգի լծորդութեանց եւ բայահիմքի ու լծորդութեան միջեւ առկայ բայածանց- սոսկածանց համակարգման, զարտուղի եւ անկանոն բայ կամ խոնարհում հասկացութեան (եզրոյթի գործածութեան պարզաբանման) արեւմտահայերէնի

<sup>2</sup> Ս.Աբրահամեան, Բ. Վերդեան, Վ. Քոսեան, *Հայերէն լեզուի դասագիրք*, Երկրորդ հրատարակութիւն, Ե., 1968, էջ 3:

<sup>3</sup> Եղ. Տասնապետեան, *Քերականութիւն*, Անթիլիաս, 1990:

առկայ տարբեր դասագիրքերու հեղինակներու կողմէ. *կ'ուսումնասիրէ* արեւմտահայերէնի ձեւաբանական քերականական կարգի մէջ արտացոլուած տեղաշարժերը, որոնք կը վերաբերին բայի՝ լրծորդութեան, բայածանցի, կամ ինչպէս ընդունուած է արդի արեւմտահայերէնի քերականութեան մէջ անուանել՝ սուկածանց: Աւարտին յօդուածը կը յանգի եզրակացութիւններու, որոնք կրնան հիմք հանդիսանալ արեւմտահայերէնի գիտական քերականութեամբ զբաղողներուն եւ դասագիրքերու հեղինակներուն:

Աշխատանքի արդիականութիւնը նորովի ուսումնասիրել եւ ցոյց տալ այն փոփոխութիւնները, որոնք լեզուի զարգացման այս շրջափուլին (20-րդ եւ 21-րդ դարու սկիզբը) նկատելի են դասագիրքերուն մէջ: Յօդուածին նպատակն է պատմաբանասիրական հետազոտութեան ուղիով առանձանցնել իւրաքանչիւր հեղինակի տեսութիւնը բայի քերականական համակարգի օրինաչափութեան եւ առանձնայատկութիւններուն, համաձայն գրական արեւմտահայերէնի առկայ դասագիրքերուն եւ ցոյց տալ փոփոխութիւնները: Այս ուսումնասիրութեան համար սահմանուած են հետեւեալ խնդիրները.

-բնութագրել բայածանց հասկացութիւնը.

-նշել բայածանցներու տեսակները.

-հիմնաւորել զարտուղի եւ անկանոն բայեր կամ զարտուղի եւ անկանոն խոնարհում հասկացութիւններ:

Սոյն աշխատանքի շրջանակներուն ուսումնասիրուած են շարք մը բանասէրներու կողմէ՝ Հայր Արսէն Վ. Այտընեանի<sup>1</sup>, Չապլէ Ասատուրի<sup>2</sup>, Յովհաննէս Գազանճեանի<sup>3</sup>, Չարեհ Մելքոնեանի<sup>4</sup>,

<sup>1</sup> **Հ. Արսէն Վ. Այտընեան**, *Քերականութիւն աշխարհաբար կամ արդի հայերէն լեզուի*, Բ. տպագրութիւն, Վիեննա, 1883:

<sup>2</sup> **Չ. Տօնէլեան**, *Գործնական քերականութիւն արդի աշխարհաբարի*, Բ. գիրք, Վ. Պոլիս, 1899:



Մկրտիչ Մկրտիչեանի<sup>5</sup>, Կարո Առաքելեանի<sup>6</sup>, Յակոբ Չոլաքեանի<sup>7</sup>, պատրաստուած արեւմտահայերէնի դասագիրքերը, եւ փորձած ենք համեմատել զանոնք Արմենակ Եղիայեանի ուղղախօսական աշխատութեան հետ<sup>8</sup>:

### Բայերու կառուցային եւ խոնարհական տեղաշարժերը արեւմտահայերէնի մէջ

Մեր լեզուի երկու դրսեւորումներու քերականագիտութեան

<sup>3</sup> **Յովհ. Գագանճեան**, *Նոր քերականութիւն արդի հայերէն լեզուի*, միջին դասընթացք, Կ. Պոլիս, 1919: **Յովհ. Գագանճեան**, *Նոր քերականութիւն արդի հայերէն լեզուի*, Ա. եւ Բ. Մաս, Կ. Պոլիս, 1924; **Յովհ. Գագանճեան**, *Նոր քերականութիւն արդի հայերէն լեզուի*, տարրա-կան դասընթացք, Բ. տպագրութիւն, Իսթանպուլ, 1947; **Յովհ. Գագանճեան**, *Նոր քերականութիւն արդի հայերէն լեզուի*, միջին դասընթացք, Անթիլիաս-Լիբանան, 1980; **Յովհ. Գագանճեան**, *Նոր քերականութիւն արդի հայերէն լեզուի*, Թ. տպագրութիւն, Իսթանպուլ, 1995:

<sup>4</sup> **Զ. Մելքոնեան**, *Գործնական քերականութիւն արդի հայերէնի*, Հալէպ, 1950: **Զ. Մելքոնեան**, *Գործնական քերականութիւն արդի հայերէն լեզուի*, տարրական դասընթացք, Գ. տպագրութիւն, վերամշակուած, Պէյրութ, 1966; **Զ. Մելքոնեան**, *Գործնական քերականութիւն արդի հայերէն լեզուի*, նախապատրաստական դասընթացք, Գ. տպագրութիւն, Պէյրութ, 1968; **Զ. Մելքոնեան**, *Գործնական քերականութիւն արդի հայերէն լեզուի* (միջին եւ բարձրագոյն դասընթացք, Գ. տպագրութիւն, Պէյրութ, 1966; **Զ. Մելքոնեան**, *Գործնական քերականութիւն արդի հայերէն լեզուի*, (միջին եւ բարձրագոյն դասընթացք), Դ. տպագրութիւն, Պէյրութ, 1973; **Զ. Մելքոնեան**, *Գործնական քերականութիւն արդի հայերէն լեզուի*, նախապատրաստական դասընթացք, Ե. տպագրութիւն, Պէյրութ, 1983:

<sup>5</sup> **Մ. Մկրտիչեան**, *Քերականութեան դասեր*, Բ. գիրք, (Նախակրթարանի Ե.-Զ. կարգերուն համար), Հալէպ, 1962: **Մ. Մկրտիչեան**, *Քերականութեան դասեր*, Բ. գիրք, Հալէպ, 1982; **Մ. Մկրտիչեան**, *Քերականութեան դասեր*, Գ. գիրք, Հալէպ, 1995:

<sup>6</sup> **Կ. Առաքելեան**, *Արդի հայերէնի քերականութիւն*, Ա. գիրք, Պէյրութ, 1998; **Կ. Առաքելեան**, *Արդի հայերէնի քերականութիւն*, Բ. գիրք, Պէյրութ, 1998; **Կ. Առաքելեան**, *Արդի հայերէնի քերականութիւն*, Գ. գիրք, Պէյրութ, 1998: **Կ. Առաքելեան**, **Ա. Ֆըստրօզճեան**, *Դիւրին շայերէն 2*, Բ. տիպ, բարեփոխուած, Պէյրութ, 2008:

<sup>7</sup> **Յ. Չոլաքեան**, *Անդաստան*, Գ. գիրք, Հալէպ, 2010:

<sup>8</sup> **Ա. Եղիայեան**, *Արեւմտահայերէնի ուղղագրական, ուղղախօսական, ոճարանական ուղեցոյց*, Պէյրութ-Լիբանան, 2022. <https://nayiri.s3.amazonaws.com/A+Manual+for+Western+Armenian++Armenag+Yeghiayan++2022.pdf>

մէջ ընդունուած է բայը համարել առանձին խօսքի մաս հետեւեալ պատճառներով.

-Բայ համարուող բառերը թեքուող են եւ ունին գործողութիւն կամ եղելութիւն ցոյց տալու յատկանիշը՝ բան մը ընողի եւ եղողի դերով:

-Բայը ունենալով յատուկ քերականական կարգ՝ թիւ, դէմք, եղանակ եւ ժամանակ, հասկնալի է, որ խօսքիմաստին համաձայն ձեւ կը փոխէ. ուրեմն՝ թեքուող խօսքի մաս է:

Մեր յօդուածի շարադրանքի համար հիմք ընդունած ենք Հայր Արսէն Այտընեանի արեւմտահայերէնի քերականութեան վերաբերող աշխատութիւններէն մէկը<sup>9</sup>, որ տարիներ շարունակ հիմք հանդիսացաւ արեւմտահայերէնի ուսուցման, դասագիրքերու պատրաստման եւ ուսումնասիրութեան:

Հայերէնի մէջ, ինչպէս այլ լեզուներու պարագային, բայը ունի իր բնորոշ ձեւը: Անոր ուղիղ ձեւը արեւմտահայերէնի մէջ *ել, իլ ալ* (եւ *ուլ*) ածանց վերջաւորութիւնն է: Բայը կրնայ ձեւափոխուիլ ըստ դէմքի, թիւ, ժամանակի եւ եղանակի կազմելով դիմաւոր բայ: Այդպիսի ձեւափոխութիւնը կը կոչուի խոնարհում: Արեւմտահայերէնի քերականութեան դասագիրքերու մէջ բայի խոնարհման յարացոյց՝ տեղաշարժ-փոփոխութիւններ առաւել կը նկատենք բայի խոնարհման համակարգի մէջ:

**ա. Բայի լծորդութիւն. զարտուղի եւ անկանոն բայեր (Այտընեանէն մինչեւ վաթսուներկու թուականներ)**

Այտընեանի համաձայն բայը ունեցած է երեք խոնարհիչ՝ ե-

---

<sup>9</sup> **Ն. Արսէն Վ. Այտընեան**, *Քերականութիւն աշխարհաբար կամ արդի հայերէն լեզուի*, Բ. տպագրութիւն, Վիեննա, 1883:

*ի-ա*, բայց չորս լծորդութիւն՝ *ել-գրել, իլ-խօսիլ, ալ-կարդալ* եւ *նալ-մոռնալ*: Հեղինակը կը գրէ, որ լծորդութիւնները աներեւոյթ ժամանակի մէջ կ'որոշուին. այս արտայայտութեամբ հեղինակը նկատի ունի բայերու խոնարհման տարբերութիւնները կամ «խոնարհման կերպ»ը: Այդ պատճառով՝ *ալ* աներեւոյթով (անորոշ դերբայ) բայերը երկու ձեւով կը ներկայացնէ՝ *ալ-նալ*:

Այսրնեան «չորս լծորդութիւններէ դուրս մնացած *ուլ* վերջաւորութեամբ քանի մը բայ. *թողուլ*՝ *թողի* կամ *թողուցի*, *թո՛ղ*, *թողուցէ՛ք*, *թողած* կամ *թողուցած*, *թողեր* կամ *թողուցեր*, *կր[կրաւորական]՝ թողուիլ* կամ *թողուցուիլ*», զարտուղի կը համարէ: Ան *ուլ* աներեւոյթով բայերը կը նկատէ գրաբար բայեր ու կը դասէ զարտուղներու շարքին. կ'ըսէ, որ *թող տալ* բային մէջ միայն *տալ* բայը կը խոնարհուի: *Առնուլ* կամ *առնել*, *երդնուլ*՝ *երդուայ*, *երդուի՛ր*, *երդուող*, *երդուած*. կամ *երդուըննալ*, *երդում ընել*. *զբօսնուլ*՝ *զբօսայ*, *զբօսի՛ր*, *զբօսող*, *զբօսած*. կ'ըլլայ նաեւ *զբօսանալ*, *զբօսանք ընել*<sup>10</sup>:

Այսրնեանի համար զարտուղի բայերը «կ'ըլլան զարտուղիք եւ կէս զարտուղիք»<sup>11</sup>: Կէս զարտուղի բայերը Այսրնեան կը համարէ «*նել, նիլ, նալ*» վերջաւորութիւն ունեցող բայերը: Այսրնեան կէս զարտուղի բայեր կը կոչէ՝ *գտնել, տեսնել, պագնել, մտնել, դառնալ, իջնալ, հասնիլ, անցնիլ, մեռնիլ, ծնանիլ, թքնել, հեծնալ, խածնել*. նոյնպէս *չիլ* վերջաւորութեան բայերը, որոնց չ-ն դուրս կը դրուի՝ *թռչիլ, փախչիլ, փլչիլ, դպչիլ, կպչիլ փակչիլ*: Ինչպէս կը նկատենք՝ վերեւ տեղադրուած բայերուն բայարմատի եւ լծորդութեան միջեւ առկայ են մէկ (ն) կամ երկու գիր (ան), որոնք միջածանցի դերով հանդէս եկած են: Վերոնշեալ բայերուն անցեալ կատարեա-

<sup>10</sup> Հ. Արսէն Վ. Այսրնեան, նշ. աշխ., էջ 53-54:

<sup>11</sup> Հ. Արսէն Վ. Այսրնեան, նշ. աշխ., էջ 51:

լի հիմքը կ'ըլլայ արմատական՝ հեռացնելով «ն, ան, չ» ներքին քայածանցները. Օրինակ՝ *գտնել-գտ, տեսնել-տես, պագնել-պագ, մտնել-մտ, իջնալ-իջ, հասնիլ-հաս* եւ այլն: Այտրնեան միջածանց ունեցող բայերու շարքին կը դասէ Իլ լծորդութեան պարզ բայերէն մէկ քանին՝ «սկսիլ, փրթիլ, պրծիլ», որոնց անցեալ կատարեալի հիմքը ի տարբերութիւն իլ լծորդութեան միւս պարզ բայերուն արեւմտահայերէնի մէջ բացառութիւն են եւ ցոյականի փոխարէն կ'ունենան արմատական հիմք: (օրինակ՝ սկսիլ-անցեալ կատարեալի հիմքը սկսայ եւ ոչ սկսեցայ)<sup>12</sup>: Այտրնեան միջածաց չունեցող *ելլել, ըլլալ* բայերը կը դասէ կէս զարտուղիներու շարքին: Հեղինակը *ելլել-ելանել* եւ *ըլլալ-ըլնալ* հնագոյն ձեւին պատճառաւ կէս զարտուղի կը համարէ<sup>13</sup>:

Արդ, արդի արեւմտահայերէնի մէջ *ելլել* բայը զարտուղի է (ելայ-ելար-ելաւ, ելանք-ելաք-ելան), իսկ *ըլլալը*՝ անկանոն (եղայ-եղար-եղաւ, եղանք, եղաք, եղան):

Այտրնեան բուն զարտուղի կը համարէ *բերել, ըսել, ընել, դնել, առնուլ (առնել), զարնել, տանիլ, բանալ, լալ, նստիլ, իյնալ, տալ, գալ, ուտել* բայերը, որոնց «միայն անկանոն ժամանակները դրինք» կը գրէ հեղինակը<sup>14</sup>: Համեմատելով արդի արեւմտահայերէնի դասագիրքերու հետ, կը նկատենք որ հեղինակը զարտուղի կը համարէ ներկայիս անկանոն խոնարհման ենթարկուող (կամ անկանոն բայեր համարուող) բայերը՝ *ընել, դնել, զարնել, տանիլ, իյնալ, տալ, գալ* եւ *ուտել*<sup>15</sup>:

Չ. Տօնկեան (Մաստուր) թէեւ շարունակած է Այտրնեանի քերականական հայեացքները, բայց *ուլ*-ով վերջացող քանի մը քա-

<sup>12</sup> Հ. Արսէն Վ. Այտրնեան, նշ., աշխ., էջ 51-52:

<sup>13</sup> Հ. Արսէն Վ. Այտրնեան, նշ., աշխ., էջ 52:

<sup>14</sup> Հ. Արսէն Վ. Այտրնեան, նշ., աշխ., 54-55:

<sup>15</sup> Հ. Արսէն Վ. Այտրնեան, նշ., աշխ., էջ 51-52:

յեր չի դասեր գարտուղիներու շարքին, այլ՝ *անկանոն* խոնարհում կը համարէ<sup>16</sup>: Ան խօսելով *ուլ* լծորդութեան խոնարհման կարգի մասին կը նշէ, որ «Ուլ յանգուող բայերէն *թողուլ* եւ *զբօսնուլ* բայերը խոնարհման ամբողջական ձեւ ունին, սակայն կը տարբերին կատարեալի եւ հրամայականի մէջ»<sup>17</sup>: Իսկ *ուլ* լծորդութեան միւս բայերը՝ *երդնուլ*, *լնուլ*, *հեղուլ*, *յենուլ*, *ընթեռնուլ*, *գարթնուլ*, *զգենուլ*, *ոստնուլ*, *այտնուլ*, *ցասուլ*, *ցածնուլ*, *զենուլ* եւ *յեռուլ* կը գործածուին սահմանականի, ստորադասական ներկայիս եւ անկատարին, բացարձակ ապառնիին, անկատար ապառնիին եւ հրամայականի յոգնակի Ա. դէմքին մէջ միայն<sup>18</sup>, այսինքն՝ չունին բաղադրեալ ժամանակաձեւեր: Տօնելեան կը յիշատակէ, թէ վերոնշեալ բայերը գրական արեւմտահայերէնի զարգացման շրջափուլին փոխարինուած են այլ բայերով՝ հոմանիշներով, պահելով իմաստային յատկանիշները. տե՛ս աղիւսակը.

| <i>բայը</i> | <i>փոխարինուած</i> | <i>բայը</i> | <i>փոխարինուած</i>          |
|-------------|--------------------|-------------|-----------------------------|
| երդնուլ     | <i>երդում ընել</i> | գարթնուլ    | <i>արթննալ</i>              |
| լնուլ       | <i>լեցնել</i>      | զգենուլ     | <i>հագնիլ</i>               |
| հեղուլ      | <i>թափել</i>       | ոստնուլ     | <i>ցատկել</i>               |
| յենուլ      | <i>կոթնիլ</i>      | այտնուլ     | <i>ուռենայ/ուռիլ</i>        |
| ընթեռնուլ   | <i>կարդալ</i>      | ցասուլ      | <i>բարկանալ</i>             |
| ցածնուլ     | <i>խոնարհիլ</i>    | զենուլ      | <i>մորթել</i> <sup>19</sup> |
| յեռուլ      | <i>շարել</i>       |             |                             |

Ա. Եղիայեան ի տարբերութիւն Ջ. Ասատուրին կ'առաջարկէ «հեղուլի փոխարինուած տարբերակը՝ «հեղել», «յենուլ-յենիլ, զենուլ-զենել», «զգենուլ-ի փոխարէն՝ զգենալ»<sup>20</sup>: Ոստնուլ, այտնուլ, ցասնուլ, ցածնուլ եւ յեռուլ բայերուն տրուած տարբերակներ Եղի-

<sup>16</sup> Ջ. Տօնէլեան, *Գործնական քերականութիւն արդի աշխարհաբար, Բ. գիրք*, էջ 129:

<sup>17</sup> Ջ. Տօնէլեան, նշ. աշխ., էջ 153:

<sup>18</sup> Ջ. Տօնէլեան, նշ., աշխ., էջ 153-154:

<sup>19</sup> Ջ. Տօնէլեան, նշ., աշխ., էջ 153:

<sup>20</sup> Ա. Եղիայեան, նշ. աշխ., էջ 481-482

այեան ճիշտ կը համարէ, բայց այտնուլ բայի փոխարինուած իմաստը՝ ոչ թէ ուռնալ, այլ ուռիլ<sup>21</sup>:

Ձ.Ասատուր զարտուղի կը համարէ *նէլ, ուցանէլ, նիլ, չիլ, նալ* բայածանց ունեցող բայերը նաեւ<sup>22</sup>: Իսկ անկանոնները՝ *բերէլ, դընէլ, զարնէլ, ընէլ, ըսէլ, ուտէլ, տեսնէլ, նստիլ, պրծիլ, սկսիլ, տանիլ, փրթիլ, գալ, լալ, բանալ, դառնալ, երթալ, իյնալ, մնալ* բայերը, որոնցմէ շատեր արդի արեւմտահայերէնի մէջ կը դասադասուին՝ պարզ (*բերէլ, ըսէլ, նստիլ, պրծիլ, սկսիլ*), սոսկածանցաւոր (*տեսնէլ, բանալ, դառնալ, մնալ*) եւ զարտուղի եւ անկանոն (*դնէլ, զարնէլ, ընէլ, ուտէլ, գալ, լալ* եւ այլն), որոնց մէկ մասի անցեալ կատարեալ հիմքը արմատական է, իսկ ոմանցը ցոյական:

Յովհ. Գազանձեան զարտուղի կը համարէ *նէլ (զտնէլ, մտնէլ, իջնէլ, հեծնէլ), անէլ(ծանուցանէլ, հատուցանէլ, մատուցանէլ), ցընէլ(ցուցնէլ, լեցնէլ, անցընէլ, կորսնցնէլ), նիլ(հասնիլ, մեռնիլ, հագնիլ, անցնիլ, հատնիլ), նալ(բանալ, մնալ, ունենալ, գիտնալ), անալ(բարկանալ), ենալ(սօտենալ, մեձենալ, կարենալ), չիլ (փախչիլ, թռչիլ, դաչիլ, կառչիլ)* բայածանց ունեցող բայերը<sup>23</sup>:

Յետագայ քերականները լծորդութիւնները նոյնացուցած են աներեւոյթի վերջաւորութիւններուն հետ՝ ել, իլ, ալ եւ նաեւ ուլ-ը:

Եդ. Տասնապետեան ուլ լծորդով քանի մը բայեր կը նշէ՝ *թողուլ, զբօսնուլ, երդնուլ, հեղուլ*, որոնցմէ միայն «թողուլը ունի ամբողջական խոնարհում»<sup>24</sup>: Տասնապետեան անդրադարձած է եւս բայածանցներուն: Հեղինակը կը բացատրէ, որ բայի լծորդութենէն

<sup>21</sup> Ա. Եղիայեան, նշ. աշխ., էջ 482:

<sup>22</sup> Ձ. Տօնէլեան, նշ., աշխ., էջ 149:

<sup>23</sup> Յովհ. Գազանձեան, *Նոր քերականութիւն արդի հայերէն լեզուի*, միջին դասընթացք, Անթիլիաս, 1980, էջ 78-79: Յովհ. Գազանձեան, *Նոր քերականութիւն արդի հայերէն լեզուի*, միջին դասընթացք, Թ. տպագրութիւն, էջ 77-80:

<sup>24</sup> Ե. Տասնապետեան, *Քերականութիւն*, էջ 48:

առաջ երեւցած ածանցական տարրեր ունեցող բայեր, զոր կոչած է միջածանցներ, զարտուղի են, « ... այսինքն անոնց քանի մը ժամանակները կանոնաւոր բայերու տիպարային ձեւերէն կը շեղին»<sup>25</sup> եւ այդ շեղումը կ'առաջանայ յատկապէս անցեալ կատարեալի, հրամայականի, եւ յարակատար դերբայի մէջ: Օրինակ. *գտնել-* գտայ-գտած, գտի՛ր, *թոշիլ-թռայ-* թռած- թռի՛ր, *փախչիլ-* փախայ- փախած, փախի՛ր:

### **բ. Զարտուղի եւ անկանոն բայեր կամ զարտուղի եւ անկանոն խոնարհում**

Ինչպէս տեսանք, զարտուղի եւ անկանոն բայերու վերաբերեալ տարբեր բնոյթի պարզաբանումներ կան Արեւմտահայերէնի դասագիրքներուն մէջ: Այսպէս՝ Այտընեան, բայերու խոնարհման մասին արտայայտուելով, կը նշէ, որ անկանոն բայերը կանոնաւոր բայերէն կը տարբերին միայն անկանոն խոնարհման ընթացքով: Անկանոն ժամանակներ կը համարէ սահմանական կատարեալ (կատարեալ անցեալ), հրամայական, ընդունելութիւն եւ անցեալը (յարակատար եւ վաղակատար բաղադրեալ) ժամանակաձեւերը: Հեղինակի խօսքով՝ այդ բայերէն ոմանք կէս զարտուղի են, միւս մասը՝ անկանոն:

Անցեալ դարու վաթսունական թուականներէն ետք Սփիւռքի մէջ լոյս կը տեսնեն Զ. Մելքոնեանի<sup>26</sup> եւ Մ. Մկրտիչեանի<sup>27</sup>, Ս. Սիմոնեանի եւ Ս. Պալեանի համահեղինակութեամբ<sup>28</sup> եւ այլոց արեւ-

<sup>25</sup> Նոյն տեղում:

<sup>26</sup> **Զ. Մելքոնեան**, *Գործնական քերականութիւն արդի հայերէն լեզուի*, (միջին եւ բարձրագոյն դասընթացք, Գ. տպագրութիւն, Պէրուք, 1966:

<sup>27</sup> **Մ. Մկրտիչեան**, *Քերականութեան դասեր*, Բ. գիրք, (Նախակրթարանի Ե.-Զ. կարգերուն համար), Հալէպ, 1962:

<sup>28</sup> **Ս. Սիմոնեան**, **Ս. Պալեան**, *Նոր քերականութիւն*, Գ. տպ., Պէրուք, 1980, էջ 98:

մտահայերէնի քերականութեան՝ տարրական, միջին եւ ամառ դասարաններու նուիրուած դասագիրքերը: Նոյն թուականներուն Հայաստանէն Սփիւռքի դպրոցներուն կ'ուղարկուի Սփիւռքահայութեան հետ մշակութային կապի կոմիտէի նախաձեռնութեամբ «Հայերէն լեզուի դասագիրք»<sup>29</sup> վերտարութեամբ եռահեղինակներու աշխատութիւնը, որմէ կ'օգտուին համայնքներու շարք մը դըպրոցներ միայն: Ընթերցելով այդ աշխատութիւնները եւ համեմատական կատարելով՝ կը նկատենք, որ որոշակի փոփոխութիւններ կան, որոնք կարիք ունին պարզաբանումի:

Նախ արձանագրենք, որ աշխատութիւններուն մէջ կը յիշատակուին նոյն լծորդութիւնները՝ ընդհանրապէս թիւով երեքը, *եւ, իլ ալ*, նաեւ *ու*-ը: Մելքոնեան գիրքի տողատակին *ուլ* մասնիկով վերջացող կարգ մը բայեր կը նշէ՝ *զբօսնուլ, ընթեռնուլ, հեղուլ, թողուլ, զեղուլ*, «որոնք կը կազմեն չորրորդ լծորդութիւնը»<sup>30</sup>: «Հայերէն լեզուի դասագիրք»-ի հեղինակները եւս կ'անդրադառնան *ուլ* լծորդութեան. Մելքոնեանի հետ համեմատած կը նշեն՝ *զբօսնուլ, թողուլ* եւ *երդնուլ* բայերը միայն<sup>31</sup>, Սիմոնեան-Պալեան *ուլ* լծորդութեան *թողուլ* բայը կը յիշատակէ որպէս օրինակ<sup>32</sup>:

Մելքոնեանի կը խօսի զարտուղիներու մասին, որուն համաձայն այն բայերն են որոնց արմատները խոնարհումի ժամանակ անփոփոխ կը մնան, իսկ վերջաւորութիւնները իրենց տիպարին

<sup>29</sup> Ս. Աբրահամեան, Բ. Վերդեան, Վ. Քոսեան, *Հայերէն լեզուի դասագիրք*, Երկրորդ հրատարակութիւն, Ե., 1968:

<sup>30</sup> Զ. Մելքոնեան, *Գործնական քերականութիւն արդի հայերէն լեզուի*, (միջին եւ բարձրագոյն դասընթացք, Գ. տպագրութիւն, Պէյրութ, 1966, էջ 56; Զ. Մելքոնեան, Դ. տպագրութիւն, Պէյրութ, 1973, էջ 56:

<sup>31</sup> Ս. Աբրահամեան, Բ. Վերդեան, Վ. Քոսեան, նշ. աշխ., էջ 141:

<sup>32</sup> Ս. Սիմոնեան, Ս. Պալեան, *Նոր քերականութիւն*, էջ 98-99:



չեն հետեւիր որոշ ժամանակներու մէջ<sup>33</sup>. օրինակ՝ *երգել-երգ-եց-ի, խօսիլ- խօս-եց-այ. իսկ գտնել-գտ-այ, ծնիլ-ծն-այ, բանալ-բաց-ի, բարկանալ-բարկ-աց-այ* եւ այլն: Մելքոնեան զարտուղի բայ կը համարէ հետեւեալները.

|        |         |              |         |              |          |
|--------|---------|--------------|---------|--------------|----------|
| առնել  | լեցնել  | <i>բերել</i> | հագնիլ  | <i>փրթիլ</i> | բանալ    |
| խածնել | ցուցնել | <i>ըսել</i>  | հասնիլ  | <i>սկսիլ</i> | լալ      |
| գտնել  | դարձնել |              | մեռնիլ  | <i>ծնիլ</i>  | մնալ     |
| իջնել  | անցընել |              | բուսնիլ | <i>նստիլ</i> | կենալ    |
| մտնել  |         |              | փակչիլ  |              | բարկանալ |
| հեծնել |         |              | փախչիլ  |              | զիտնալ   |
| տեսնել |         |              | դպչիլ   |              | ունենալ  |
|        |         |              |         |              | հասունալ |
|        |         |              |         |              | հեռանալ  |

Աղիւսակը կ'ապացուցէ, որ ո՛չ միայն շարք մը սոսկաձանցաւոր բայեր զարտուղիներ են, այլ եւ *ել, իլ* կազմութեամբ այն պարզ բայերը, որոնց խոնարհման անցեալ կատարեալի հիմքը արմատական է՝ տարբեր վերջաւորութիւններով: Հետաքրքիր է արձանագրել, որ Մելքոնեան *սոսաձանցաւոր* բայ արտայայտութիւն չի գործածեր՝ ի տարբերութիւն հայրենի մտաւորականներուն, որոնք իրենց տեսութեան մէջ կը խօսին «բայաձանցներու եւ աձանցաւոր բայերու տեսակներու մասին»<sup>34</sup>: Ըստ հեղինակներու՝ բայաձանցները եւ անոնցով կազմուած բայերը կրաւորական, պատճառական, սոսկական, բազմապատկական: Խօսելով սոսկական բայաձանցներու մասին՝ հեղինակները կը նշեն, որ *չ, ն, ան, են* աձանցները, դրուելով բայարմատի եւ լծորդութեան միջեւ, բայի արատայայտած գործողութեան վրայ որեւէ նոր իմաստ չեն աւելցներ, մինչդեռ *տ, ոտ, կոտ, ուրտ* բայաձանցները «գործողութեան

<sup>33</sup> Ջ. Մելքոնեան, նշ. աշխ., էջ 64; Ջ. Մելքոնեան, Դ. տպագրութիւն, Պէյրութ, 1973, էջ 64:

<sup>34</sup> Ս. Արքաւաճեան, Բ. Վերդեան, Վ. Քոսեան, նշ. աշխ., էջ 196:

կու տան մէկէ անգամներ կատարելու կամ շատերու կողմէ կատարուելու իմաստ»<sup>35</sup>:

Արբահամեանի, Վերդեանի եւ Քոսեանի աշխատութեան մէջ չի բացատրուիր սոսկածանցաւոր բայի եւ անոր կազմութեան մասին, ընդհակառակը կը գործածէ «անկանոն բայ» արտայայտութիւնը, որուն համաձայն անկանոն բայը երկու խումբ ունի՝ արմատի լրիւ փոփոխութիւն.- *ըլլալ-եղայ, գալ-եկայ, ուտել-կերայ, և արմատի մասնակի փոփոխութիւն.- ղնել-ղրի, ընել- ըրի, տանիլ-տարի, լալ- լացի, իյնալ-ինկայ, տալ-տուի, եւ այլն*<sup>36</sup>:

*Դնել, զարնել, ընել, տանիլ, տալ, դառնալ, իյնալ, համբառնալ, ըլլալ* բայերը անկանոն են, որովհետեւ աներեւոյթի արմատները փոփոխութիւն կը կրեն եւ այլն:

#### գ. Տեղաշարժերը վերջին տասնամեակներուն

Հետևելով սփիւռքի մէջ վերջի տասնամեակներու հրապարակուած դասագիրքերուն՝ կը նկատենք որ գրական արեւմտահայերէնը ուշագրաւ տեղաշարժեր արձանագրած է:

Փորձենք ներկայացնել դասագիրքերու բայի քերականական կարգի *բայածանց-սոսկածանց* հասկացութիւնը, անոնցմէ բխած զարտուղի եւ անկանոն բայերու տարբերակումը:

1998թ. լոյս կը տեսնէ Կ. Առաքելեան «Արդի հայերէնի քերականութիւն» եռահատոր աշխատութիւնը, որուն Բ. գիրքին մէջ հեղինակը անդրադարձ կը կատարէ *ել, իլ, ալ* վերջաւորութիւններուն եւ անոնց միջեւ ինկած մասնիկներուն, որոնց կ'անուանէ *բայածանց*: Հեղինակը արեւմտահայերէնի երեք խոնարհիչ (ե, ի, ա) կը նշէ. ուրեմն՝ երեք խոնարհում: Այդ խոնարհիչները չ մասնիկէն

<sup>35</sup> Ս. Արբահամեան, Բ. Վերդեան, Վ. Քոսեան, նշ. աշխ., էջ 196-198:

<sup>36</sup> Ս. Արբահամեան, Բ. Վերդեան, Վ. Քոսեան, նշ. աշխ., էջ 207:

առաջ դրուելով, ըստ հեղինակին, կը կազմեն անորոշ դերբայի վերջաւորութիւնները՝ ել, իլ, ալ, գորս կը կոչենք լծորդութիւն: Առաքելեան եւս չի բացառեր *ու* խոնարհիչով կարգ մը բայերու առկայութիւնը՝ *թողուլ, երդնուլ*, որոնց թիւի սակաւութիւնը, ըստ հեղինակին, «իբրեւ առանձին խոնարհում նկատի չենք առներ»<sup>37</sup>:

Բայարմատի եւ լծորդութիւններու միջեւ ինկած՝ «*ն, ան, չ, են, ն, չ, ացն, եցն, ցն, ատ, ոտ, տ, ոտ, կոտ, ու (վ)*» մասնիկները Առաքելեան զանոնք կ'անուանէ *բայական ածանցներ*<sup>38</sup>: Առաքելեան հայերէնի վերոնշեալ բայածանցներ կանոնակարկելով կը բաժնէ չորս տեսակի՝ համաձայն իրենց արտայայտած իմաստներուն.

ա. սոսկածանցաւոր- *ն* (տեսնել), *չ* (փախչիլ), *ան* (ուսանիլ), *նչ* (մարտնչիլ), *են* (մօտենալ), *անչ* (մեղանչել)

բ. պատճառական- *-ցն* (խմցնել), *-եցն* (վազեցնել), *-ացն* (կարդացնել):

գ. բազմապատկական-բայածանցները՝ *ատ* (կտրատել), *ոտ* (խոցոտել), *կոտ* (կոխկոտել), *տ* (թոչտիլ), *ոտ* (պատոտել) եւ *կոտ* (թոչկոտիլ).

դ. կրաւորական- (*ու*)իլ բայածանց. հեղինակը կը նշէ նաեւ այն բառերը, որոնք կրաւորականի մէջ *ու/իլ*-ի փոխարէն կը ստանան *իլ* վերջաւորութիւնը<sup>39</sup>:

Ըստ Առաքելեանի՝ զարտուղի խոնարհում կ'ունենան այն բայերը, որոնց բայարմատը խոնարհման ատեն կը մնայ անփոփոխ, մինչդէռ վերջաւորութիւնները չեն հետեւիր «տիպար ձեւերուն»: Օրինակ՝ գտնել, իջնել, հեծնել, մտնել, տեսնել. (*գտայ, գը-*

<sup>37</sup> Տե՛ս **Կ. Առաքելեան**, *Արդի հայերէնի քերականութիւն*, Բ. գիրք, Պէյրութ, 1998, էջ 86: Նաեւ **Կ. Առաքելեան**, **Ա. Տըստըզճեան**, *Դիրին հայերէն*, Բ. գիրք, էջ 89:

<sup>38</sup> **Կ. Առաքելեան**, նշ. աշխ., էջ 92:

<sup>39</sup> **Կ. Առաքելեան**, նշ. աշխ., էջ 94-97:

*տար, գտաւ, գտանք, գտաք, գտան), առնել, խածնել, թքնել*.(առի, առիր, առաւ, առինք, առիք, առին, ելլել, (ելայ, ելար, ելաւ, ելանք, ելաք, ելան), բերել, ըսել.(բերի, բերիր, բերաւ, բերինք, բերիք, բերին), հարցնել, ցուցնել, լեցնել, անցընել, կորսնցնել, դարձնել. (*հարցուցի, հարցուցիր, հարցուց, հարցուցինք, հարցուցիք, հարցուցին*)<sup>40</sup>:

Իսկ անկանոն խոնարհման շարքին կը դասէ՝ *դնել, զարնել, ընել, ուտել, տանիլ, տալ, դառնալ, երթալ, գալ, իյնալ, ըլլալ*<sup>41</sup>:

Զարտուղի եւ անկանոն բայերը բացատրուած են Յ. Չոլաքեանի<sup>42</sup> «Անդաստան» Գ. գիրքին մէջ<sup>43</sup>՝ բայ խօսքի մասի, խոնարհիչի, լծորդութեան եւ բայածանցներուն վերաբերեալ: Ան Առաքելեանի վերեւ նշուած բացատրութիւններուն անդրադարձ կը կատարէ: Կ'ուսումնասիրէ զարտուղի խոնարհման ենթարկուող բայերը: Չոլաքեան *զարտուղի խոնարհում* բառակապակցութեան փոխարէն կ'ունենայ «զարտուղի բայեր» արտայայտութիւնը, որովհետեւ անոնք անցեալ կատարեալ եւ հրամայական ժամանակաձեւերու խոնարհման ընթացքին կանոնաւոր բայերու նման վերջաւորութիւն չեն ունենար<sup>44</sup>:

Բայի անցեալ կատարեալի եւ հրամայականի խոնարհման ընթացքին կանոնաւոր բայերու վերջաւորութիւնը չունեցող բայերը՝ Չոլաքեան անկանոններ կը համարէ. անկանոն անուան տակ կը բացատրէ՝ զարտուղին, պակասաւորը եւ տարահիմքը: Տարահիմք եզրոյթը գործածելով՝ Չոլաքեան կ'ըսէ. «Ասոնք կարգ մը դերբայներու, անցեալ կատարեալ ժամանակին եւ հրամայական եղանակի մէջ ունին տարբեր արմատ»: Տարահիմք կը համարէ՝ *դնել,*

<sup>40</sup> Կ. Առաքելեան, Ա. Տրստրզգճեան, նշ. աշխ., էջ 156-158:

<sup>41</sup> Կ. Առաքելեան, Ա. Տրստրզգճեան, նշ. աշխ., էջ 159-160:

<sup>42</sup> Յ. Չոլաքեան, նշ. աշխ., էջ 18-19, 53-54-55:

<sup>43</sup> Յ. Չոլաքեան, նշ. աշխ., էջ 7:

<sup>44</sup> Յ. Չոլաքեան, նշ. աշխ., էջ 18:

գարնել, ընել, ուտել, տանիլ, ըլլալ, գալ, դառնալ, երթալ, իյնալ, տալ քայերը: Նախորդ հեղինակներու կողմէ *անկանոն քայ* հասկացութիւն հեղինակը հանդէս կու գայ՝ *տարահիմք* եզրոյթով<sup>45</sup>:

Ստորեւ կը ներկայացնենք զարտուղի քայեր՝ հիմնուելով տարբեր հեղինակներու դասագիրքերու վրայ.

ըստ Զ. Տօնէլեանի՝ *նել, ուցանել, նիլ, չիլ, նալ (տեսնել, սպացուցանել, հագնիլ, խրտչիլ, մոռնալ, գիտնալ)*.

ըստ Զ. Չոլաքեանի՝ *փլչիլ-փլիլ, փակչիլ-փակիլ, կպչիլ- կըպիլ, թռչիլ-թռիլ, փախչիլ-փախիլ, հանգչիլ, խրտչիլ, մարտնչիլ, ուսանիլ*.

ըստ Կ. Առաքելեանի՝ *գտնել, իջնել, հեծնել, մտնել, տեսնել, սպաննել, բեկաննել, մեղանչել, առնել, խածնել, թքնել, ելլել, բերել, ըսել, նստիլ, սկսիլ, փրթիլ, ծնիլ, պրծիլ, հասնիլ, մեռնիլ, բուսնիլ, անցնիլ, թռչիլ, փլչիլ, դպչիլ, փախչիլ, փակչիլ, կպչիլ, բանալ, լալ, կենալ, ունենալ, գիտնալ, բարկանալ եւ այլն:*

Ա. Եղիայեան, վերեւ նշուած հեղինակներու պարզաբանումները ամփոփելով, կ'արձանագրէ՝ քայածանցները երկուքն են՝ իմաստակիր եւ իմաստագուրկ ածանցներ. 1. Իմաստակիր են՝ ա) «Ացն, եցն, ցն ...ածանցները, որոնք աւելնալով չէզոք եւ ներգործական սեռի սկզբնաձեւերուն վրայ, կը վերածենք զանոնք պատճառական սեռի քայերու»<sup>46</sup>. ղիտել կու տայ, որ այդ ածանցներու աւելումով կը փոխուին նաեւ այդ քայերէն ոմանց լծորդութիւնը: Օրինակ՝ *դողալ- դող+ացն+ել, խօսիլ-խօս+եցն+ել*, եւ այլն: Եղիայեան բացի վերոյիշեալներէն, *ու*-ն եւս կը համարէ «սեռածանց»՝ դրուելով ներգործական քայերու վրայ զանոնք կը վերածէ կրաւորականի. օրինակ՝ *յարգել-յարգուիլ, կանչել- կանչուիլ* եւ այլն:

<sup>45</sup> Զ. Չոլաքեան, նշ. աշխ., էջ 53:

<sup>46</sup> Ա. Եղիայեան, նշ. աշխ., 464:

բ) ոտ (խոցել-խոցոտել), ատ (կտրել-կտրատել), տ (փշրել-փշրրտել), կոտ (թռչիլ-թռչկոտիլ), ռոտ (ճանկել-ճանկոտել, կոխկոտել), չոտ (պոռալ- պոռչոտալ), կլոտ (հեծել- հեծկլոտալ)<sup>47</sup>: 2. Իմաստագործական «Սոսկածանցները» /ան, են, ն, չ/, որոնք զիրենք կրող բայերու վրայ աւելնալով՝ չեն իմաստափոխուիր: Սակայն հեղինակը ուսումնասիրողի ուշադրութեան կը յանձնէ այն, որ «ԱՆ-ԵՆ ածանցները բոլորովին սոսկածանցներ չեն, քանի որ զիրենք կրող կարգ մը բայերուն կու տան բան մը դառնալու, նոր վիճակ մը ընդունելու իմաստը»<sup>48</sup>: Վերոյիշեալ ածանցներով կազմուող բայերը կը բաժնէ երկու խումբի, որովհետեւ «բան մը դառնալու, նոր վիճակ մը ընդունելու իմաստը» առկայ չէ այդ ածանցները ընդունող շարք մը բայերու մէջ, ըստ հեղինակին. օրինակներ.

|                                  |  |
|----------------------------------|--|
| բան մը դառնալու իմաստ բովանդակող | բան մը դառնալու իմաստ չբովանդակող                  |
| Գեղեցկանալ-գեղեցիկ դառնալ        | Ստանալ, զլանալ, ընթանալ, սլանալ, ուրանալ, եւ այլն. |
| Հարստանալ-հարուստ դառնալ         |  |
| Սօսենալ- մօտիկ դառնալ            |  |
| Պարծենալ- պարծենկոտ դառնալ       |  |

Եղիայեան չի բաւարարուիր միայն վերոյիշեալ պարագաները նշելով, այլ կ'ուրուագծէ ածանցաւոր բայերու ժամանակի ընթացքին կրած կառուցային եւ խոնարհական տեղաշարժերը՝ գրաբարէն մինչեւ մեր օրերը<sup>49</sup>:

Անկանոն բայեր՝ ըստ կարգ մը դասագիրքերուն

| Զայել        | Գազանձեան | Չոլաքեան | Առաքելեան |
|--------------|-----------|----------|-----------|
| <i>բերել</i> |           |          |           |
| <i>ըսել</i>  |           |          |           |
| դնել         |           | դնել     | դնել      |
| զարնել       |           | զարնել   | զարնել    |
| ընել         |           | ընել     | ընել      |
| ուտել        |           | ուտել    | ուտել     |

<sup>47</sup> Ա. Եղիայեան, նշ. աշխ., էջ 464:

<sup>48</sup> Ա. Եղիայեան, նշ. աշխ., էջ 465:

<sup>49</sup> Ա. Եղիայեան, նշ. աշխ., էջ 465-486:

|               |  |                  |                  |
|---------------|--|------------------|------------------|
| <i>տեսնել</i> |  |                  |                  |
| տանիլ         |  | տանիլ            | տանիլ            |
| <i>դառնայ</i> |  | <i>դառնայ</i>    | <i>դառնայ</i>    |
|               |  | <i>համբարնայ</i> | <i>համբարնայ</i> |
| երթալ         |  | երթալ            | երթալ            |
| իյնալ         |  | իյնալ            | իյնալ            |
| <i>մնալ</i>   |  |                  | ըլլալ            |
| <i>նստիլ</i>  |  |                  |                  |
| <i>պրծիլ</i>  |  |                  |                  |
| <i>սկսիլ</i>  |  |                  |                  |
| <i>փրթիլ</i>  |  |                  |                  |
| գալ           |  | գալ              | գալ              |
| տալ           |  | տալ              | տալ              |
| լալ           |  | լալ              |                  |
| <i>բանայ</i>  |  |                  | բանայ            |

### Եզրակացութիւններ

Մփիւռքի տարբեր համայնքներու շարք մը բանասերներու կողմէ գրական արեւմտահայերէնի ուսուցման նպաստող դասագիրքերու նպատակը եղած է արեւմտահայերէնի պահպանումն ու խօսքի զարգացումը: Սակայն անոնք իրարմէ տարբերած են մեթոտաբանութեամբ, կառուցուածքով եւ եզրաբառերով:

Արեւմտահայերէնի քերականութեան դասագիրքերու մէջ բայի քերականական կարգի առանձայատկութիւններն ու օրինաչափութիւնները ուսումնասիրելով՝ կ'ամփոփենք.

-իմաստակիր եւ իմաստագորկ բայերու պարզաբանումները՝ ըստ բայահիմքի եւ լծորդութեան միջեւ առկայ ածանցներուն.

-զարտուղի, կէս զարտուղի բայեր կամ զարտուղի խոնարհում արտայայտութիւնը, որոնք հեղինակներու կողմէ կը բացատրուէին ձեւակազմական առաձնայատկութիւններով.

-անկանոն բայ կամ խոնարհում անուան տակ, յաճախ նկատի առնուած էին՝ զարտուղին, անկանոնը եւ պակասաւոր բայերն ու անոնց խոնարհաձեւերը.

-զարտուղի եւ անկանոն համարուող բոլոր բայերը իրենց ձեւակագմական առանձնայատկութիւններով խոնարհելու ընթացքին կը տարբերէին բայի խոնարհման ընդհանուր օրինաչափութենէն, սակայն անոնցմէ ոչ բոլորը զարտուղի էին, անոնցմէ ոմանք պարզ բայեր էին, ոմանք ալ՝ անկանոններ:

Արդ, այս խառնաշփոթութենէ զերծ մնալու համար, մեր յորդորն է իմաստակիր եւ իմաստագուրկ բայերու համակարգումով բայը եւ անոր խոնարհումը բացատրուի հետեւեալ ձեւով.

1.բայածանց կամ միջածանց բառի փոխարէն շրջանառութեան մէջ դրուի սոսկածանց եզրաբառը:

2.գործածութենէ դուրս մղել զարտուղի, կէս զարտուղի արտայայտչաձեւերը. փոխարէնը՝ արձանագրել՝

ա. բայ- պարզ խոնարհում, երբ անցեալ կատարեալի հիմքը ցոյական է.

բ. բայ- անկանոն խոնարհում, երբ անցեալ կատարեալ ժամանակաձեւի խոնարհման մէջ անփոփոխ է բայարմատը եւ արմատական հիմքի վրայ կատարուած է խոնարհումը.

գ. բայ-անկանոն խոնարհում, երբ անցեալ կատարեալ ժամանակաձեւի խոնարհման մէջ փոփոխուած է արմատը եւ տարահիմքով կատարուած է խոնարհումը:

### Օգտագործուած գրականութիւն

Աբրահամեան Ս., Վերդեան Բ., Քոսեան Վ., Հայերէն լեզուի դասագիրք, երկրորդ հրատարակութիւն, Երեւան, 1968:

Ավետիսյան Յու., Տեղաշարժեր արդի գրական հայերէնում, Եր., Չանգակ-97, 2011:



Այտընեան Հ. Արսէն Վ., Քերականութիւն աշխարհաբար կամ արդի հայերէն լեզուի, Բ. տպագրութիւն, Մխիթարեան տպարան, Վիեննա, 1883:

Առաքելեան Կ., Արդի հայերէնի քերականութիւն, Ա. գիրք, Բ. գիրք, Գ. գիրք, Պէյրութ, 1998:

Առաքելեան Կ., Ֆրստըզճեան Ա., Դիւրին Հայերէն 2, Բ. տիպ, բարեփոխուած, Պէյրութ, 2008:

Գազանճեան Յովհ., Նոր քերականութիւն արդի հայերէն լեզուի, միջին դասընթացք, Կ. Պոլիս, 1919:

Գազանճեան Յովհ., Նոր քերականութիւն արդի հայերէն լեզուի, Ա. եւ Բ. Մաս, Կ. Պոլիս, 1924:

Գազանճեան Յովհ., Նոր քերականութիւն արդի հայերէն լեզուի, տարրական դասընթացք, Է. տպագրութիւն, Իսթանպուլ, 1947:

Գազանճեան Յովհ., Նոր քերականութիւն արդի հայերէն լեզուի, միջին դասընթացք, Անթիլիաս, 1980:

Գազանճեան Յովհ., Նոր քերականութիւն արդի հայերէն լեզուի, միջին դասընթացք, Թ. տպագրութիւն, Իսթանպուլ, 1995:

Եղիայեան Ա., Արեւմտահայերէնի ուղղագրական, ուղղախօսական, ոճաբանական ուղեցոյց, Պէյրութ-Լիբանան, 2022. (<https://nayiri.s3.amazonaws.com/A+Manual+for+Western+Armenian++Armenag+Yeghiayan++2022.pdf>)

Մելքոնեան Զ., Գործնական քերականութիւն արդի հայերէնի, Հալէպ, 1950:

Մելքոնեան Զ., Գործնական քերականութիւն արդի հայերէն լեզուի, տարրական դասընթացք, Գ. տպագրութիւն, վերամշակուած, Պէյրութ, 1966:

Մելքոնեան Ջ., Գործնական քերականութիւն արդի հայերէն լեզուի, նախապատրաստական դասընթացք, Գ. տպագրութիւն, Պէյրութ, 1968:

Մելքոնեան Ջ., Գործնական քերականութիւն արդի հայերէն լեզուի (միջին եւ բարձրագոյն դասընթացք), Գ. տպագրութիւն, Պէյրութ, 1966:

Մելքոնեան Ջ., Գործնական քերականութիւն արդի հայերէն լեզուի, (միջին եւ բարձրագոյն դասընթացք), Դ. տպագրութիւն, Պէյրութ, 1973:

Սկրտիչեան Ս., Քերականութեան դասեր, Բ. գիրք, (Նախակրթարանի Ե.-Ջ. կարգերուն համար), Հալէպ, 1962:

Սկրտիչեան Ս., Քերականութեան դասեր, Բ. գիրք, Հալէպ, 1982:

Չոլաքեան Յ., Անդաստան, Գ. գիրք, Հայերէնի եւ հայ գրականութեան համադրեալ ձեռնարկ, Հալէպ, 2010:

Սիմոնեան Ս., Պալեան Ս., Նոր քերականութիւն, Գ. տպ., Պէյրութ, 1980:

Տասնապետեան Եդ., Քերականութիւն, տպ. Կիլիկիոյ կաթողիկոսութեան հրատարակութիւն, Անթիլիաս, 1990:

Տօնէլեան Ջ., Գործնական քերականութիւն արդի աշխարհաբարի, Բ. գիրք, Կ. Պոլիս, 1899:

**Fishenkjian Ani- Shifts in the Grammatical System of Literary Western Armenian Based on Existing Textbooks of Western Armenian (verb).**- In literary Western Armenian, there have been shifts in the verb conjugation system. They are reflected primarily in the verb ending ուլ, verbal affixes, forms of irregular conjugation, the formation of irregular and incomplete verbs, etc.

This article examines how the formation of two forms of irregular verb conjugation (with and without changing the verb base) is presented in textbooks, the various manifestations of these verbs, discusses the problems

associated with changes in Western Armenian textbooks, shows how the forms of irregular verb conjugation are determined in various Western Armenian grammar textbooks.

A study of Western Armenian textbooks published in recent decades indicates the use of appropriate forms, and examples from the written literary language indicate the presence of shifts in this area.

The research work carried out has shown that over the past half-century in modern Western Armenian, verbal affixes or concepts of forms of irregular conjugation of verbs have changed. After the 1990s, Western Armenian textbooks show a systematic presentation of these issues with certain terminological differences.

**Keywords:** Grammatical system, Irregular, Western Armenian, Types of Irregular verbs, Verbal affix.

Fishenkchyan Ani, Phd in History, Institute of Language named after. H. Acharyan NAS RA, Researcher.

**Фишенкчян Ани- Сдвиги в грамматической системе литературного западноармянского на основе существующих учебников западноармянского (глагол).**- В литературном западноармянском произошли сдвиги в системе спряжения глаголов. Они отражены прежде всего в глагольном окончании *ու*, глагольных аффиксах, формах неправильного спряжения, образовании неправильных и неполных глаголов и т.д.

В данной статье исследуется, как представлено образование двух форм неправильного спряжения глаголов (с изменением глагольного основания и без его изменения) в учебниках, различные проявления этих глаголов, рассматриваются проблемы, связанные с изменениями в учебниках западноармянского, показано, как определяются формы неправильного спряжения глаголов в различных учебниках грамматики западноармянского.

Изучение учебников западноармянского, изданных в последние десятилетия, указание на использование соответствующих форм, примеры из письменного литературного языка свидетельствуют о наличии сдвигов в этой области.

Проведенная исследовательская работа показала, что за прошедшие полвека в современном западноармянском глагольные аффиксы или понятия форм неправильного спряжения глаголов подверглись изменениям. После 1990-х годов в учебниках западноармянского заметно системное изложение данных вопросов с определенными терминологическими различиями.

**Ключевые слова:** грамматическая система, сдвиги, западноармянский, виды неправильных глаголов, глагольный аффикс.

Фишенкчян Ани, кандидат исторических наук, Института языка им. Р. Ачаряна НАН РА, научный сотрудник.

## Հ Ա Ղ Ո Ր Դ ՈՒ Մ

### ՓՈՐՁԱՌԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐ ՀԱՅԵՐԵՆ ԽՈՍՔՈՒՄ ԴԱԴԱՐՆԵՐԻ ԴՐՄԵՎՈՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

#### Գրիգորյան Գայանե

բանասիրական գիտությունների թեկնածու,  
ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ,  
գլխասշխատող. gayane.grig.grigoryan@gmail.com

**Բանալի բառեր.** խոսքի դադար, դադարի տեսակները, դադարի տևողությունը, հանրային ելույթի դադար:

#### Նախաբան

Դադարը համարվում է հնչերանգի լիարժեք բաղադրիչ, որը կատարում է բաժանման և միավորման գործառույթներ՝ փոխանցելով իմաստային և շարահյուսական հարաբերություններ: Խոսքը հաղորդակցման դինամիկ և բարդ ձև է, որը բառերի և դադարների միասնական շարք է: Բառերը հաղորդակցման հիմքն են, իսկ դադարները՝ կցող շղթաներ, որոնք մասնակցում են խոսքը կառուցելուն: Շեշտի, տևողության, տոնայնության, հնչերանգի հետ դադարը նույնքան կարևոր գործոն է բանավոր խոսքում:

Հաղորդակցման արդյունավետությունը ապահովվելու համար կարևոր է ոչ միայն արտասանվող բառերի առողջանությունը, այլև ճիշտ տեղում դադարներ տալը: Դա կարող է փոխանցել չսպառ խոսքեր՝ հնարավորություն տալով ունկնդիրներին ավելի արդյունավետ ընկալելու, մեկնաբանելու ասված խոսքը: Դադարը փո-

խանցում է նաև արտահայտչականության, զգացմունքայնության երանգներ:

Դադարների՝ մեր իրականացրած քննությունը կատարվել է այն հնչող խոսքում, որը ոչ թե կարդացվել է տեքստից, որի դեպքում դադարները առավել կարգավորված են, և որին օգնում են կետադրական նշանները, այլ կառուցվել է հանպատրաստից. դրանք են ինքնաբեր (սպոնտան) բանավոր ելույթները, հարցազրույցները, դասախոսությունները, երկխոսությունները, որոնցում եղած դադարները ուսումնասիրվել են հետազոտության ընթացքում:

Քննվող թեման արդիական է, քանի որ դադարներ օգտագործելը միշտ էլ կարևորվել է և մնում է ժամանակակից կյանքի տարբեր հարաբերություններում՝ ուսումնական, մասնագիտական, միջանձնային, հանրային և այլ տեսակի հաղորդակցման ժամանակ:

Հետազոտության մեջ ներկայացվել են բանավոր խոսքում դադարների տեսակները, գործառույթները, տևողությունը, հոգեբանական նշանակությունը, կարևորությունը և այլն: Փորձառական եղանակով ուսումնասիրվել են հնչող խոսքի դադարները, բերվել են օրինակներ և դրանց հնչապատկերները:

Ուսումնասիրության նպատակն է ցույց տալ բանավոր խոսքում դադարների կարևորությունը և կատարել դրանց դասակարգումը՝ ըստ տևողության, ինչպես նաև ցույց տալ դադարների տեսակների հարաբերակցությունը խոսքի կառուցվածքային բաղադրիչների հետ: Մասնավորապես հաշվարկվել են դադարների տևողությունները նախադասությունների, բարդ նախադասությունների բաղադրիչ մասերի և նախադասության մեջ անդամների կամ իմաստային խմբերի միջև դադարները: Հատուկ ուշադրու-

թյուն է դարձվել հանրային հնչող խոսքում, մասնավորապես՝ ելույթներում, դադարների դրսևորմանը, քանի որ արդի սոցիալ-քաղաքական դաշտում դրանք մեծ տարածում են գտել:

Դադարների հետազոտության կիրառականությունն այն է, որ կարող է լինել ուղեցույց՝ հաղորդակցման ընթացքում (ուսումնական պրոցես, հանրային ելույթներ և այլն) խոսքի որակը բարձրացնելու, լսարանին ներգրավելու և հիմնական գաղափարներն արդյունավետորեն ընդգծելու համար: Լեզուների թվայնացման և նոր տեխնոլոգիաների կիրառման պարագայում խոսքն ուսումնասիրելիս բառերի հետ միասին կարևորվում են նաև խոսքի դադարները, որոնք ունեն թվայնացված պատկերներ:

Ուսումնասիրության մեջ օգտագործվել են բառերի լաբորատոր փորձարկման, չափման, վիճակագրության, դիտարկման և համեմատության մեթոդները:

### **Խոսքի դադարի տեսակները**

Արդի լեզվաբանական գրականության մեջ ընդունված է դադարները դասակարգել 2 մեծ խմբերի մեջ՝ սովորական (ինքնըստինքյան) կամ անհրաժեշտ և միտումնավոր կամ մտածված: Սույն հետազոտության մեջ դադարներն ուսումնասիրելիս հետևել ենք այդ դասակարգմանը:

*Սուաջին խմբի* դադարներն անվանել ենք շնչառական, քերականական (կամ լռելյայն վիճակի) դադարներ: Այս խմբի մեջ մըտնող դադարները անխուսափելի են, պարտադիր և չեն կարող չլինել: Մարդը խոսելիս կարիք ունի շնչելու և խոսքում դադարներ տալու: Նախադասությունը կամ պարբերությունը ավարտելիս կրկին անհրաժեշտ է դադար վերցնել, որպեսզի դրանք «չկպչեն» իրար: Է. Ադայանը «Լեզվաբանության հիմունքներ» աշխատությո-

յան մեջ գրում է. «Դադարները ծառայում են ... նախադասության անդամներն իրարից սահմանազատելու, անջատելու, ինչպես և նրանց իմաստային այս կամ այն երանգը տալու, միմյանց հետ ունեցած կապակցությունը (շարահյուսական կապակցությունն) արտահայտելու, այլ և շարահյուսական միավորների ու ողջ նախադասության կառուցվածքը բնութագրելու համար»<sup>1</sup>:

Հ. Աճառյանը տալիս է դադարի հետևյալ սահմանումը. «*Դադար* ասելով հասկանում ենք այն կարճատև ընդհատումը (կամ հանգիստը), որ դնում է մարդ իր խոսակցության մեջ, անմիջապես հետո շարունակելու համար այն»<sup>2</sup>: Նա նշում է նաև դադար տալու չորս պատճառներ՝ բնախոսական, հոգեբանական, տրամաբանական և քերականական<sup>3</sup>:

Խոսքի դադարներին անդրադարձ է կատարվում «ժամանակակից հայոց լեզու» (Հնչյունաբանություն, բառագիտություն)<sup>4</sup> աշխատության մեջ, որում հեղինակները արտասանվածի հատույթավորման մեջ կարևորում են հատկապես դադարի դերը, որի «անհրաժեշտությունը բխում է հնչաշղթան ըստ իմաստների հատույթավորելու պահանջից»<sup>5</sup>:

Արտասահմանյան այլ հեղինակներ, որոնք ուսումնասիրել են դադարները, դրանք դասակարգում են երկու մեծ խմբերում՝ ֆիզիկական ու լեզվաբանական և հոգեբանական ու հոգելեզվաբանական<sup>6</sup>:

<sup>1</sup> Է. Աղայան, *Լեզվաբանության հիմունքներ*, Ե., 1987, էջ 230:

<sup>2</sup> Հ. Աճառյան, *Լիակատար քերականություն հայոց լեզվի*, հ. 6, Ե., 1971, էջ 353:

<sup>3</sup> Հ. Աճառյան, նշվ. աշխ., էջ 353-355:

<sup>4</sup> Ա. Սուքիասյան, Ք. Սուքիասյան, Ս. Ֆելեքյան, *Ժամանակակից հայոց լեզու*, Ե., 2017:

<sup>5</sup> Ա. Սուքիասյան, Ք. Սուքիասյան, Ս. Ֆելեքյան, նշվ. աշխ., էջ 27-28:

<sup>6</sup> Zellner, Brigitte, Pauses and the temporal structure of speech, *Fundamentals of speech synthesis and speech recognition*, 1994, p. 42.



Խոսքի դադարներն ուսումնասիրել են տարբեր ոլորտի գիտնականներ ու մասնագետներ՝ հոգեբաններ, բժիշկներ, հանրալեզվաբաններ, հնչյունաբաններ, հանրալեզվահնչյունաբաններ (սոցիոֆոնետիստներ)<sup>7</sup> և այլք, որոնց հետաքրքրել է դադարը իրենց ոլորտի տեսանկյունից:

Եվ այսպես, առաջին՝ շնչառական, քերականական խմբի մեջ մտնում են դադարի հետևյալ տեսակները.

1. Դադար, որը գրավոր խոսքում արտահայտվում է տրոհության նշաններով, այսինքն՝ համընկնում է տրոհության նշանների հետ: Այս տեսակը առավելապես գործում է գրավոր խոսքն ընթերցելիս. նախադասության վերջում դրվում է վերջակետ, իսկ հնչող խոսքում արվում է առավել երկար դադար: Այս կապակցությամբ դադարների մասին խոսելիս Է. Ադայանը նշում է, որ «Նախադասության անդամների միջև գոյություն ունեցող դադարները ավարտվում են այսպես կոչված ավարտական դադարներով, որը ցույց է տալիս նախադասության ավարտը, որով և ամբողջ նախադասության բոլոր կարգի հնչերանգներն ու հնչերանգային տարրերը միավորվում են և մեկ միասնության մեջ առնվում: Այդ հնչերանգային ամբողջությունը սովորաբար կոչում են հատուկ տերմինով՝ հնչերանգային ավարտվածություն»<sup>8</sup>:

Բանավոր խոսքում եղած դադարների մի ենթատեսակ է նախադասության ներսում հանդիպող դադարը, որը գրավոր խոսքում արտահայտվում է ստորակետով կամ բութով: Այդ դադարի տևողությունը պակաս է նախադասության ավարտի դադարից: Սակայն նախադասության մեջ կարող են հանդես գալ իմաստային խմբեր կամ հնչաշարայիններ, որոնց միջև ստորակետ չի դրվում,

<sup>7</sup> Kendall Tyler, *Speech Rate, Pause and Sociolinguistic Variation*, Palgrave Macmillan London, 2013, p. 3.

<sup>8</sup> Kendall Tyler, նշվ. աշխ., էջ 231:

բայց դադարը կա: Այս պարագայում կարևոր է իմաստային խմբերի միջև շարույթային ճիշտ դադարների (նաև շեշտադրման) առկայությունը:

2. Պարբերության դադար, որն ավելին է, քան նախադասությունների միջև եղած դադարը:

3. Անհատական դադար, որը անձին բնորոշ հատկանիշ է, նրա տևողությունը կարող է տատանվել անհատից անհատ:

*Երկրորդ խմբի* դադարներն անվանվել է նպատակային, միտումնավոր կամ մտածված: Այս խմբի մեջ մտնում են դադարի հետևյալ տեսակները.

1. Բանալի բառը շեշտելու նպատակով բառից առաջ և/կամ հետո առկա դադար: Ուժգնության, տոնի կամ հնչերանգի փոփոխություններին զուգահեռ՝ այս դադարները ուշադրությունը կենտրոնացնում են կոնկրետ գաղափարի՝ բանալի բառի վրա՝ դրան տալով ավելի մեծ կշիռ և նշանակություն: Նախորդ դադարն ազդանշան է տալիս՝ «լսի՛ր», իսկ հաջորդ դադարն ասում է՝ «հիշի՛ր»: Դադարների այս կանխամտածված օգտագործումը մեծացնում է տեղեկության ազդեցությունը և լսողների հիշողության մեջ ավելի հաստատուն է մնում:

2. Հռետորական հարցի դադար: Հռետորական հարց տալուց հետո առկա դադարը խրախուսում է ունկնդրին՝ մասնակցելու և մտածելու հարցի պատասխանի շուրջ: Հռետորական հարցից հետո դադար տալը թույլ է տալիս այսպես ասած «մարսելու» հարցի հիմնական էությունը:

3. Մակաբույծ բառերի դադար, երբ դադարների փոխարեն օգտագործվում են մակաբույծ բառեր (ը, ըմ, ուրեմն, էսպես, նու, հա՛) հարցական տոնայնությամբ, մարդիկ երբեմն հագում են): Այս մակաբույծները դատարկ տեղ չեն թողնում և բառերը կապում են

միմյանց: Սրանք հենքային բառեր են, որոնք խոսողները արտաբերում են ժամանակ շահելու և միտքը կարգավորելու համար: Հաշվարկել ենք դրանց տևողությունները.

Ը, ըմ – 0,2-1 վրկ.

ուրեմն – 0,4-0,5 վրկ.


էսպէս – 0,5 վրկ.

նու – 0,2-0,4 վրկ.

հազ – 0,8 վրկ.


Նկար 1-ում նշված է դադարի, ը մակաբույժ հնչյունի և ուրեմն-մըն բառի հատվածը, որի տևողությունը 2,08 վայրկյան է: Այդ հատվածում դադարի տևողությունը 0,7 վայրկյան է, ը-ի տևողությունը՝ 1,01 վայրկյան, ուրեմն բառինը՝ 0,37:

Նկար 1



Ստորև բերվող հնչապատկերում (Նկար 2) առանձնացված է հազի դադարը, որի տևողությունը 0,8 վայրկյան է:


Նկար 2



4. Լրացուցիչ դադար: Դադարի այս տեսակը շնորհանդեսների, հրապարակային կամ գիտական ելույթների ժամանակ արվող դադարն է, երբ ցուցադրվում են օժանդակ կամ լրացուցիչ միջոցներ (սահիկաշարեր, պատկերներ, աղյուսակներ, գծապատկերներ, գրաֆիկա և այլն):

5. Դրամատիկ դադար: Հռետորական, թատերական, դրամատիկական, ասմունքի դադարն օգտագործվում է ամեն անգամ, երբ բանախոսը ցանկանում է դրամա կամ անսպասելիություն ստեղծել: Դադարի այս տեսակը տարածված է բանաստեղծության, ասմունքի, թատերական ներկայացման խոսքում:

6. Անցումային դադար: Երկարատև ելույթների ժամանակ բանախոսներին անհրաժեշտ է ավելի երկար դադար՝ շունչ առնելու կամ ջուր խմելու համար: Բանախոսները դա անում են այն ժամանակ, երբ անցում է կատարվում նոր նյութի: Այս ընթացքում խոսողը հասցնում է մտածել, իսկ լսարանը՝ հանգստանալ:



### Դադարի գործառույթները

1. Դադարներն ունեն կառուցվածքային նշանակություն և նպաստում են խոսքի կառուցվածքը կազմակերպելուն: Նրանք օգնում են կազմել արտահայտություններ, նախադասություններ և

պարբերություններ, այսինքն՝ մասնակցում են խոսքի կառուցմանը՝ ընդմիջումների շնորհիվ նպաստելով լսողների կողմից խոսքն ըմբռնելուն և տեղեկությունն արդյունավետ մշակելուն: Դադարները հնարավորություն են տալիս «կետադրելու» ասված բառերը՝ հուշելով, թե երբ է ավարտվում մեկ արտահայտությունը, նախադասությունը կամ պարբերությունը և սկսվում հաջորդը:

2. Խոսակցական ռիթմ: Խոսքը, ինչպես երաժշտությունը, ունի բնական ռիթմ: Դադարները և բառերը հաջորդաբար ստեղծում են խոսքի ներդաշնակ հոսք: Ինչպես երաժիշտն օգտագործում է լռությունը և մեղեդին, այնպես էլ խոսողը կարող է օգտագործել դադարներ՝ բնական խոսակցական ռիթմը պահպանելու համար՝ խոսքի այս մակընթացությունն ու հոսքը դարձնելով փոխկապակցված:

3. Դադարները փոխանցում են զգացմունքային նրբերանգներ: Կանխամտածված դադարները կարող են ուժեղացնել հաղորդման ազդեցությունը՝ թույլ տալով ունկնդրին ընկալելու ներկայացված տեղեկությունը: Լռությունը խելամիտ օգտագործելը շեշտադրում է խոսքի կարևոր մասը: Դադարների տեղաբաշխումն ու տևողությունը տարբեր են՝ կախված նրանից, թե ի՞նչ զգացմունքներ են հաղորդվում՝ չեզոք տեղեկություն, տխրություն, զայրույթ, հիացմունք և այլն:

4. Դադարները վերահսկում են խոսքի ընդհանուր տեմպը: Լսարանը ճանաչողական սահմանափակումներ ունի և չի կարող որոշակի արագությամբ ընկալել տեղեկությունը: Դադարներն օգնում են դրան:

5. Դադարները ապահովում են «առողջություն»: Երկար դադարներն առողջարար են և թույլ են տալիս խորը շնչել, թուքը կուլ տալ կամ նույնիսկ ջուր խմել: Այն ոչ միայն օգնում է ուղեղին՝

ավելի շատ թթվածին տրամադրելով, այլև բարելավում է ձայնը, հանգստացնում բերանը և կոկորդը:

6. Դադարներն օգնում են ներգրավելու լսարանին: Առանց դադարի խոսելը հանգեցնում է նրան, որ լսարանը օգտագործում է իր ողջ էներգիան՝ տեղեկությունն ամբողջությամբ ընկալելու համար: Դադարներն օգտագործելը ժամանակ է տալիս ունկնդրին՝ անդրադառնալու ասվածին և իրական ժամանակում կապ հաստատելու սեփական փորձի կամ գիտելիքի հետ: Նախադասության միջնամասում հանկարծակի դադարը կարող է «հավաքել» լսարանին, երբ կան շշուկներ և փոքր աղմուկ: Այս հնարքը միանգամից ուշադրություն է գրավում դադարը ճիշտ օգտագործելու շնորհիվ:

### **Աշխատանքի քայլերն ու հերթականությունը**

Փորձառական ուսումնասիրությունը կատարելիս օգտագործվել են հետևյալ ծրագրերը և կատարվել հետևյալ քայլերը.

- Տեսանյութերի ընտրություն: Հավաքվել, մշակվել և ուսումնասիրության է ենթարկվել ավելի քան 30 տեսանյութ:
- Այդ տեսանյութերը [savefrom.net](http://savefrom.net) կայքի միջոցով ներբեռնվել են համակարգիչ և պահպանվել:
- [veed.io/edit/](http://veed.io/edit/) կայքի միջոցով առանձնացվել են ուսումնասիրման նպատակային հատվածները և պահպանվել:
- Voice Memos ծրագրի միջոցով կատարվել են ձայնագրություններ: Ձայնագրությունները դասակարգվել են:
- Կատարվել է ձայնային փոխակերպում: MP4 ֆորմատի ձայնագրությունները առցանց փոխակերպվել են WAV տեսակի:
- Praat: Ձայնագրությունները մուտքագրվել են Պռաստ ծրագիր, արվել է հնչապատկերների վերլուծություն՝ հնչյունների, հնչաբառերի, նախադասությունների և դադարների սահմանագատում:

• Հաշվարկվել է հնչամիավորների և դադարների տևողությունը:

• Excel ծրագրի մեջ մուտքագրվել են տևողության տվյալները, միջինացվել, կազմվել են աղյուսակներ, կատարվել են հաշվարկներ:

• Արվել է համեմատություն, որի շնորհիվ հայտնաբերվել են օրինաչափություններ:

Ձայնագրությունների վերլուծությունները կատարվել են ՀՀ ԳԱԱ լեզվի ինստիտուտի կիրառական լեզվաբանության բաժնի փորձառական հնչյունաբանության լաբորատորիայում:

### **Դադարի տևողությունը**

Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ բանավոր խոսքում հանդիպում են կարճ (0,15 վայրկյան), միջին (0,50 վայրկյան) և երկար (1,50+ վայրկյան) դադարներ: Բացի դրանից՝ խոսքն ընթերցելիս (գրավոր տեքստից) առաջանում են միայն կարճ և միջին դադարներ, մինչդեռ ինքնաբուխ խոսքի պարագայում (առանց կարդալու խոսելիս) նկատվում է միջին և երկար դադարների ավելի հաճախակի օգտագործում:


Ուստի եթե անհրաժեշտ է բանավոր խոսելիս նաև կարդալ խոսքի մի մասը, ապա մտադրված պետք է երկարացնել դադարները՝ հակադրություն չառաջացնելու բանավոր-սպոնտան և բանավոր կարդացվող հատվածների միջև՝ խոսքի ընդհանուր տեմպը ապահովելու նպատակով:

### **Փորձառական վերլուծություն**

Հնչապատկերներում դադարը սովորաբար ունի մանր խոզանակի տեսք (Նկար 3): Եթե ապահովվի լիակատար լռություն, ապա

դա կունենա գծի տեսք: Բայց քանի որ հնարավոր չէ ապահովել բացարձակ և լիակատար լռություն, ուստի դադարներն ունենում են այդ տեսքը:

Նկար 3



Ըստ մեր ուսումնասիրությունների, դիտարկումների և վերլուծության՝ դադարն արվում է.

1. Նախադասությունների միջև, որը համընկնում է գրավոր խոսքի վերջակետի հետ: Դադարի միջին տևողությունը այս պարագայում 1.3 վայրկյան է<sup>9</sup>:


2. Բարդ նախադասությունների բաղադրիչ նախադասությունների միջև, որի տևողությունը պակաս է, քան առանձին նախադասությունների միջև եղած դադարը: Այն տատանվում է 0,2–ից մինչև 1 վայրկյան: Նկատվել է հետաքրքրական երևույթ: Ըստ վերը ասվածի տրամաբանության՝ բարդ նախադասությունը կազմող բաղադրիչ նախադասությունների միջև պիտի լիներ դադար, այսինքն՝ այնտեղ, որտեղ գրավոր խոսքում ստորակետ է: Սակայն այն դեպքերում, երբ նախադասությունները կապվում են շաղկա-

<sup>9</sup> Սակայն շատ դեպքերում, մանավանդ լուրերի հաղորդման ժամանակ, երբ հաղորդավարները արագ կարդում են տեքստը, նույնիսկ վերջակետի դադար չեն տալիս, որն անցանկալի և, ի վերջո, սխալ է:



պով, դադարները երբեմն արվում են շաղկապից հետո: Այդպիսի դեպքեր արձանագրել ենք *որ, բայց, եթե* շաղկապների դեպքում: Շաղկապից հետո արվում է դադար, որն անհրաժեշտ է հետագա մտքերը հավաքել-կարգավորելու, ինչպես նաև շունչ առնելու համար: Դա կարելի է տեսնել Նկար 4-ում:

Նկար 4



«...Տեսնել, թե -0,64 վրկ- Կովկասում Ռուսաստանի քաղաքականությունն ինչ է լինելու» նախադասության հնչապատկերում դադարի տևողությունը 0,64 վայրկյան է:

3. Նախադասության մեջ անդամների կամ իմաստային խմբերի միջև դադար, որի տևողությունը, ըստ մեր հաշվարկների, տատանվում է 0,1-ից 0,4 վայրկյանի միջակայքում:

Այսպիսով՝ դիտարկումների ընթացքում դադարի տևողության տվյալները միջինացնելուց հետո ստացվում է հետևյալ արդյունքը.


- Նախադասությունների միջև դադար՝ 1,3 վայրկյան:
- Բարդ նախադասությունների բաղադրիչ նախադասությունների միջև դադար՝ 0,2-1 վայրկյան:
- Նախադասության անդամների կամ իմաստային խմբերի միջև դադար՝ 0,1- 0,4 վայրկյան:

## Դադարը հանրային ելույթներում

Նշենք, որ առանձնապես մեծ է դադարի դերը հանրային ելույթների դեպքում, ուստի հատուկ ուշադրություն ենք դարձրել խոսքի այս տեսակին: Հանրային խոսքում, ըստ մեր վիճակագրության, դադարների տևողությունը ամենաերկարն է: Դիտարկված նյութերում այն հասել է մինչև 2,8 վայրկյանի:

Ստորև ներկայացվող պատկերում (Նկար 5) պարզ երևում են դադարի հատվածները:

Նկար 5



Նկարը 5-ը հետևյալ տեքստի հնչապատկերն է<sup>10</sup>:

*«Ամենամեծ ճշմարտությունը մենք մոռանում ենք -2-: Արցախի կորուստը: -2,7-: Արցախը կորած է: -2,7- Մին հույսեր փայփայել, թե Արցախը հետ ենք բերելու, սա մեծ ինքնախաբեություն է: -2,2- Սա մեծագույն խաբեություն է, որ կարող ենք ասել: -1,4- Արցախը անդարձ կորած է: -0,8-»:*

Խոսքը բաղկացած է 6 նախադասություններից, որոնք միմյանցից առանձնանում են երկար դադարներով: Խոսքի ընդհանուր


<sup>10</sup> Հրապարակային խոսքը վերցված է յուրօրյան տեսանյութերից: Ձայնագրությունն առկա է ԳԱԱ լեզվի ինստիտուտի կիրառական լեզվաբանության բաժնի փորձառական հնչյունաբանության լաբորատորիայում:

տևողությունը 28,5 վայրկյան է: Ամենաերկար դադարի տևողությունը 2,7 վայրկյան է: Դադարների գումարը կազմում է 11,8 վայրկյան, որը տեքստի ընդհանուր տևողության (28,5) 40 տոկոսն է:

Հանրային խոսքում դադարների տևողությունը ուսումնասիրելու նպատակով վերցնենք մեկ այլ օրինակ հրապարակային հրնչող խոսքից<sup>11</sup> և կատարենք դադարների տևողության վերլուծություններ:

Մույն ձայնապատկերը (Նկար 6) հետևյալ հանրային ելույթի հնչապատկերն է.

Նկար 6



«Միրելիներս, այսօր -0,9- հայ մեծ բանաստեղծի՝ Եղիշե Չարենցի ծննդյան օրն է: -1,1- Ծափերով, այո, ողջունենք -1,3- էդ ազգասպահայան հսկային, -2,2- ով իր ապրեցնող հայերենով, -0,16- իր ապրած կյանքով, -0,37- ինքնահրկիզված կերպար էր իր ազգի համար -0,68- և հիմա քիչ առաջ ես հիշեցրեցի -0,37- լրագրողներին -0,09- ակրոստիքոսը, որտեղ նա ասում էր. -0,38- Ով՛ հայ ժողովուրդ, քո միակ փրկությունը -0,37- քո հավաքական ուժի մեջ է: -1,46- Եվ մենք -0,6- Միասին շարժումը -0,2- ամեն կերպ ուզում է այդ պատգամը կյանքի կոչել, -0,58- և մենք հասնելու ենք -0,2- այդ միասնականությանը, -0,38- այն միասնականությունը, -0,2- որով և երկիրն ենք փրկելու, -0,2- և՛ մեր ազգին»:

<sup>11</sup> Տեքստը, որը վերցված է յուրօրյան տեսանյութերից, հրապարակային խոսք է՝ հանրահավաքի ժամանակ Երևանի Ազատության հրապարակում: Չայնագրությունը առկա է ԳԱԱ լեզվի ինստիտուտի կիրառական լեզվաբանության բաժնի փորձառական հնչյունաբանության լաբորատորիայում:

Պոասատ ծրագրում zoom-ın ֆունկցիայով մաս-մաս առանձնացվել են դադարները և հաշվարկվել դրանց տևողությունները: Խոսքի դադարների տևողության տվյալները զետեղված են ստորև բերվող աղյուսակում.

|                  | Դադարները՝ վայրկյաններով |
|------------------|--------------------------|
| 1                | 0,9                      |
| 2                | 1,1                      |
| 3                | 1,3                      |
| 4                | 2,2                      |
| 5                | 0,16                     |
| 6                | 0,37                     |
| 7                | 0,68                     |
| 8                | 0,37                     |
| 9                | 0,09                     |
| 10               | 0,38                     |
| 11               | 0,37                     |
| 12               | 0,46                     |
| 13               | 0,6                      |
| 14               | 0,2                      |
| 15               | 0,58                     |
| 16               | 0,2                      |
| 17               | 0,38                     |
| 18               | 0,2                      |
| 19               | 0,2                      |
| <b>Ընդհանուր</b> | <b>10,74</b>             |

Խոսքը կազմված է 79 հնչաբառից, և ամբողջ տևողությունը կազմում է 51,2 վայրկյան: Կա 19 դադար, և դադարների ընդհանուր գումարը 10,74վրկ է: Տոկոսային ձևաչափով ներկայացնելիս ստացվում է, որ 51,2 վայրկյան տևողություն ունեցող տեքստի դադարները (10,74) կազմում են դրա 20,9 տոկոսը, այսինքն՝ ընդհանուր խոսքի տևողության մոտավորապես մեկ երրորդը:

### Ամփոփում

Դադարների փորձառական հետազոտության ընթացքում դադարի տևողության տվյալները փաստում են, որ դրանք ընդհանուր առմամբ դրվում են նախադասությունների միջև (1,3 վայրկ-

յան), բարդ նախադասությունների բաղադրիչ նախադասությունների միջև (0,2 -1 վայրկյան) և նախադասության անդամների կամ իմաստային խմբերի միջև (0,1- 0,4 վայրկյան): Առանձնապես մեծ է դադարի դերը հանրային խոսքում և հրապարակային ելույթներում: Դադարների տևողությունը այս պարագայում ամենատեղիվ է (2,8 վայրկյան):

### Օգտագործված գրականություն

Աղայան Է., Լեզվաբանության հիմունքներ, Երևանի համալսարանի հրատ., Ե., 1987:

Աճառյան Հ., Լիակատար քերականություն հայոց լեզվի, հ. 6, ՀՍՍՀ ԳԱԱ հրատ., Ե., 1971:

Սուքիասյան Ա., Սուքիասյան Ք., Ֆելեքյան Մ., Ժամանակակից հայոց լեզու, Ե., ԵՊՀ հրատ., 2017:

Kendall Tyler, Speech Rate, Pause and Sociolinguistic Variation, Palgrave Macmillan London, 2013.

Zellner, Brigitte, Pauses and the temporal structure of speech, Fundamentals of speech synthesis and speech recognition, 1994, pp. 41-62.

**Grigoryan Gayane - Experimental Data on the Expression of Pauses in Armenian Speech.** - A pause is a fully integrated part of intonation. The importance of pauses in spoken speech is great. The article examines the types, functions, duration, psychological significance, and importance of pauses in oral speech. For the first time, pauses in spoken speech were studied using an experimental method, examples and their sound images were given. In particular, the durations of pauses were calculated by types, pauses were classified according to different criteria. Special attention was paid to the pauses in public manifestation speech, since they are very popular in the nowadays socio-political sphere.

---

**Keywords:** Pause in speech, Types of pauses, Duration of pauses, the Pause in public speech.

Grigoryan Gayane, PhD in Philology, Institute of Language named after H. Acharyan of NAS RA, Senior Researcher.

**Григорян Гаяне - Экспериментальные данные по проявлению пауз в армянской речи.** – Пауза- это полноценная часть интонации. Значение пауз в устной речи велико. В статье рассматриваются виды, функции, длительность, психологическое значение, важность пауз в устной речи. Впервые экспериментальным методом изучены паузы звучащей речи, приведены примеры и их звуковые изображения. В частности, длительности пауз рассчитывались по типам, паузы классифицировались по разным критериям. Особое внимание было уделено проявлению пауз в публичной речи, поскольку они очень популярны в современной общественно-политической сфере.

**Ключевые слова:** пауза в речи, виды пауз, длительность паузы, пауза в публичной речи.

Григорян Гаяне, кандидат филологических наук, Институт языка имени Р. Ачаряна НАН РА, старший научный сотрудник.

## Գ Ի Տ Ա Կ Ա Ն Կ Յ Ա Ն Ք

### «ՋԱՀՈՒԿՅԱՆԱԿԱՆ ԸՆԹԵՐՑՈՒՄՆԵՐ» ԳԻՏԱԿԱՆ ՆՍՏԱՇՐՁԱՆ

2024 ապրիլի 26-ին ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտում տեղի ունեցավ «Ջահուկյանական ընթերցումներ» խորագրով հերթական գիտական նստաշրջանը:

Բացման խոսքով հանդես եկավ ինստիտուտի տնօրեն Վիկտոր Կատվայանը՝ կարևորելով «Ջահուկյանական ընթերցումներ» գիտաժողովի դերը հայերենագիտության զարգացման գործում:

Գիտաժողովի մասնակիցներին ողջունեց և արդյունավետ աշխատանքային օր մաղթեց ՀՀ ԳԱԱ ՀՀԳ բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար, ակադեմիկոս Յու.Սուվարյանը: Նա բարձր գնահատեց «Ջահուկյանական ընթերցումներ» խորագրով գիտական միջոցառումների կազմակերպման շարունակականությունը և առաջարկեց նախապատրաստական աշխատանքներ ծավալել համանուն հանդեսը միջազգային գիտաչափական շտեմարաններում ընդգրկելու համար:

Գիտական նստաշրջանին բազմաբնույթ հետաքրքրական զեկուցումներով հանդես եկան ԳԱԱ լեզվի, պատմության, հնագիտության և ազգագրության ինստիտուտների, Երևանի պետական, Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանների, «Տաթև» գիտակրթական համալիրի գիտաշխատողներ, հետազոտողներ: Զեկուցումները վերաբերում էին հայոց լեզվի պատմության, ստուգաբանության, բարբառագիտության, արդի հայերենի հնչունաբանության և քերականագիտության

տարբեր հիմնախնդիրների, ինչպես նաև համակարգչային լեզվաբանությանը, էլեկտրոնային շտեմարաններին, մայրենիի անադատության պահպանմանն առնչվող հարցերի:

Խոսքի դադարը որպես հնչերանգի բաղադրիչ ներկայացրեց լեզվի ինստիտուտի գիտաշխատակից Գայանե Գրիգորյանը: Լեզվի ինստիտուտի գիտաշխատակից Լուսինե Ղամոյանի զեկուցումը վերաբերում էր թանկարժեք քարերին և դրանց մոզական ու առողջարար նշանակություններին: Գրական արևմտահայերենի բայական համակարգի տեղաշարժերն ըստ արևմտահայերենի առկա դասագրքերի առանձնացրեց ԳԱԱ պատմության ինստիտուտի գիտաշխատակից Անի Ֆիշենկճյանը:

Արվեցին նաև հայերենի բառապաշարին վերաբերող ստուգաբանական դիտարկումներ: «Թաքուն, քողարկված» հասկացության բայանվանական և գոյականական դրսևորումները վաղնջահայերենից եկող մի արմատի հայ-իրանական ստուգաբանական քննության լույսի ներքո դիտարկեց ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի գիտաշխատակից Տորք Դալալյանը, «Տաթև» գիտակրթական համալիրի լեզվաբանության բաժանմունքի ղեկավար Հովհաննես Զաքարյանի զեկուցումը վերաբերում էր «բեկոր» իմաստով հայերեն մի քանի բառերի ստուգաբանությանը: Զեկուցումներ հնչեցին հայոց լեզվի պատմությանն առնչվող տարբեր հարցերի վերաբերյալ ևս: Սումատիկ բաղադրիչներով վերլուծական կառույցների տիպաբանությունը հայերենում ներկայացրեց Խ.Աբովյանի անվան ՀՊՄՀ լեզվաբանական հետազոտությունների լաբորատորիայի ղեկավար Լալիկ Խաչատրյանը, իսկ Արցախի տեղանվանական համակարգի պատմության շրջանաբաժանման իր փորձը՝ լեզվի ինստիտուտի գիտաշխատակից Լուսինե Մարգարյանը: Լեզվի ինստիտուտի գիտաշխատակից



Հայկանուշ Հովհաննիսյանի զեկուցման թեման էր «Անանիա Շիրակացին և նրա «Տիեզերագիտություն և տոմար» աշխատության համաքարքառը»:

Բարբառագիտությանը վերաբերող զեկուցումները առնչվում էին Շիրակի մարզի խոսվածքներին բնորոշ մի քանի բառերի գործածությանը (Վիկտոր Կատվայան), նույն մարզում գործածվող՝ Բասենի խոսվածքի քերականական առանձնահատկություններին (ԼԻ գիտաշխատակից Հասմիկ Խաչատրյան), Նախիջևանի տարածքում Մարաղայի բարբառի խոսվածքներին (ԼԻ գիտաշխատակից Արտակ Վարդանյան):

Լեզվի ինստիտուտի գիտաշխատակից Ֆրիդա Հակոբյանն անդրադարձավ համակարգչային լեզվաբանության արդի խնդիրներին, իսկ արևելահայերենի ազգային կորպուսը (ԱՐԵՎԱԿ) կորպուսային լեզվաբանության տեսանկյունից դիտարկեց ԵՊՀ դասախոս Սարգիս Ավետյանը:

Լեզվի ինստիտուտի գիտաշխատակից Նազիկ Հովհաննիսյանն անդրադարձավ մայրենիի անադարտությունը պահպանելու խնդիրներին:

Նստաշրջանի արդյունքները քննարկելիս ելույթ ունեցավ նաև Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ Հայոց լեզվի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ Վազգեն Համբարձումյան: Նա արժևորեց գիտական նստաշրջանը և որոշ զեկուցումների վերաբերյալ շահեկան դիտարկումներ արեց:

Նստաշրջանի աշխատանքներն ամփոփեց ինստիտուտի տնօրեն Վիկտոր Կատվայանը: Նա նշեց, որ հնչած զեկուցումները աչքի էին ընկնում թեմատիկ բազմազանությամբ, հազեցած էին փաստական հարուստ նյութով, գիտական վերլուծությունները մեծ մասամբ համոզիչ էին: Նա մեկ անգամ ևս կարևորեց համանուն

---

պարբերականի հրապարակումը և անհրաժեշտ մակարդակի ապահովումը միջազգային գիտաչափական շտեմարաններում ընդգրկվելու համար:

ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի  
արդի հայերենի բաժնի  
ավագ գիտաշխատող Վարսիկ Ներսիսյան

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

## ՀՈԴՎԱԾՆԵՐ

|  |    |
|--|----|
| <b>Դալայյան Տորք</b> - «Թաքուն, քողարկված» հասկացության բայանվանական և գոյականական դրսևորումները վաղնջահայերենից եկող մի արմատի հայ-իրանական ստուգաբանական քննության լույսի ներքո..... | 5  |
| <b>Զաքարյան Հովհաննես</b> - «Բեկոր» իմաստով հայերեն մի քանի բառերի ստուգաբանություն.....   | 19 |
| <b>Խաչատրյան Լալիկ, Միրումյան Մարգուշ</b> - Սոմատիկ բաղադրիչներով վերլուծական կառույցների տիպաբանությունը հայերենում .....   | 40 |
| <b>Խաչատրյան Հասմիկ</b> - Բասենի խոսվածքը Շիրակի մարզում (քերականական առանձնահատկություններ).....  | 61 |
| <b>Կատվայան Վիկտոր</b> - Շիրակի մարզի խոսվածքներին բնորոշ մի քանի բառերի մասին.....  | 76 |
| <b>Վարդանյան Արտակ</b> - Մարաղայի բարբառի խոսվածքներ Նախիջևանի տարածքում.....  | 89 |

## ՔՆՆԱՐԿՈՒՄ

|  |     |
|--|-----|
| <b>Ֆիշենկձեան Անի</b> - Գրական արեւմտահայերենի քերականական համակարգի տեղաշարժերը՝ ըստ արեւմտահայերենի առկա դասագիրքերու (բայ)..... | 101 |
|--|-----|

## ՀԱՂՈՐԴՈՒՄ

|   |     |
|---|-----|
| <b>Գրիգորյան Գայանե</b> – Փորձառական տվյալներ հայերեն խոսքում դադարների դրսևորման վերաբերյալ..... | 124 |
|---|-----|

ԳԻՏԱԿԱՆ ԿՅԱՆՔ

|  |     |
|--|-----|
| Ներսիսյան Վարսիկ- «Ջահուկյանական ընթերցումներ»<br>գիտական նստաշրջան..... | 142 |
|--|-----|

CONTENTS  
ARTICLES

|  |    |
|--|----|
| <b>Dalalyan Tork</b> - The Meanings of "Hidden, Disguised" in the Light of the Armenian-Iranian Etymological Examination of a Root Coming from Ancient Armenian..... | 5  |
| <b>Zakaryan Hovhannes</b> - Etymology of Several Armenian Words Meaning “Splinter, Chip, Piese, Part”.....   | 19 |
| <b>Khachatryan Lalik, Мирумян Маргуш</b> - Typology of Analytical Structures with Somatic Components in Armenian.....  | 40 |
| <b>Khachatryan Hasmik</b> - Bassen Speech in the Marz of Shirak (grammatical features).....  | 61 |
| <b>Katvalyan Viktor</b> - About some words characteristic to the speech of the Shirak region.....  | 76 |
| .....  |    |
| <b>Vardanyan Artak</b> - Subdialects of the Artsakh-Syunik dialect in the Territory of Nakhijevan.....   | 89 |

DISCUSSION

|  |     |
|--|-----|
| <b>Fishenkjian Ani</b> - Shifts in the Grammatical System of Literary Western Armenian Based on Existing Textbooks of Western Armenian (verb)..... | 101 |
|--|-----|

REPORT

|   |     |
|---|-----|
| <b>Grigoryan Gayane</b> - Experimental Data on the Expression of Pauses in Armenian Speech..... | 124 |
|---|-----|

SCIENTIFIC LIFE

|   |     |
|---|-----|
| <b>Nersisyan Varsik</b> - Scientific session "Jahukyan Readings"..... | 142 |
|---|-----|

## СОДЕРЖАНИЕ СТАТЬИ

|  |    |
|--|----|
| <b>Далалян Торк</b> - Проявления понятия "скрытый, замаскированный" в свете армяно-иранского этимологического анализа одного корня, восходящего к древнеармянскому ..... | 5  |
| <b>Закарян Оганес</b> - Этимология некоторых армянских слов, обозначающих "часть, обломок, осколок" .....  | 19 |
| <b>Хачатрян Лалик, Мирумян Маргуш</b> - Типология аналитических структур с соматическими компонентами в армянском языке.....   | 40 |
| <b>Хачатрян Асмик</b> - Басенский говор в Ширакской области (грамматические особенности).....  | 61 |
| <b>Катвалян Виктор</b> - О нескольких словах, характерных для диалектной речи Ширакской области .....  | 76 |
| <b>Варданян Артак</b> – Говоры Марагинского диалекта на территории Нахиджевана.....  | 89 |

## ОБСУЖДЕНИЕ

|   |     |
|---|-----|
| <b>Ани Фишенкчян</b> - Сдвиги в грамматической системе литературного западноармянского на основе существующих учебников западноармянского (глагол)..... | 101 |
|---|-----|

## СООБЩЕНИЕ

|  |     |
|--|-----|
| <b>Григорян Гаяне</b> - Экспериментальные данные по проявлению пауз в армянской речи. .... | 124 |
|--|-----|

## НАУЧНАЯ ЖИЗНЬ

|  |     |
|--|-----|
| <b>Нерсисян Варсик</b> - Научная сессия "Джаукяновские чтения".... | 142 |
|--|-----|

ՀՀ ԳԱԱ Հ. ԱՃԱՌՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԼԵԶՎԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ  
ՋԱՀՈՒԿՅԱՆԱԿԱՆ  
ԸՆԹԵՐՑՈՒՄՆԵՐ

1 (21)

Ձևավորումը և էջադրումը՝  
Մ. Խառատյանի

Կազմը՝ Ս. Արևշատյանի

Խմբագրության հասցեն՝ 0015, Երևան 15, Գրիգոր Լուսավորչի 15, հեռ. (010)565337  
Address: Grigor Lusavorich str. 15, 0015, Yerevan, Armenia, tel. (010)565337  
Адрес редакции: 0015, Ереван-15, ул. Григора Лусаворича 15, tel. (010)565337

Հանդեսի պաշտոնական կայքը՝ <http://language.sci.am>  
Official site of the journal: <http://language.sci.am>  
Официальный сайт журнала: <http://language.sci.am>

Հանդեսի էլեկտրոնային հասցեն՝ [instlingv@sci.am](mailto:instlingv@sci.am), [inslang@sci.am](mailto:inslang@sci.am)  
E-mail of the journal: [instlingv@sci.am](mailto:instlingv@sci.am), [inslang@sci.am](mailto:inslang@sci.am)  
Электронная почта журнал: [instlingv@sci.am](mailto:instlingv@sci.am), [inslang@sci.am](mailto:inslang@sci.am)

ՀՀ ԳԱԱ ԼԻ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ